

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
Organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 7  
JUILLET  
1932  
PARIS (France)

«ՀՆՑ ՏԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԴՆՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՊՐԳԱՆ

## ԱԶԳԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԹԻՒՐՔԻԱՆ

Թիւրքիայի մուտքը Ազգերի Դաշնակցութեան մէջ, ապօր, կարելի է ասել, կատարած փաստ է: Մի փաստ, որ ո՛չ անսպասելի էր եւ ոչ զարմանալի: Զարմանալին, գուցէ, այն ձեւն է, որով Թիւրքիան առնուած է ժրնեւի հաստատութեան մէջ. նոյն իսկ յետպատերազմեան ամէն տեսակ խայտառակութիւնների վարժւած բարբերի համար էլ եղիւի է Ներպալի ցուցահանած բարոյական թշուառութիւնը Անգլոբայի հանդէպ:

Նկատեցէ՛ք, որ Թիւրքիան ինքը չէ Ազգերի Դաշնակցութեան մէջ մտնել ձգտողը. Ազգերի Դաշնակցութիւնն է խնդրում Թիւրքերին՝ բարեհաճել իր անդամը դառնալու: 28 պետութիւններ՝ Յունաստանի գլխաւորութեամբ՝ նախաձեռնութիւն են ստանձնել «հրաւիրելու» Թիւրքիային: Ոտքի տակ են դրել սահմանւած կանոններն ու ժամանակի ընթացքում ներազդեցւած կարգերը: Ընդունելութեան առանձին ճեպընթաց եղանակ է ստեղծուած, որով անտեսուած է կանոնադրի պահանջը՝ թեկնածուի յատկութիւնները նախօրոք յանձնատնօրովի ջննութեան բովից անցկացնելու եւ ձեւափոխուած են ընդունելութեան արարողութիւնները: Թիւրքիայի հասցէին ուղղուած են քծնանքի ու սիրաչառութեան դարչելի խօսքեր: « Կաղաքակիրթ մարդկութիւնը » այս անգամ էլ հոգեկան անորակելի աղարտութիւն երեւան բերեց առանց գէթ անոյշ խօսքերով երեւոյթները վարագուրել ջանալու: Ի՞նչ հարկ. Սիւրիոյմ եւ քաղաքականութեան մէջ. մերկութիւնը այլեւս ամօթ չէ: Իայց ինչի՞ են ձգտում ժրնեւի Սիւրիոյմ-Սեբը, ի՞նչ յոյսեր են կապում Թիւրքերի Ազգերի Դաշնակցութեան մէջ մտնելու հետ: Ի հարկէ, անմտութիւն է հաւատալ նրանց բարոյական կամ դաղափարախօսական պատճառարանութիւններին. Թիւրքերը ժրնեւ են բերուած աւելի քան գործնական հաշիւներով: Դրբամբ, ինչպէս յայտնի է, արիւն չի ծծում եւ հոտ չունի: Առեւտուր կարելի է անել եւ վալրենիների հետ: Եթէ նման սկզբունքներն անվիճելի են « քաղաքակիրթ մարդկութեան » համար, ինչո՞ւ Թիւրքերին էլ չմտցնել « պարկեշտ հասարակութեան » համակեցութեան մէջ եւ առեւտրական ու դրամական օրինաւոր փոխարարութիւններ սկսել նրանց հետ: Թիւրքերը, այո՛, դեռ բարբարոս են, բայց «աւելի լաւ է դազանին պահել վանդակի մէջ, քան ազատ թողնել դուրսը»:

Եւ Թիւրքերին «վանդակի մէջ» առնելով՝ ամէն պետութիւն իր ակնկալութիւններն ունի: Եւ որքա՞ն բաղմազան, խաչաձեւող, բարդ ու խճճւած ակնկալութիւններ ու հաշիւներ. մէկը իր «հանրային պարտքն» է ձգտում փրկել կորուստից կամ Մերձաւոր Արեւելքում ունեցած նախկին հմայքը երազում վերականգնել. միւսը «արեւի տակ հող» է որոնում իր անող եւ հողագործի զաւակների համար. երրորդը շանթարդելներ է փնտրում հանդարտեցնելու համար իր հպատակ իսլամ աշխարհի խռովալուսի մտքերը. չորրորդը Փոքր-Ասիայում կրած պարտութեան վէրքերն է տեսնում դարմանելու օրիշներ առեւտրի նոր շահատանների յետեւից են ընկած եւ տնտեսական աննախընթաց տազնապի այս օրերին պարտաւստ են ամէն գիծումի, միայն թէ իրենց գործազուրկ բանւորներին աշխատանք հայթայթեն եւ վաճառականներին՝ շուկաներ: Մի խօսքով, բոլորը հաշիւ ու շահ են հետապնդում Թիւրքիայում եւ դրա համար կանգ չեն առնում ոչ մի նաստացման առջեւ: Անկարեւոր տեղ չի բռնում, բնականաբար, եւ Թիւրքերին բոլշեւիկեան ազդեցութեան շրջանից դուրս բերելու ձգտումը.

ենթադրուած է, որ Ազգերի Դաշնակցութեան մէջ առնելուց յետոյ թիւրքերը հետզհետէ կը հեռանան Մոսկուայից ու կը մտանան Եւրոպայի դրամատիրական ուժերին:

Մերկ հաշիւն է, անշուշտ, եւ թիւրքերային դէպի Ազգերի Դաշնակցութիւն մղողը: Եւ նրանց համար էլ, անկասկած, առաջին տեղը տնտեսական նկատումներն են բռնում: Թիւրքերայի ներքին կեանքին մօտից հետեւողները գիտին թէ ինչ քայքայում ու քսօս է տիրում այնտեղ եւ որքա՞ն ծանր է երկրի երեւմտական վիճակը: Արտաքին փոխառութեան բոլոր ճիւղերը ի դերեւ ելան. Ամերիկան բացէ ի բաց մերթօնք դրած առլ, Մոսկւան ու Հոնոմը միայն փշրանքներ կարողացան բաց թողնել, իսկ դրամատէր Եւրոպան փոխառութեան մասին որեւէ խօսք աւելուց առաջ պահանջում է մտնել Ազգերի Դաշնակցութեան «պատուաւոր հասարակութեան» մէջ: Ազգերի Դաշնակցութեան անդամ դառնալուց յետոյ միայն թիւրքերայի կարող է յուսալ փոխառութիւն կնքելու:

Փոխառութեան խնդրից գառ, Թիւրքերայի համար շարիք աւելի կենսական է եւ իր երկրի արտադրութիւնների համար սպառման վայրեր գտնելը: Այսօր արտաքին շուկաները գրեթէ անմատչելի են երկրագործական Թիւրքերայի համար. թիւրք, առանց այն էլ, ցածր աստիճանի վրա գտնուող գիւղատնտեսութիւնը հիմքից կործանուած է շուկայի եւ դրամազլխի բացակայութեան պատճառով: Այս ցաւի դարձման էլ Անգլորան մտադուած է գտնել Ազգերի Դաշնակցութեան միջոցով:

Բնականաբար, հաշիւ մէջ են եւ քաղաքական նկատումները, որոնց կարգին, գլխաւոր տեղը բռնում է Լոզանի դաշնագրի դրած կաշկարուած Նեղոզները վրա: Ապագայ ապահովութեան համար հրամայական անհրաժեշտութիւն է այդ կապանքների վերացումը:

Այս տեսակէտից, հակառակ արտաքին շոգչողուն ձեւերի, որպէս յաղթական չէ, որ Թիւրքերայի դիմում է ժընեւ: Ընդհակառակը, իրերի առարկայական ընթացքը իր կամքին հակառակ մղում է նրան դէպի արեւմուտք, դէպի դրամատիրական աշխարհը: Ներքին հակասութիւններից ու փլուզումի վտանգից ազատելու համար է փոխում մինչեւ այժմ հետեւեա՞ծ քաղաքականութիւնը եւ անցնում երդւեալ թշնամիների բանակը: Թիւրքերը չեն կարող անգիտանալ, հարկաւ, Եւրոպայի մբտաշնութիւնը իրենց մասին եւ եթէ այնուամենայնիւ յօժարում են մտնել «վանդակը», նշանակում է, իրօք, որ ծանր դրութեան մէջ են:

Բոլորովին առարկայական լինելու համար աւելք նսեւ, որ անվիճելիօրէն Թիւրքերը լաւագոյն վայրկեանն են ընտրել Ազգերի Դաշնակցութեան մէջ մտնելու համար: Այն ընդհանուր դժգոհութիւնն ու անհանգստութիւնը, որով բռնեա՞ծ է մարդկութիւնը, միջպետական

կատաղի մրցութիւններն ու պայքարները եւ անվերջ յուսախաբութիւնները խորապէս անդրադարձել են եւ ժընեւի հաստատութեան վրա: Տար տարի առաջ Ազգերի Դաշնակցութիւնը կամակատար գործիք էր յաղթող պետութեանց ձեռքին. այսօր, մասնաւորապէս, Գերմանիայի մուտքից յետոյ, տրամադձօրէն տարբեր փոխյարաբերութիւններ են ստեղծուում: Մինչեւ այժմ Անգլիային ու Ֆրանսային հաւատարմօրէն հետեւող փոքր պետութիւններից շատերը հիասթափեա՞ծ, աւելի եւ աւելի յարում են ընդդիմադիր կողմին: Նախկին միատարութեան հետքն իսկ չկայ. Ազգերի Դաշնակցութիւնը խորապիւժ է հիւանդագին տագնապի մէջ՝ անընդունակ լուծելու ներքին հակասութիւնները: Այդ անկարողութիւնը աչքի ընկաւ, մանաւանդ, գինեթափութեան եւ չին-ճապոնական բախումի խնդիրներում. երբ մի ցօրաւոր անդամ դէնքի ուժով յարձակուում է թոյլ անդամի վրա, սպանում, աւերում, թալանում է նրան, խլում նրա հողերը եւ Ազգերի Դաշնակցութիւնը մատը մատին չի խփում վերջ տալու համար այդ խայտառակութեան, ի՞նչ անալք ու արժէք կարող է ունենալ նման հիմնարկութիւն:

Ազգերի Դաշնակցութեան ծոցում տեղի ունեցող խմորումները եւ ուժերի վերադասաւորումներն, անկասկած, չէին կարող մնալ աննկատելի, եւ նրանցից ճարպիկ կերպով օգտուեց Գերմանիան: Նրանց վրա ուշադրութիւն է դարձրել եւ Մոսկւան: Լիտվիւնով որդեգրած քաղաքականութիւնը բնորոշում է նրանով, որ, հակառակ Զիչէրիին, նա չի խուսափում բուրժուական աշխարհի հետ գործակցելուց՝ «բերդը ներսից գրաւելու» դիտաւորութեամբ: Ազգերի Դաշնակցութեան վերաբերմամբ էլ Մոսկւան աւելի եւ աւելի դառնում է «համակիր»՝ անուղղակի եւ նոյն իսկ ուղղակի ձեւով մասնակցելով նրա յանձնախմբերի եւ կազմակերպած խորհրդատուներին աշխատանքներին: Այս քաղաքականութեան հետեւողական զարդացումը, անխուսափելիօրէն, բոլշեւիկներին էլ կը բերէ ժընեւ: Չպէտք է զարմանալ, եթէ որոշ ժամանակ յետոյ Ազգերի Դաշնակցութեան մէջ խորհրդային իշխանութեան հրաւեր ուղղուող հարց էլ յարուցել: Իսկ մինչ այդ, Մոսկւան աշխատած է աւելացնել իր կուսակիցների թիւը Ազգերի Դաշնակցութեան ներսը. դաշնակից ու բարեկամ Թիւրքերայի ներկայութիւնը ժընեւում այդ տեսակէտից դրական եւ քաջակերէչ երեւոյթ է:

Հիմք կա՞յ ենթադրելու, որ Թիւրքերի ակնկալութիւնները կարողարանան ժընեւում: Այսինքն՝ խոշոր փոխառութիւն ու տնտեսական մշակցութիւն կը ստանան Եւրոպայից: Միայն Ազգերի Դաշնակցութեան անդամ դառնալու փաստը, ի հարկէ, բաւական չէ նման աշակցութիւն ստանալու համար: Երկրորդ պայմանը՝ երաշխիքն է: Կարո՞ղ է Թիւրքերան

տալ վստահելի երաշխիքներ: Ուրիշ խօսքով՝ կարո՞ղ է ընդառաջ դնալ Մուսուլինիի «խաղաղ թափանցման» ծրագրին, կամ գոհացնել Ֆրանսացի պարտատէրերին, կամ վերջ տալ արեւելքում հրճիղի դեր կատարելուն եւ իրապէս մոռնիլ արեւմտեան քաղաքական համակեցութեան մէջ: Եթէ կարող է, ամենայն հաւանականութեամբ, շօշափելի ակնկոյտներն կը ստանայ. հակառակ դէպքում, այսօրւայ դրութիւնը ոչնչով չի փոխի:

Եթէ, սակայն, Անդորան ընդունի Եւրոպայի թելադրած պայմանները, այդ կը նշանակէ վերադարձ դէպի Օսմանեան կայսրութեան ժամանակները: Զիշտ է, քէմալական թիւրքիան թոյլ չի տալ վերականգնել կապիտալիստները, զայց, ըստ էութեան, Եւրոպայի պահանջած երաշխիքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ առանց այդ ատելի բառը գործածելու՝ հաստատել արտաքին հակալուրի, դրութիւն: Թիւրքերին դրամ տալ առանց երաշխիքի, նոյն իսկ խնայարութեան անդունդի եզրին կեցած այսօրւայ Եւրոպան կը դժարանայ:

Այսպէս թէ այնպէս, մուտքը Ազգերի Դաշնակցութեան մէջ թիւրքիայի համար արտաքին յաջողութիւն երեւալով հանդերձ՝ յաղթական ոյժի նշան չէ բնաւ: Աւելի շուտ մի նահանջ է, ներքին թուլութեան մի նոր ապացոյց:

Իսկ ի՞նչ է բերում թիւրքիայի մուտքը

Ազգերի Դաշնակցութեան մէջ հայ ժողովրդի համար: Զեւակածորէն, անշուշտ, որոշ հիսաթափութիւն: Ըստ հիմնական կանոնագրի՝ Ազգերի Դաշնակցութիւնը երաշխաւորում է իր անդամ պետութիւնների սահմանների անձեռնմխելիութիւնը, հետեւաբար, եւ պիտի պաշտպանէ թիւրքիան հայերի հողային պահանջներին դէմ: Իայց, ըստ էութեան, մենք ղեռն նոր տեսանք, թէ Ազգերի Դաշնակցութիւնը ինչպէ՞ս պաշտպանեց իր անդամ Զինատանի սահմանների անձեռնմխելիութիւնը, եւ պատճառ չունինք մտածելու, թէ թիւրքիայի վերաբերմամբ դրութիւնը կը լինի ուրիշ կերպ: Ամէն բան, վերջին հաշուով, կախած է իրական ուժերի փոխարարութիւնից եւ քաղաքական պայմանների դաստարութիւնից: Եւ հայ ազգային ուժերը պարտաւոր են, միահամուռ ձեռքերով եւ յամառ ու հետեւողական աշխատանքով շարունակել պայքարը յանուն հայկական հարցի վերջնական լուծման թէ՛ դուրսը եւ թէ՛ Ազգերի Դաշնակցութեան մէջ:

Եթէ Ազգերի Դաշնակցութիւնը, առհասարակ, որեւէ արժէք պիտի ներկայացնէ, թիւրքերի մուտքից յետոյ հայերին սրած հանդիսաւոր խոստումներն ու յանձնառութիւնները չեն կարող անտեսուել: Եթէ Ազգերի Դաշնակցութիւնը պիտի լինի անզոր եւ ունարժէք մի մարմին, թիւրքերի մուտքով էլ ոչինչ չի փոխւի այսօրւայ կացութեան մէջ:

## Յ. Յ. ՊԱՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄԸ ԱԶԳԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱԶԳԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԺՈՂՈՎԻ ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՒ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ.

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ ԵՒ ՊԱՐՈՆՆԵՐ.

Այն ժամուն ուր Արդարութեան միջոցա ժողովուրդներուն խաղաղութիւնը ապահովելու կոչած պետութիւնները կը պատրաստուին հրաւիրել թիւրքիան մտնելու Ազգերու Դաշնակցութեան մէջ, Հայաստանի Հանրապետութեան Պատերազանութիւնը, որ ստորագրած է Աէվրի դաշնագիրը եւ բազմիցս պաշտպանած է հայ ժողովուրդի դատը Ազգերու Դաշնակցութեան ժողովարտին ունի ձեր ուշադրութիւնը հրաւիրելու հետեւեալ պարագաներուն վրա.

Պատերազմէն առաջ հայ ազգը չորս միլիոնի բնակչութիւն մը կը հաշէր, որուն երկու միլիոնէն աւելին թիւրքիայ մէջ՝ մեծաւ մասամբ հաստատուած իրենց նախահայրերուն պատմական հողերուն վրա՝ հայկական վիլայէթներուն մէջ:

Թիւրքերը, օգտուելով մեծ պատերազմէն՝ ի կտարածելու համար մեր ժողովուրդը բնաջնջելու իրենց ծրագիրը, զոր մասամբ միայն կրցած էին գործադրել մինչև այն ատեն՝ կոտորածներու և տարագրութեան շարանով մը այդ թիւրք իր կէսին վերածեցին: Ու մնացորդներն ալ, թուով մօտ մէկ միլիոն մարդկային էակներ, իրենց օճակներէն դուրս ջըջով աւ փոսրելով՝ տարադնեցին օտար աշխարհներու մէջ: Ու թիւրք կառավարութիւնը ձեռք դրաւ ամբողջ հայ ժողովուրդի ինչքին վրա, մասնաւոր թէ ազգային ստացածք, դրուրցներ, կեկղեցիներ, հաստատութիւններ: Ամէն ինչ բռնազրաւեցաւ կեղեքումներու ամենէն կամայական եղանակով:

Այսօրւայ հանրապետական թիւրքիան ալ, հակառ

ուակ իր ըրած կարգ մը յայտարարութիւններուն՝ նախորդ կատարութեանց զաղաքականութիւնն է որ կը շարունակէ :

Պատերազմէն յետոյ՝ 1920 թիւ օգոստոսի 10ին, ստորագրեցաւ Սէվրի դաշնագիրը, որուն 88րդ յօդաւածով «Թիւրքիան կը յայտարարէ ընդունիլ Հայաստանը իրր պատու և անկախ պետութիւն մը, ինչպէս ընդունած են պահ Պաշնակից պետութիւնները»: Այս յօդաւորը որոշ կերպով կը ցուցնէ արդէն որ Պաշնակից պետութիւնները Սէվրի դաշնագրէն ստալ իսկ ճանչցած էին արդէն Հայաստանի անկախութիւնը:

Իսայ 1922 թիւ դէպքերուն հետևանքով Սէվրի դաշնագիրը փոխարինեցաւ Լոզանի դաշնագրով, որուն մէջ Հայաստանի, կամ Հայու անան յիշատակութիւնն իսկ չկայ:

Սակայն, Ալզերու Պաշնակցութիւնը չէր կրնար չհետաքրքրել Հայ ժողովուրդին բախտովը և իր առաջին ընդհանուր ժողովին մէջ իսկ, 1920 թիւ նոյեմբերին, անիկա կը խորհէր Հայաստանը ընդունիլ իր ծոցին մէջ: Ազգերու Պաշնակցութիւնը պարտաւորեցաւ այդ խորհուրդը մէկ կողմ ձգել՝ մասնաւոր թէմայական քանակին յարձակման պատճառով, բայց յաջորդ տարին իսկ, 1921ին, անիկա միաձայնութեամբ կը քվարկէր քանաձեռ մը, Հայկական Ազգային Օճակի մը ստեղծումին համար Թիւրքիոյ մէջ, անկախ թրքական ամէն տիրակալութիւնէն:

Այդ որոշմնագիրը կրկին ձեռք առնեցաւ և Հաստատուեցաւ ամէն տարի Ազգերու Պաշնակցութեան ընդհանուր ժողովներուն կողմէ, մինչև 1924 թականը, այսինքն Լոզանի դաշնագրին ստորագրութիւնէն վերջն իսկ:

Իսայ Ազգերու Պաշնակցութիւնը Թիւրքիոյ վրա ազդելու ոչ մէկ միջոց ունենալով իր ձեռք՝ պարտաւորեցաւ սարէլ տարի յետագէլ իր արդարութեան և Հաստացումի ջանքերը:

Սակայն, այսօր, երբ անիկա ձեռք կերկնցնէ Թիւրքիոյ՝ գոյն ճրարիւրելու համար մտնել Ազգերու Պաշնակցութեան մէջ, արդեօք ինքն իր հանգչի իսկ պարտաւոր չէ՞

տուոր չէ՞ օգտուի այդ նպատաւոր ու բացառիկ առիթնէ՞ն արժեցնելու համար Հայկական պահանջները:

Հարիւր հազարաւոր Հայ զաղթականներ, խոնձած լայն շրջանակի մը վրա իրենց հայրենիքին շուրջը, Պարսկաստանէն մինչև Պաշնակցութիւնը, անցնելով Իրաքէն, Սուրիայէն, Եգիպտոսէն և Յունաստանէն, դուռ ևս ստանց Հաշիւու անոնք, զորս բախտը նետած է անիկ հեռաւոր արեւունքներ՝ իրենց աչքերը յառած կը մնան այն երկրին վրա, որ իրենցն էր և իրենց նախահայրերունը, և որ կը մնայ հիմա թափուր ու ամաշի: Այդ հարիւր հազարաւոր զաղթականները ինչպէ՞ս կրնան ընդունիլ, որ մէկ կողմէն նկատի չառնուին պետութիւններու և Ազգերու Պաշնակցութեան կողմէ իրենց Հաստացէլ ստանձնած յանձնարարութիւնները, մինչդեռ միւս կողմէ Թիւրքիան, իրենց բոլոր դժբախտութեանց պատասխանատուն՝ մուտք գործել Ազգերու Պաշնակցութեան մէջ՝ ստանց արդարութեան Հաստացման:

Վերջապէս, այդ սողեքը ստորագրող Պատերազմութիւնը պարտաւորութիւն ունի իր ամենալճոկական վերապահումներն ընելու Թիւրքիոյ ներկայ սահմաններուն վերջնական ճանաչման մասին, քանի որ Հայ ժողովուրդը չի կրար ընդունիլ որ սեփականագրիւ իր դարաւոր իրաւունքներէն և պատմական ժառանգութեանէն:

Հակառակ իր կրած ծանր յուսախաբութիւններուն՝ Հայ ժողովուրդը հաւատք կը տածէ որ Ազգերու Պաշնակցութիւնը պիտի զգուշանայ նոր անարդարութիւն մը գործել և անիկա կը մաղթէ որ Թիւրքիոյ մուտքը Ազգերու Պաշնակցութեան մէջ, սկզբնական ըլլայ Արդարութեան և Հաստացումի նոր դարաշրջանի մը:

Ընդունեցէ՛ք, պարոն նախագահ և պարոններ, մեր ամենախորին յարգանաց հաւաստիքը:

Հ. Հ. Պատերազմութեամբ նախագահ և Սէվրի դաշնագրի ստորագրող՝

Ս. ԱՆՍՈՐՆԵԱՆ

Ժքնու, 28 Յունիս, 1932

## ԼԵԶԻԻ ԽՆԴԻՐԸ ԱՏ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Մեր վերածննդի ներքին հասարակական-քաղաքական ուսումնարի մէջ լեզի խնդիրը շատ կարեւոր տեղ ունի: Թէ՛ Ու Արտովանը, թէ՛ Նարեկեանն ու Նազարեանը շատ յաճախ ջննութեան նիւթ են դարձնում այդ հարցը: Սակայն, խնդիրը նրանց համար տեսական ջննութեան նիւթ չէր: Երկուսն էլ հետաքրքրում նրանց սոսի որպէս գիտական իմացութեան ուրոյն խնդիր, այլ իրեն և հասարակական կենսը շարժող ազդակներինց մէկը, որպէս մէկ խնդիր, որ սերտօրէն կապուած էր ազգութեան զարգացման հետ: Թիւրքեւ միայն Նազարեանն ունի գրաւ տեսական իմացական հետաքրքրութիւն, սակայն, նա էլ նման հարցերը կատարում է մեր կենսոյի ճրարտալ խնդրի՝ ազգութեան հարցի հետ:

Նախորդ դարի կէսերին լեզի խնդիրը դրուած էր, որպէս աշխարհաբարի կենսունակութեան և իրաւունակութեան հարց: Այդ լեզուն նոր էր ստեղծուած. թէպէտ և չճշգրտած, սակայն, նա կար որպէս փաստ և երկար ժամանակ զնում էր գուզրնթաց գրաբարին: Նրանց մէջ պայքար չկար: Աշխարհիկ լեզի ծագումը և գրաբար լեզի անկման խնդիրը պիտի յարակցել Հայ աւատական դասի և Հայ հոգևորականութեան ստեղծանական թուլացման և սոսկաբանութեան-քաղաքային պատար

ու ծագման ու վերելքի հետ: Սակայն, միայն 50-60 թականներին էր, որ այդ երկու լեզուները ծառանում են իրար դէմ որպէս հակամարտ, պայքարող ուժեր: Մեզ թուած է, որ այդ պայքարը ըմբռնել կարելի է՝ յարակցելով այն ազգութեան զարգացման հետ: Սա էր, որ նոր յարաբերութիւն էր ստեղծելու երկու լեզուներին մէջ: Ազգութիւնը որպէս գիտակցած փաստ մեր կենսութեամբ դրանից առաջ չկար, կամ դրսեւորուած ունէր լեզի իրեն ազգ-ընտանական ու ազգ-կրօնական ըմբռում: զարգացմանը՝ աշխարհիկ իմաստով գոյութիւն չուէր: Ազգ-կրօնական գիտակցութիւնը պայքար առաջացնել էր կարող:

Միայն նախորդ դարի կէսերին է, որ մեզ մաս հանդէպ է գալիս մի նոր ոյժ՝ ազգ-նկողնեցական մտաւորականութիւնը, որ ձգտում էր կերտել նոր, աշխարհիկ ազգութիւնը դաւանանքից ու կրօնից բոլորովին անջատ: Աշխարհիկ ազգութիւնը պիտի ունենար ամենքին մատուցել նոր լեզու, որի վրա կարելի լինէր խարտիկ Հայոց նոր մշակոյթը, ինչպէս դրաբար վրա խարտուած էր մեր մշակոյթը: Հին մշակոյթը ազգաբնական էր, նա ստեղծուած էր Հայ հոգևորականութեան և այնուհանդիման ջանքերով, նոր մշակոյթը պիտի

լինէր ուսման արեւելքն ստեղծած ժողովրդական գանձանքների և աշխարհիկ մտաւորականութեան աշխատակցութեամբ, ամենին մատչելի աշխարհաբար լեզու միջոցով: Ահա ինչու լեզուն շարժական է ազգութեան խնդրի հետ: Նազաբանը նոյնիսկ նոյնացնում է այդ երկուսը: «Լեզուի և ազգի նագումը մի բան է, որպէս և դոցա ծաղիկը և բազաւածիկը. այնպէս մտ լծակից և եղաշարակից միմեանց հետ, որ մինը ստանց միւսի անմահանալի է, ոչինչ է»): Եթէ այդ այդպէս է, ի՞նչ է ազգութիւնը պիտի վերաշինել զլեզուի շինութեամբ», ապա ուրեմն լեզուի խնդիրը գրանցում է մէկ հիմնական խնդիր, որի լուծումով միայն կարելի էր ամուր հիմքեր վրա դնել Հայոց նոր ազգութիւնը: Եւ որովհետեւ, ինչպէս ասացինք, վերջինս ըմբռնում էր աշխարհիկ իմաստով, ուստի և սրաքը ուղղում էր մեր կենտրոնը խոր արմատներ ձգած Հայ հողերականութեան դէմ: Եթէ զբարատը չէր կարող Հայ նոր ազգութեան նեցուկը լինել և հողերը հարորդակցութեան գործիքը, ապա այդ եր նշանակէր, որ Հայ հողերականութիւնը ազգային մարմնի մէջ այլ ևս այն ղեկավար ուժը չի լինելու՝ ինչ էր անցելու: Արեւմտ, խնդիրը դառնում է հայցը նոր ազգութեան շարքը, սակայն, արտայայտում է, որպէս լեզուի, ինչ և նոր մտաւորականութեան մրցակցութեամբ հարց:

Նազաբանը լեզու ասելով՝ Հայականում է նոր լեզուն: «Հայոց լեզու ասելով յատուկ նազանում ենք մեր Հայոց ժողովրդի կենդանի բարբառը, նրա բերանի խօսքը, լայն լեզուն և ձեւերը, որով մեր ժամանակի Հայերը այն և վատ նազակցնում են միմեանց իրենց միտքը... Հայոց լեզու ասելով իմանում ենք միայն աշխարհաբար լեզուն, որը կենցեղ ունի մեր ժամանակումը և ոչ թէ ուսումնական դրոց սասած լեզուն, որ այժմ մեռած է»: (Ի. էջ 8): Այս տեսակէտը իրականում ունենալով՝ Նազաբանը պայքարում է երկու ճակատ վրա: Նախ՝ պէտք էր գիտական և իրաւական տեսարներով պաշտպանել նոր աշխարհաբար լեզուն զբարբարի և գրաբարապաշտների դէմ, ասել է՝ պայքարել ներքին ճակատի վրա, ապա՝ Հարկաւոր էր նրա տեղը որդիել կրթութեան-դաստիարակութեան խնդրում և նրա դիրքը սահմանել պետական լեզուի՝ ուսուցիչին նկատմամբ. ասել է՝ յանուն Հայ լեզուի պայքար մղել արտաքին ճակատում: Եթէ զբարբարի դէմ մղելիք պայքարը համեմատորէն հեղա էր շուտով էլ լուծւելը, ապա ուսումնական լեզուի դէմ պայքարելը չարիքանքի դժուար էր և կապած բազմաթիւ խնդիրների հետ: Եթէ զբարբարի դէմ պայքարել՝ կը նշանակէր Հայոց մշակույթի արտայայտութեան նոր ձեւ գտնել, պայքարը ուսում լեզուի դէմ կը նշանակէր այդ նոր ձեւին, նոր մշակույթի իրաւական հիմքեր որոնել, որով լեզուի նարքը դառնում է քաղաքական հարց:

Այս հարցի վերլուծութիւնը կարելի է կրկնակի տեսակէտներից: Նախ՝ որովհետեւ ուսում և Հայ բազմակիցութիւնը խնդիր էր օրերում էլ դեռ լուծւած չէ և այժմ էլ նոյնպիսի հրատապ, կենսական հարց է, ինչպէս և 70-80 տարի առաջ: Երկրորդ՝ որովհետեւ Հայ և ուսում լեզուի հարցը մի արտայայտութիւն է ուսումնաշայտ հարցի: ովքեր հետաքրքրում են ուսումնաշայտ խնդրով՝ չեն կարող չհետաքրքրւել, թէ ինչպէս է ըմբռնում այդ խնդիրը մեր վերածննդի խնդիրը՝ Ստ. Նազաբանը:

10րդ դարի սկզբներին Պարսկաստանից և Տանկաստանից գրաւած գաւառներում և ուսումնական կայսրութեան բազմաթիւ քաղաքներում կար հոծ Հայութիւն, որի քանակը Ստ. Նազաբանը կէս միլիոնից ասելի էր համարում: Այս քանակածր ուսում պետութեան կողմից ամենաւելց ոչ թէ որպէս ուրոյն ազգային միաւոր, այլ լոկ կրօնական Համայնք, որի իրաւական սահմանումը

տրւեց 1836թ. Պոլսեմիայով, որով Հայութիւնը ճանաչւում էր կրօնա-կրօնաւորական մէկ միութիւն: Տիրող իշխանութիւնը իր վրա էր վերցրել նոր գրաւած երկրների վարչութեան կազմակերպութիւնը, օրէնսդրութիւնը, երկրի պահպանութիւնը, հարորդակցութիւնը, հողացողութիւնը անասական գարաբացման, իսկ Հայ հողերականութեան թողել էր եկեղեցիներ ու դպրոցներ ունենալն և մի քանի դատական իրաւունքներ: Ի՛հարկէ, ուսումնական տիրապետութիւնը մի բարբէ էր Հայութեան համար, որ ապաւում էր նախկին աստատական, անիշխանական բռնութիւնից: Նոր տիրապետողը, սակայն, իր պետական կազմակերպութեամբ և մասամբ էլ եւրոպական քաղաքակրթութեամբ մտանդ էր պատնում Հայի հուսալից Հայութեան: Նորագոյտ պայմաններում Հայը մոռուստանում վայելում էր քաղաքացու իրաւունք: «Ոչինչ բռնութիւն չի հասնում ոչ նրա անձին, ոչ նրա ընտանիքին, և ոչ նրա վաստակին» (Ն. Ի. էջ 270):

Նախորդ դարի կէսերին արդէն զգացում էր, որ մոռուստանի տառնահատական պահպանութիւնը չի կարող դառնալ Հիմք ազգային հուսալիցանութեան պահպանումի: Հայութեան դիտակից լուր, մանաւանդ առաջաւոր մտաւորականութիւնը յատ տեսնում էր և միջոցներ որոնում նոր Հայութեան պատմա-մշակութային դէմքը պահպան Համար, մի բան որ շատ դժուար էր, որովհետեւ, ինչպէս Նազաբանին էր ստատ, Հայը ճազգութեան պայմաններից ոչ մէկը չունի և ոչ մինը մինչև այսօր չցուցած չեն» (Ն. Ի. 286): Հարկաւոր էր ամէն ինչ նորէն ստեղծել, հարկաւոր էր ազգ լինել, ուրոյն մշակութային-պատմական միաւոր, որովհետեւ ճարտարութիւնը յառաջադիմում է միայն ազգային հասարակութիւնների միջոցով»: Մտանդ լոկ ազգալիցական տարր, անկասած է, զոր շատակեր կոտորու կուտէ և կը մաշէ մեղ իբրև անպիտանացեալ որդիք ժամանակի (Ն. Ի. 148):

Հայութեան ազգ դառնալու այս ձգտումը անյարի էր ուսաց կայսրութեան դէպի փոքր-հպատակ ազգութիւնը որդեգրած քաղաքականութեան: Այստեղ երկու ուժեր պայքարում են իրար հետ. սկզբում այդ պայքարը անկրթի չէ, ապա դառնում է կուր մահու և կուսիքի համար: Մոռուստանը երբեք չորդեգրեց ազգութեան սկզբունքը և հպատակ ազգերին մշակութային ինքնօրէնութիւն և քաղաքական իրաւունքներ չունց, որովհետեւով հպատակ ազգերը գոյութեան կուտէ արտում էին անզին մի գանգուած: Հայը մոռուստանում կամ անհատ էր՝ կանգնած մեն մենակ պետութեան հանդէպ, որ նրա ստալ բայնորէն բաց էր անում իր դպրոցների, պաշտօնների, տնտեսական ձեւաւորների դուրը, կամ եկեղեցական Համայնքի անգամ էր, որ շրջանակում պիտի բաւարարէր իր մշակութային կրթութեան կարիքները: Անհատի և պետութեան միջև աշխարհիկ ընդթի կրող միջնորդ չկար: Մոռուստանը կատարեալ այդպիսի իրաւունքի հուսալիցանութիւն էր ճանաչում: Հայոց եկեղեցին այդպիսի կենսունակ միջնորդ լինել չէր կարող, որով Հայը իր շահերով ու հողերը ձգտումներով դուրս էր գալիս եկեղեցու նեղ շրջանակից և մտնում կենսաբի անկախ լայն հոսանքների մէջ, ուր եկեղեցու իրաւունքները չէին տարածւում: Եւ շատ ուշ Նազաբանը ցուով գգում էր Հայութեան անկ կացութիւնը: «Մոռուստանի ուրիշ բան չի մնում, գրում էր նա, քան իրականալ իրենցից ամէն Հայութիւն և մի անգամից կուր գնալ վիթխարի հակային և անարդելով ու խայտառակելով մեր նախահարց յիշատակը՝ դառնալու ուսանիք»:

Հուսալիցան Հայութեանը այսպիսի վտանգ էր ստացւում: Եւ այս գործի մէջ ամենախոշոր դերը կատարում էր ուսումնալիքը: Մոռուստանալիցանութիւնը շատ յանախ պայքարում էր ուսումնալիցանութեան, հասարակական ու քաղաքական հոսանքների, դպրոցների, ասել է ուղ մշակույթի դէմ՝ ներքին ճակատում, իսկ

\*) Ստ. Նազաբանի Երկերը. Կ. Ի. Թիֆլիս 1913:

արտաքին ճակատում՝ հպատակ ազգերի դէմ պայքարելիս՝ առև մշակոյթը, յատկապէս լեզուն ու զարոյցը լուսաւոր սօսնազակ միջոց էր նրա ձեռքին: Ռուս լեզուն արտօնեալ լեզու էր՝ հարուստ ու բովանդակալից: Նա և տնտեսական ոյժ էր. հայը զգում էր նրա կարիքը իր անտարար-արդիւնաբերական ձեռնարկներէ մէջ. զգում էր նրա կարիքը և պայտօծները որոնելիս, զհետադարձ և տնտեսական մէջ: Ռուս լեզուն աստիճանաբար արմատանում էր հայութեան բոլոր խաւերէ մէջ, դառնում էր գրականութեան, թատրոնի, արւեստի, փողոցի, անզամ ընտանիքի լեզու: Հաղորդակցութեան, դատարանի, վարչութեան միջոցով նա տարածուում էր բոլոր այն խաւերէ մէջ, որոնք չգիտէին ուսնելում այդ հաստատութիւններէ: Հետ: 20րդ դարի սկզբին այդ ջրապտոյտի մէջ պիտի մտնէր և հայ գիւղը, որով առևսացման վտանգը հասնելու էր մեր ազգային մարմնի ողնաշարին:

Ստ. Նազարեանը խորապէս ըմբռնում է, թէ ինչ բախտորոշ հետեանքներ կարող է ունենալ մեր անիրաւազարկ կացութիւնը և Ռուսաստանի որդեգրած քաղաքականութիւնը. «Հայոց պատական մանկունքը առևսաց ձեռքում աւերեցան և աւերում են ամէն օր, այնպէս որ սոցա պիտի ըր ջար կառու ջուրը ձգես իսկի ազգի համար կորուստ չէ: Նա ջրամոլ նկատում է, որ զազգի զաւակները օրէ օր կլանում է օտարազգի լուսաւորութիւնը և պիտի կլանի ստանջ փրկութեան»:

Ի՞նչ էլք կայ այս դրութիւնից: Նազարեանը չի պահանջում իսպառ վերացնել առևսաց լեզուն, դպրոցները: Նա, որի հռչակաւոր սկզբունքն էր՝ «հայերս քաղաքականապէս առև ենք», չէր կարող հակառակել առևսաց լեզուն ուսուցման. «մենք ամենեւին ընդդէմ չենք առևսաց լեզուն և առևսական կրթութեան. այդ-լը լինէր մեր կողմից մի աննշեղի մեղադրութիւն առևսացի նախախնամութեան, որ մեր հայկական կենսքը կապել է առևսաց թաղաւորութեան հետ, որոյ բարիքը վախելում ենք մենք ամէն օր իբրև քաղաքացիք մարդասէր օրէնքի պաշտպանութեան տակ»: Ռուս լեզուն՝ «թաղաւորակ, հրապարակական լեզու է» կայարութեան մէջ, ուր ապրում են տասնեակ ազգեր: Այս լեզուով խօսում է «օրէնքը, դատաստանը, կառավարութիւնը, դպրոցը և զիտութիւնը»: Ուրեմն, նա գործնական և տեսական արժէք ունի: Նազարեանը առևսաց լեզուի այս արտօնեալ և միահեծան իշխանութեան դէմ պայքար չի մղում, վարչութեան, դատարանի, օրէնքի ազգայնացում չի պահանջում և հայ լեզուի քաղաքական-պետական իրաւունքներ չի վերագրում: Նրան հետաքրքրողը հայ եզգուար մշակոյթի արժէքներն են — դպրոց, գրականութիւն, թատրոն, ընկերութիւններ. նա հայ լեզուի մշակութային իրաւունքն է ցտտագոյում: Չպահանջում վարչութեան, օրէնքների, դատարանի ազգայնացումը Նազարեանը կանգնած չէ Ռուսաստանում ընկալող ազգերի նոյնիրաւութեան տեսանկէտի վրա: Նա ընդունում է, և ընկալում է համարում, որ առևսաց լեզուն ունենայ գերակշիռ և արտօնեալ դրութիւն: Անպատիժ կերպով մի կարելի հրատարակ այդ լեզուից սակայն, նա պիտի մնայ որոշ սահմաններում, նա պիտի լինի Ռուսաստանում ապրող փոքր-փոքրների կապակցող՝ միջազգային լեզու, պիտի լինի իրազգային իմացութեան մասնակից լինելու լուսագոյն էնքը, բայց չպիտի լինի սպազգայնացման գործիք. չպիտի դրոյթիւն ունենայ ոչնչացնելու, այլ ստեղծելու, լրացնելու ազգայինը. «Հայոց մանուկը պիտի ստանի առևսերէն ոչ թէ ուսանելու և իր լեզուից օտարացնելու համար, ինչպէս դրա ողբալի օրինակը շատ և բազմաթիւ հանդիպում է մեզ. մինչև արտեր ընթանում հայկական խօսք եւս չգտանել, այլ լցուցանելու իր սուրբ պատականութիւնը մի երկրպագուան տէրութեան, որ նախախնամութեան կամքով կարգաւած է հոգաբարձու և դատարանի այս ասիական ազգից» (Հ. I 293): Այսպիսով առևսաց լեզուն սօսնազակ միջոց է՝ երկրի օ-

րէնքներին վերահասու լինելու և տնտեսական գործառնութեան մէջ յաղորդելու համար, որով հոռուսաց լեզուն պիտի անհնձիկ հաւասարակշիռ մնայ հայերէնին. հայը մեր կարծիքով պիտի լինի ջալ հայաբէր և ոռևսագէտ միանգամայն՝ իբրև հայ նախահարց որդի և իբրև առևսաց թաղաւորութեան հպատակ. Աստուծոյ և կայսերն կայսեր» (Հ. I. 336):

Արտեղ Նազարեանը փորձում է լուծել երկու լեզուների խնդիրը, ճիշտ այնպէս, ինչպէս լուծել էր հայութեան քաղաքականութեան խնդիրը: Եթէ քաղաքականութեան մէջ առևսաց լեզուն պիտի առևսացնէ ինչ ունենայ, մշակոյթի ասպարեղում՝ հայերէնը գերակշիռ տեղ պիտի ունէր: Եթէ հարցը այսպէս լուծուի, երկու լեզուների միջև տեղի կունենայ ոչ թէ մրցակցութիւն, այլ գործակցութիւն: Այս ձեռով կարելի է, ըստ Նազարեանի, լուծել հայ հոգեւոր մշակոյթի խնդիրը առևսաց լեզուն ինչպէս սահմաններում:

Մտնելով դրում է, որ հայ մշակութային արժէքների անկախանգ զարգացման համար կայ միայն մէկ ճանապարհ. հայերէն լեզուն պէտք է գերիշխող դառնայ հոգեւոր մշակոյթի բոլոր ասպարեղներում: Այս սահմանում լեզուն պէտք է լինի հոգեւոր արժէքների ստեղծագործող ու տարածող: Սակայն, լեզուն մշակում է ընկերային կենսքում ու նրան գոգընթաց: Ուստի դժուար է լեզուի և մշակոյթի անարգել զարգացումը ապահովել առևսաց ընկերային բոլոր արգելքներով վերացնելով: Նազարեանը իր բարեխոսողական ծրագրերը այդքան լայն չի դնում. նա չի պահանջում յեղաշրջել գոթութիւն ունեցող ընկերային-քաղաքական յարաբերութիւնները: Ընկերային կենսքի արգելքներից նրան ամենէն շատ հետաքրքրում է դպրոցի հարցը՝ նրա միտքը գործում է հոգեւոր արժէքների չլրջանակում: Մեր լեզուի խնդիրը տրամաբանօրէն ստեղծելու էր հայ դպրոցի հարցը: Լեզուի հարցը դառնում է դպրոցի հարց: Եթէ լեզուն է ազգութեան պահպանման հիմնական և ամենէն կարևոր ազդակը, ապա պէտք է հետևեցնել, որ այն հաստատութիւններում, ուր կրթում, դատարանական և հայ մանուկը, պէտք է թաղաւորէ մայրենի լեզուն. մայրենի լեզուն կապում է մայրենի դպրոցի հետ: Իսկ այս ձեռով վերջինս դառնում է ազգապահպանման անհրաժեշտ գործոններից մէկը: Ազգային դպրոցը է միակ հարցը՝ մեր ազգի փրկութեան, միակ սինը հաստատութեան, որոյ վրա կարող է պահպանել նրա ստանալ բարոյական դրութիւնը Ռուսաստանի մէջ և ամենայն տեղ» (Հ. I, 295): Մի այլ տեղ նա կրկնում է գրեթէ նոյնը. «հայկական կենսքի նորոգութիւնը պիտի սկսանի փոքր-փոքրական դպրոցից, որ արմատն է ամենայն ազգային լուսաւորութեան, ամենայն ազգային յառաջագիւծութեան» (Հ. I, 288):

Այս մէջերումները երևում է Ստ. Նազարեանի իդէալիստական այլաբանացնողութիւնը: Դպրոցներ, գյուղատնտեսական հետ և կապում նա ոռևսահայոց լեզուն լուծում: Մի երկու անգամ նա կանգ է առնում հայ մշակոյթի նիւթական հիմքերի վրա, բայց այս էլ ըմբռնում է որդէս համազգային կամաւոր սուրբ: Նազարեանը մանրամասնօրէն ընտելութեան նիւթ էր դարձրել ազգութեան խնդիրը տնտեսական տեսակէտից, ճիշտ այն պատճառով, որ նրա ընկերային-փիլիսոփայական այլաբանացնողութիւնը կտել և կործանէ է 19րդ դարի սեծ իդէալիստների քաղաքական չլրջանակում: Այդ պակասը լրացրեց Ս. Նալբանդեանը, որը փորձեց որոշել հայ ազգութեան պահպանման նիւթական հիմքերը: Նազարեանի ու Նալբանդեանի գաղափարները հետագային համարուեցին Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրում:

Եթէ դպրոցը, Նազարեանի համար, ունի այդպիսի խոշոր հասարակական-քաղաքական դեր, ապա ուրեմն, նրա կազմակերպութիւնն ու բովանդակութիւնը ստանում է ստանալակարգ նշանակութիւն: Ամէնէն ազգի մէջ մայրենի լեզուն շատ մօտ է մանուկին. նա ծնւել է

գործ մէջ, լաւ ու վատ վարժելի է դորա մէջ, համարում է դորան իր անձի սեփականութիւնը, բայց օտար լեզուն երևում է նրա աչքի առջև իբրև մի ամենևին արտաբերի դուրսի բան»։ (303)։ Ուստի, հասկանալի է Նազարեանի պահանջը, որ «հայկական մայր դպրոցի մէջ պիտի բարձրադասի բազմի աղջային լեզուն, ոչ հինը, այլ նորը և կենդանին» (289)։ Սակայն, հայ դպրոցը պիտի ենթարկուի մի հիմնական բարեփոխութեան — դառնայ աշխարհիկ ու կեանքի գործնական պահանջներին համապատասխանող։ Հայ հոգևորականութիւնն ու դպրոցը մնացել էին հին դաղափարներով, մինչդեռ հայ կեանքը մտնելով նոր պայմաններ մէջ՝ նոր պահանջներ ունէր։ Հայը դառնում էր խոշոր արհեստական ու քաղաքացիական առևտրա-արդիւնաբերական կեանքում, պահանջում էր գործնական դիտելիքներ, գնադատւ աբեղաները։ Ստեղծւում էր աշխարհիկ մատուորակներ՝ բժիշկ, ուսուցիչ, իրաւաբան, գործակաւտար, ճարտարադէտ, որ իր մտքի համար նոր անունը էր որոնում և որին անկարող էր բաւարարելու հայ դպրոցը և նրա իրաւասէր հայ եկեղեցին։ Ուստի, զարմանալի չէ, որ նրանք միջև ստեղծւում էր մի անկարող, որի հետևանքն էր լինում այդ խաւերի հայկական մարմնից ուժանալը։ Հազարի գաւակներին օրէ օր կրնում է օտարազգի լուսաւորութիւնը ու պիտի առանց փրկութեան կրնէ»։ (286)։ Ենթ այդ անարյս կացութիւնից հայ դպրոցի արդիւնացումն է. նա պէտք է լինի եւրոպական լուսաւորութեան հնոց, այնտեղ «եւրոպականը պիտի խնամխնայ հայկականի հետ»։ Նա պէտք է զարգացնի գործնական դիտելիքներ, պէտք է բանայ «հացի և ապրուստի ճանապարհը»։ Հայ մանուկը բնաւ մեղաւոր չէ, որ դիմում է ուսուցանելու դպրոցներ, ուր դանում է կեանքում յաղութելու հնարաւորութիւններ։

Հայ դպրոցի ոգին և նպատակը պէտք է լինի աշխարհիկ. նա պէտք է գուզահետ գնայ մեր դարի պահանջներին։ Պէտք է հիմնել «մի ընդհանուր ազգային դպրոց, որ պատրաստէր ազգի մանուկները մեր այժմեան ժամանակի համար բուն հայկական բառով արմատացնելով նոցա սրտի և հոգու մէջ եւրոպական լուսաւորութեան սկզբունքները» (65)։ Դրա համար

անհրաժեշտ է, որ հայութիւնը ճանաչէր որպէս ըստնաբանական միաւոր և համապետական իրադէպը ստանալ իր բաժինը կրթական գործի համար։ Վերջին պահանջը Նազարեանի մերժում էր. հայի մշակութային վերածնութիւնը պէտք է լինի համաբնական, իր յատուկ ձևերը վաստակելով, առանց նիւթական օգնութիւն խնդրելու տէրութիւնից»։ (92)։ Նազարեանը լատ լաւ գիտէր, որ նիւթական օգնութիւնը առաջ կը շարժէր անցանկալի միջամտութիւն, որոնք կը խախտէին մեր կրթական հաստատութեանց հիմքերը։ Ինչ վերաբերում է հայ մշակոյթին աւելի խոր իրաւական հիմքեր տալուն, Նազարեանը դրանով չզբաղեց։

Սակայն, Նազարեանի տեսակէտները անբաւարար էին մեր ազգային գոյութիւնը պահպանելու կացութեանը։ Այդ նա ինքն էլ պղտւմ է և իր բազմաթիւ նամակներում խիտ մեծ վշտով նկատում է, թէ ինչպէս հայութեան սպառնացող վտանգը աւելի և աւելի ծաւալում է. «Մինչև հայոց հայրենասէրքը պատուաւոր ու քաջալիրական ասպարէզը չբանաւ հայոց զուակի առջև, մինչև հաստատուն պատճառներ չկային մէջ տեղումը, թէ այն հայոց լեզուն, որ կուսանէր հայ ազգի մանուկը՝ լուսաւորութեան ճանապարհ էր, հաց և ջուր կուտայր, փառքի և պատուի կը հասցնէր, մինչև բանի ընթացքը ազգպէս շլինի, զուր և անօգուտ էին ամենայն խօսք և խօսածք»։ Այստեղ Նազարեանը խորապէս ըմբռնում է հայ լեզուի զարգացական դերը, բայց դրանից բխող տրամաբանական եզրակացութիւնները չի հանում։

Նազարեանը կուլտուրական մտածող էր։ 50-60 թւականները մշակութային վերածնութեան շրջան էին։ Եւ Նազարեանը՝ մեր հոգևոր վերածնութեան շրջանի լաւագոյն արտաստիչն է։ Գիւր, լեռու, դպրոց, մարդասիրական ընկերութիւններ — ահա նրա բարոյք և հոգացողութեան առարկան։ Դարն այդպիսի մարդ էր պահանջում։ Հային հարկաւոր էր հոգու վերածնութիւն նախ քան զարգացական վերածնութիւնը։ Նազարեանը պատուով կատարեց հոգևոր վերածնելի դերը, որի համար հետագայ սերունդները երախտապարտ են նրան։

Գ. ԳԻԻՉԱԼԵԱՆ

## ԱՅՐՈՒԲԷՆԻ ԲԱՐԵՆՈՐԳՈՒՄԸ ԹԻԻՐԻԱՅՈՒՄ

Թիւրքական խնդրէնի բարեկարգումը գուտ գրական խնդիր չէր. նա ունեցաւ և շարունակում է դեռ ունենալ նաև քաղաքական կարևոր հետևանքներ, հէնց, օրինակ, մահմետական աշխարհի վրայ քաղաքաւորութեանը։ Այս պատճառով, կարծում ենք, անպիտան չի լինի, որք յայտարարեմքով, առաջ բերել «Իրօջական» խորհրդային մամուլի ինկլիսիի ներկայացուցիչ Կ. Իստիկի անուկալ հետաքրքրական յօդածրը\*), որ, կարելի է հասել, տպիւ է Թիւրքական նոր աշխարհի ներմուծման սպառիչ պատմութիւնը։

Յօդածրը տպիւ ենք մեր այլատաակից ընկ. Ն. Բաղալեանի քարգումնութեամբ։

Սխալ է տարածւած այն կարծիքը, թէ Թիւրք աշխարհի բարեկարգումը բացառապէս քեմալականների գործն է։ Նոր աշխարհի հարցը սկսել էր յուզել դեռ համախեան իշխանութեան օրով, մասնաւորապէս Չիւրանիայում, որ ազատաստւել և յառաջդէմ զարգացն համբան ունէր։ Առաջին նախաձեռնողներն էին գնդ. Սեյիտիզադը և հրապարակադէր Նէլմիթը, որոնք 1900 թւին Չիւրանիայում սկսեցին հրատարակել «Հիւրմէթ» անունով մի թերթ, ուր արծարծւում էին այն միտքը, թէ պէտք է գրել այնպէս ինչպէս խօսում են։ Այս միտքը քաջալիրանք էր գտնում Չիւրանիայի ազատական տարբերի մէջ, նաև Պոլսում, ուր Աճմէտ Իսախանի և Օմէր Սէյիտիզադի պէս յայտնի գրողները համակարգական վերաբերմունք ցոյց տւին։ Սկիզբը համարական իշխանութիւնը սահմանափակում էր միայն «Հիւրմէթ» թերթի յաճախակի խախտումներով, բայց հետագային

\* ) Արիւնիլի մշակոյթը և գիրքը, ռուսերէն պարբերաբերք, 1929թ. № 4, Բագու։

Զմիւռնիայի այդ խմբակը լուծւեց և նրա ղեկավարները աքաղաղեցին: Ենչաթէ ինքնապատկերան գործեց աքաղաղւածը (Աղանա), իսկ Սիւրհակը ճարտարեց քաղաքական խնդիրներով գրեւորուեց, դարձաւ սովորական սպայ և 1926թ. մեռաւ Զմիւռնիայում, մոռացւած ամենքից:

Այրուբէնի խնդիրը, իբրև Հիմնական Հարց, դրեց Օսմանեան կայսրութեան մէջ նաև 1908թ. յեղափոխութիւնից յետոյ: Այն ժամանակեայ իր թիկնաւոր ամենից յատկապէս և արմատական տարբեր իրաւամբ ընդունում էին որ արքայական այրուբէնը իր նախկին տոտալարանութեամբ անտանելի խնդիրոտ է հանդիսանում զբաղկատութեան տարածման համար: Սակայն, ինչպէս իր թիկնաւոր ամբողջ գործունէութիւնը, այս բարենորոգումների խնդիրն էլ սահմանափակուեց սոսկ կիսամիջոցներով: Իր թիկնաւորների մտքովն փակ շանցաւ այրուբէնի փոփոխութիւնը ղնել գործնական հիմքերի վրա: Ընդհակառակը, երբ Աղանան որոշեց որդեգրեց լատինական այրուբէնը, իր թիկնաւորական «Յեղափոխականները» անձնձեղով ընդունեցին այդ նորութիւնը: Օսմանեան համարանական գաղափարաբանութիւնը, որ հիմնւած միջնադարեան աւանդութիւնների վրա ձգտում էր պահել մահմետական միակ կայսրութեան գոյութիւնը, չէր կարող ճշգրտաբար ղնել Ղուրանի այրուբէնի փոփոխութեան պահանջը: Այդ գաղափարաբանութիւնից պատասխարելով՝ վերջ կը դրէր իսլամական քաղաքականութեան և պետութիւնը կաշխարհականացնելու, որից յետոյ մի. յն, իբրև երկրորդ քայլ, կարելի կը ընէր եւ. ոպականացնել այրուբէնը՝ հիմք ունենալով ոչ թէ իսլամ աշխարհը, այլ թրքութիւնը, նոյն իսկ իր համաթուրքական ձեւի սակ: Իր համարանութեան գաղափարով, նա չէր հրաժարում մահմետականների համաշխարհային եղբայրութեան երազներից: Իբրև արդիւնք այդ ձգտումների, նոյն իսկ ամենախիտօք և ամենաարմատական իր թիկնաւորականների կողմից արւում էին փորձեր բարենորոգելու արքայական այրուբէնը այն ձևով, որ, օրինակ, տառերը գրւեն առանձին, որ գրերիս ամեն բառի մէջ մտցնեն ձայնաւոր տառեր և այլն: Նոյնպիսի կիսամիջոցներ էին առաջարկում նրանք և օսմանեան քերականութեանը համար:

Այդ տարբեր ամենին վրա արտայայտուին էր յայտնի իր թիկնաւորական լրագրող Հիւսէյին Չահրդը: Նրա մէկ գաղափարը, — գրել տառերը առանձին, քաշկարելու և հիւլիկի կողմից: Հիւսէյին Չահրդը կազմեց նոյն իսկ նոր թրքական քերականութիւն, որի մէջ փորձում էր մտցնել մի քանի դերութիւններ գրի և ուղղագրութեան համար, բայց իր կիսակատարութեան և պետական օժանդակութեան բացակայութեան պատճառով այս փոփոխութիւնը չուտով մոռացւեց: Նման փորձեր արին և ուրիշ արմատականներ: 1909ի յետադիմական պատմութիւնների և կղերական դժգոհութիւնների պատճառով իր թիկնաւորական ղեկավարութիւնը պահեցաւ նոյն իսկ այդ կիսամիջոցները գործադրելու և իր թիկնաւոր իխանութեան ժամանակ այդ ուղղութեամբ ոչինչ չարեց:

Չի կարելի սասել, որ ջեմալականութիւնն էլ իր գոյացման առաջին տարիներում գնուականութիւն ցոյց տւեց արմատական կերպով ղնելու այրուբէնի և քերականութեան խնդիրը: Ընդհակառակը, կարելի է պնդել, որ սկզբում ջեմալականութիւնը շատ թշնամաբար էր արմատաբար այրուբէնի փոփոխութեան գաղափարին: Հիմնական պատճառն այն էր, որ ջեմալականութիւնը բոլորովին մի անգամայն չկանգնեց ձեռնարկ թուրքերից ուղղել վրա: Եւրամական ցնորքները դեռ տիրապետում էին մտքերի վրա թէ յոյների դէմ վարած պայքարի ժամանակ և թէ առաջին տարիներին, Լոզանից յետոյ: Հակառակ բոլոր հիասթափութիւններին համարանութիւնից ընդհանուր և յունական պա-

տերազմների ժամանակ, նա դեռ պահպանում էր ջեմալական եղբայրութեան» յայտը, նոյն իսկ 1924ի Մարտին իսլամականութիւնը կուրծկալուեց ևնթարկելուց յետոյ մտցւեց յայտնի զուգորմը իսլամականութեան վերացման օրէնքի մէջ, որով իսլամականութիւնը մարմնացնում է Աղայանի Մեծ ժողովը, իսկ հանրապետական սահմանափակութեան մէջ դրեց բոլորովին ոչ-հանրապետական և մի նախադասութիւն՝ իսլամը պետական կրօն է: Նոյն իսկ մաքուր թիւրքերի գաղափարախօսները երազում էին մաքուր թիւրքերի մեղաւորել իսլամական ձգտումների մէջ:

Երբ որ թիւրքեր առաջին անգամ լուրերը, որ Աղբրէշանում պատրաստում է այրուբէնի լատինականացումը, Յալի՛ն Իրֆիկին, այժմ մէկը հնկիւրի պաշտօնաթերթի խմբակարգներից և Ազգ. ժողովի անդամ, 1924ի մայիսի վերջին «Աղամ» թերթում հրատարակ եկաւ մի յուշածով Մուսուլի դէմ՝ յայտարարելով, թէ յունական այրուբէնի գաղափարը թորհրդային շարժումներն է, որի նպատակն է թորք ժողովուրդներից իսլի լիցուն և արմատախիլ անել նրանց կրօնը: Հանրապետութեան հռչակումից յետոյ նա հրատարակ եկաւ մի նոր սուր յօդածով Մուսուլի դէմ, որի մէջ ստում էր, թէ լատինական այրուբէնը մտցում է Աղբրէշանում միայն նրա համար, որպէսզի ընդմիջա կտրի կապերը թիւրքերից հետ:

Բայց ջեմալականութեան ամենախտաբաւաղէմ տարրերի մէջ հեղուհեղ հաստանում էր այրուբէնի հիմնական և անյետանգելի բարենորոգման անհրաժեշտութեան մտքը: Այդ հասանքի ամենացայտուն արտայայտչներն էին այս պատգամաւորները, որոնք ներկայացնում էին Զմիւռնիայի գաղթելուց իրենց: 1924ի մարտի բարենորոգումների նախօրէին, երբ թում էր թէ ջեմալականութիւնը իր յեղափոխական բարենորոգչական ձգտման մէջ հասել է այնպիսի բարձունքների, ուր երբեք գեռ չէր հասել Օսմանեան և թրքական պետական և ընդերաքաղաքական սամադորութիւնը, այդ պատգամաւորները զոգնուեցին և որոշեցին այդ հարցն էլ ղնել Աղբայանի Մեծ ժողովի առջև: Այդ խմբակի անունից դուրս եկաւ Զմիւռնիայի պատգամաւոր Սաբալ-օղլի Շուքրին, այժմեան ելեմական նախարարը, որ 1924թ. փետր. 26ին Ազգ. Մեծ ժողովի ամբիոնից արտասանեմ ճառում ասաց, թէ՛ «Մութորբար ենթաթում են, որ լուսաւորութեան գործի համար մենք թէլ գոհարութիւն ենք սնում: Իրականում մենք գոհարելում ենք այնքան, ինչքան որ ուրիշ ճիւղերում: Ես թողլ եմ տալիս իմ արտայայտելու իմ փայփայած երազները ստատարութեան գործում: Առաջինընում եւրոպայում էլ կրթութիւնը քահանաների մենաշնորհ էր, բայց և այնպէս եւրոպացիները կրթութիւնն էին ստանում: Թիւրքերիս լուսաւորելու պահանջ են գնում մեր կրօնը, աւանդութիւնները և օրէնքները: Հին ժամանակները ամեն մի զիւղ թէեւ չունէր ուսուցիչ, բայց ուներ իր սանձին «հօշման»: Եւ հակառակ բոլոր գոհարերութիւնների մեր ժողովուրդը մնալ անգորգէտ. այդ բանի համար չի կարելի պատասխանատու համարել հին երանակը: Ամենամեծ դժբախտութիւնը մեր այրուբէնն է և միակ մեղաւորը՝ մեր տառերը: Երկուր տարիներ շնչեքը պպրգրին անցան մեր ժողովուրդին կարգալ գրել սովորեցնելու համար: Պատճառը մէկ է: Ես կուզէի, որ մեր երեսխները սովորէին կարգալ և գրել կարճ ժամանակամիջոցում»:

Թէեւ Շուքրին իր ճառը վերջացրեց ոչ թէ լատին տառերը մտցնելու առաջարկով, այլ միայն խորհուրդով զոգնելու այդ դժբախտութեան դէմ», բայց արդէն այդ խօսքերը դիմաւորեցին յղերականների և մոլլաների թշնամական բացառանդութիւններով: Նրանք լաւ էին հասկացել, թէ ինչ էր ուզում ասել Շուքրին: Բնամայականները գնուականութիւն չունեցան պաշտպանել Շուքրինի՝ վախենալով «Նույն ալիսարհից»:



Նրան օգնութեան հասաւ Հիւսէյնի Զահիդը, մասամբ իբրև ընկճանքապէս բարեբողոքումի նախածնուող, այլ և ընդհանրապէս նպատակներով, որպէսզի նախածնուութիւնը խլի ճեմարականներէց: Փետրուար 27ին Վասիլիոսով մի խմբաբազանով նա ստանանշեց, որ Շուքրիի խօսքերի մէջ պէտք է գտնել ուղղակի կոչ մտցնելու լատինական այբուբէնը և որ այդ միտքը պէտք է ուղղուէ: Եթէ էնկիւրիկ ընտանի լատիններէն այբուբէնը, թիւրքիան մի անշամից հէքեթմաթիյն արաբուութեամբ կը յառաջընթի: Չպէտք է օտարանել, չպէտք է կասկածել: Հէնք թէ՛կուզ նրա համար, որ արաբական այբուբէնը թրքական չէ: Արաբական այբուբէնով գրեցրը չեն կարողացում: Նոյն իսկ թերթերը շատ չնչին թլուզ են տարածում: Արաբական այբուբէնը չի կարելի բարեփոխել: Դարեր ընթացում թիւրքերը փորձել են յարմարցնել արաբական այբուբէնը իրենց լեզուի, բայց ի դուր արաբական այբուբէնը ուղղաբարութիւն չունի և չի էլ կարելի կազմել: Հիւսէյնի Զահիդը իր սեփական փորձից զիտէ այդ: Արաբական այբուբէնով չի կարելի բարելուել թիւրքերէն չեղուն և ազատել նրան արաբական և պարսկական բառերից: Լատինական այբուբէնով ոչ միայն թիւրքերը արագ կը սովորեն, այլ և օտարները: Միակ խոչընդոտը դարձուր սովորութիւնն է, այդ պէտք է յաղթահարել:

Այստեղ և եթ Հիւսէյնի Զահիդը զարգացրեց լատիններէնի ներմուծման ծրագիրը և կոչ արաւ էնկիւրիին դործի անցնելու: Պէտք է անմիջապէս լատիններէնով հրատարակել նախաթարգմանիքը դասագրքերը: Ուսուցչիւնը պարտաւսուող չնշտ է: Այնուհետև կարելի է պատրաստել դասագրքեր հասակաորոնրի համար: Պէտք է միաժամանակ կազմակերպել նոր այբուբէնի տարածումը պաշտօնութեան մէջ: Այդ բոլորի համար հարկաւոր են մի քանի ամիսներ: Ի հարկէ, արաբական այբուբէնի հետ ղեւ երկար ժամանակ գործ պիտի ունենայ: Մասնաւորապէս թիւրքերը պէտք է սուլեն և արաբական և լատինական այբուբէնով: Մի քանի տարիներում ալը շրջանը կանցնը: Թիւրքիան կը ստանայ թիւրքերէն դրամբնանքի: Կարելիով արեւմտեան գրքերը թիւրքերը կը հասկանան, որ իրենց գրքերը արժէքաւոր չեն: Իսկ ով որ կուզի կարգաւ հին գրքերը, կը սովորի արաբերէն այբուբէնի այնպէս, ինչպէս այժմ սովորում են լատիններէնը:

Ոչ մի թերթ, նոյն իսկ կառավարական, չհամարձակեց պաշտպանել Հիւսէյնի Զահիդի մտքերը: Ընդհակառակը, մեծամասնութեան տրամադրութիւնը արտայայտելով՝ յայտնի թիւրք հրատարակալից Մամէդ Ալի թէ՛ֆիկը մարտ 5ի Գոլումում մի յօդածով իխտ յարձակում գործեց Զահիդի դէմ: Նա ընդգծեց, որ լատինական այբուբէնը չի սպառնում անկայմանօրէն յատկաբնութիւնը, միւս կողմից լատինական այբուբէնը չի ընդունւած ամբողջ Եւրոպայի կողմից: Չուզահեա լատիններէնի զոյրուիլուն ունի և սլաւոնական այբուբէնը, մասնաւորապէս Ռուսաստանում այդ այբուբէնի շնորհիւ դպրոցը մեծ յառաջիմութիւն է ունեցը: Արաբական այբուբէնը միակ յարաւորի պատճառը չէ թիւրքերոյ մարտնչութիւնի յետադիմութեան և միայն այբուբէնի փոփոխութիւնը չի տայ անմիջական բարձրացում: Եթէ արաբական այբուբէնը օտար է թիւրք լեզուի, բայց չէ որ լատինականը աւելի օտար է: Նման վերաբերումով թիւրքերիս մօտ սեփական ոչինչ չի կարելի գտնել: Եթէ միայն այն միտքը թէ այս ինչ բանը թիւրքական չէ հերիք է նրանից հրաժարելու համար, այդ ձևով թիւրքական ոչինչ չէր մնայ: Եթէ որ դարերի ընթացումը թէ Արեւելքի և թէ Արեւմուտքից ձեռք բերածներս մի կողմ ձգենք, ապա պիտի նետենք և բոլոր այն գրածքները, որոնք գրուել են ճազգային ուղիով: Միւս կողմից արաբական այբուբէնը դարձել է ազգային, թրքական, նա մտերիմ է թիւրք ազգին: Նա գեղեցիկ է, հեշտ է սղապուում

և ամէն տեսակէտից լատիններէնից լաւ է: Նրա արդարաբարութիւնը և ճերպամտութիւնը, ճիշտ է, պէտք ունին որոշ փոփոխութիւնների, բայց դրանից չպիտի եղարկուանել, որ արաբական այբուբէնից պէտք է հրաժարուել: Եօթ դարերի ընթացումը, բոլորովին մենակ, թիւրքերի իրենց մտքերը և դպաստները գրել են գրքերի մէջ և այդ գրքերը արժանի են խոր յարգանքի: Այդ գրական դանձնեցից հրաժարուել չի կարելի: Վերջնապէս, լատինական այբուբէնը ներմուծումը կը մնասի բնակչութեան ազգային գիտակցութեանը: Արդ, եղրակացնում էր Մամէդ-Ալի թէ՛ֆիկը, լատինական այբուբէնը հարկաւոր չէ թիւրքալային և արաբական այբուբէնից չպէտք է հրաժարուել:

Մարտ 6ին Հիւսէյնի Զահիդը պատասխանեց Մամէդ Ալի թէ՛ֆիկին: Նա ընդգծեց, որ թէ՛ֆիկը սխալուում է բերելով սլաւոնական այբուբէնի օրինակը, որովհետև սա դերթէ լատինական է: Արաբականը այլ է: Սլաւոնական այբուբէնն էլ կարելի էր յանձնարարել թիւրքերին, բայց գերադասելի է լատինականը, որովհետև սա աւելի է տարածում: Թէ՛ֆիկը ոչ մի ապացոյց չբերեց, որ արաբական այբուբէնը չէ պատճառը թրքական յետմանացութեան և որ լատինականով լուսաւորութիւնը չի տարածի: Հասակնալի է, որ հրաշքներ չեն լինում: Լատինական այբուբէնը մոզական ոյժ չունի, հարկաւոր է երկար աշխատել: Պարզ է, որ արդիւնքը լաւ կը լինի և կարճ ժամանակում: Ի հարկէ, լատիններէն այբուբէնը նոյնպէս օտար է, բայց արաբերէնից աւելի լաւ օտար է և արաբական օտար այբուբէնով չի կարելի հիմնադրել ճազգային գիտակցութեան պահպանումը: Ընդհանրապէս ազգ. գիտակցութիւն իսօքը պահպանողականների սիրելի երկն է յառաջիմութիւնը խնդրաւոր համար: Լատինական այբուբէնի բարոր չի նշանակում, թէ պէտք է ոչնչացնել հայրերի ստեղծագործութիւնները: Չպիտի մոռանալ որ հայրերի գործերը յայտնի են միայն 20-30 մարդու: Հաւանաբար թէ՛ֆիկը ևս չի կարողացել հայրերի գործերը: Եթէ միլիոնաւոր թիւրքերի մէջ կը գտնեն 6-7 ճազգար թիւրքեր, որոնք կը ցանկանան ուսանել հին գրութիւնները, ոչ ոք նրանց չի խանդարի: Գրքերը չարելի դրազարանում, սիրով նայել նրանց և այդ հիման վրա հրաժարուել լատիններէն այբուբէնից անուսպի ծիծաղելի է: Պէտք է միլիոններ մասին մտածել: Որպէսզի յառաջադիմենք և հաւասարենք Եւրոպային լատիններէն այբուբէնը անհրաժեշտ է: Այլ կերպ թիւրքալայնում լրիւ յառաջադիմութիւն չի լինի:

Շուքրիի ճառի շուրջ յառաջ եկած լրագրական վէճը աշխտագրեց լատիններէն այբուբէնի կողմնակիցներին, որոնք պիտեցին յատուկ խորհրդարանական յանձնաժողով ընտրելու անհրաժեշտութեան վրա՝ խնդրելու ուսումնասիրելու համար: Մարտ 12ին յանձնաժողովը ճնշիչ մեծամասնութեամբ դէմ արտայայտեց լատիններէն այբուբէնին: Պատճառաբանելով այդ որոշումը յանձնաժողովը նախաձեռնեց յայտնի թրքալայն Ռիֆատար հիմնեց մի շարք մասնատական գիտնականների կարծիքների վրա, իսկ յանձնաժողովը գեղեցաբար Ռուշէն էֆէնդին ատաջարից զգեցողութեան նկատումները (արաբական այբուբէնը լատինականից գեղեցիկ է): Միւս կողմից նոր կը թիւրքան նախարար Վասիֆի նախածնուութեամբ Պոլսում կաշայտու աչքի ընկնող մանկավարժների մի խորհրդակցութիւն, որտեղ մեծամասնութիւնը արտայայտեց յօգուտ արաբական այբուբէնի պահպանման, պայմանով որ վերանորոգւի նրա գրութեան ձևը:

Քննելով այդ որոշումը, Հիւսէյնի Զահիդը մարտ 15ին գրում էր Վասիֆին՝ թէ այն բան սպասել չէր կարելի, որովհետև ամէն մի նորոյթ դժուար է պատաստում թիւրքալայն, բայց լատիններէն այբուբէնի կողմնակիցները թիւրք պիտի մեծնայ և շուտ թէ ուշ պիտի ընդունի լատիններէն այբուբէնը: Զահիդը կըր-

կննց, որ այն մարդկանց կարծիքը, թէ արարական այբուբենը կարելի է բարեփոխել, սխալ է: Եթէ այդ փոփոխութիւնները կարելի լինէր անել, վաղուց արած կը լինէր: Միւս կողմից արարական այբուբենի փոփոխութիւնը թէ նշանակում չկուի դասականութիւն: Լեհերը, չեխերը և նոյն իսկ այնպիսի թուրանական ժողովուրդը, ինչպէս հունգարները վաղուց ընդունել են լատիններէն այբուբենը և խոշոր յատկանշութիւն են ցոյց տակ: Եւ չիքննել ինչու են փոխել: Թիւրքերը պէտք է հետեւեն երբայրական ֆիլիներէ և հունգարներէ որի տակին, որքան մշակութային տեսակէտից շատ յատկացել են և միայն այն պատճառով, որ ընդունել են լատիններէն այբուբենը, այլ ոչ թէ արարականը: Մարտ 19ին Հիւսէյին Զահիդի կարծիքին միացաւ «Կաթան» թերթը, որը նոյնպէս յանձնարարեց ինկուրիին ընդունել լատինական այբուբենը: Կառայարութիւնը պէտք է ելնի այն սկզբունքից, որ թրքական լեզուն մնում է նախկին լեզուն և այբուբենի փոփոխութիւնը չի կարող ազդել նոր վրաս: Լատինական այբուբենը պէտք է մտցնել զգոյշ և աստիճանաբար: Սկզբում պէտք է հրատարակել թերթերը, զրել փողոցի, խանութների անունները և այլն միաժամանակ արարական և լատիններէն այբուբեններով: Յետոյ կարելի է մտցնել դպրոցում, որտեղ նրա ուսուցումը դժուար չի լինի, որովհետև աշակերտները շատերը գիտեն արդէն որեւէ ստար լեզու:

Լատինական այբուբենի հակառակորդները չէին նկատում: Մասնաւորապէս «Կազմ» մարտի ընթացքին տեղ տակ ժողովրդականութիւն ունեցող լրագրող Ջէլալ Էսադի յօդածաշարից, որ սկզբում լատինական այբուբենի կողմնակից էր, բայց յետոյ փոխեց իր կարծիքը: Մարտ 19ի իր յօդածածում Էսադը գրում էր, թէ Թիւրքիայում գոյութիւն ունեցող այբուբենը դադարել է արարական լինելուց, նա աւելի լաւ է լատինականից, որ ինքը կարող է ապացուցանել ամէն մի վէճում որեւէ գիտնականի հետ: Արարական այբուբենի բարենորոգումների անցնալ անպարտութիւնը պէտք է փնտրել նրանում, որ ուղեցնել են վերացնել միանգամայն բոլոր պակասութիւնները, մինչդեռ այդ գործը պէտք է արւելք հետզհետէ: Թիւրքերը արարական այբուբենը կարծին թրքական: Այժմ չկայ մէկը, որ կարողանայ կարգաւ ճորդարի արարական զիրը: Արարներից անուած այբուբենը Թիւրքերը յարմարքրին իրենց լեզուն և թրքացրին, այսինքն դարձրին ազգային այբուբեն: Անհրաժեշտ է մայրն դրելու դնել ձայնաւորները, այնուհետև կը կարողացի հեշտութեամբ: Իացի այդ, արարականը աւելի զեղեցիկ է, համաչափ և հշտ է տղապան: Միակ պակասը ձայնաւորների փոքր քանակութիւնն է և ուղիղ քերականութեան բացակայութիւնը: այդ պատճառով է, որ Թիւրքը երեխաները սովորում են ֆրանսերէնը Թիւրքերէնից արագ: Պէտք է ուղղել այդ պակասութիւնները և թիւրք այբուբենը կունենայ իր արժանաւոր սեղը:

Միւս թերթերից լատիններէն այբուբենի դէմ գուրս եկաւ կղերական «Թէֆթի-էֆիեթա»-ը: Իր մարտ 13ի յօդածածում ան կրկնեց լատիններէն այբուբենի հակառակորդների գրածները և ընդգծեց, որ Արեւմուտեցի աւելի լաւ է փոխ անու մշ թէ լատիններէն այբուբեն, այլ ճարտարաբանութիւնը:

Մարտ 31ին Հիւսէյին Զահիդը գուրս եկաւ մի նոր յօդածածում, որտեղ պնդում էր, թէ լատիններէն այբուբենը անհրաժեշտութիւն է, իրականում Թիւրքերը այբուբեն չունեն, այն խոզի տատերը, որ կրչուում են արարական, չի կարելի այբուբենի կոչել: Բոլոր փորձերը ուղղել ներկայ այբուբենը ոչ մի հետևանք չեն ունենալ: Վերջում Զահիդը դիմեց կրթական գործադարին մի յայտարարութեամբ, որով առաջարկում էր այբուբենի հարցը լուծել աշխարհակալական օրէնքներից շուտ, հակառակ դէպքում ոչ մի բարենորոգում օգուտ չի բերի:

Այն որ փթթիհատական ընդդիմադիրները յանձին Հիւսէյին Զահիդի մի անգամից նախածնունդիւնը վերցրին իրենց ձեռքը, իրականում վարկարկեց բարենորոգումը: Հնարաւոր է, որ եթէ Հիւսէյին Զահիդը այդքան տաք կերպով չկազմէր լատիններէն այբուբենին, հարցը այլ կերպ կը դրւէր: Միւս կողմից Եուզբիին բացարձակ մեծակ թողնելով քեմալականներին կը դէմը կղերականների և յետադիականների շարքը: Այդ պատճառով որուշեց սկզբունքորէն լատիններէնի կողմնակից յայտարարել, բայց խնդիրը յետաձգել իրեն «անժամանակ»: Ի վերջոյ, ապրիլ 5ին «Քախիմ»-ի հեղիւրի թղթակիցը հարցրեց կրթական գործադար Վասիֆին՝ «Պիտի՞ ընդունել լատինական այբուբենը և ե՞րբ»: Նա պատասխանեց, թէ՛ «բուսուսութեան գործի յաւաքութեան համար անհրաժեշտ է փոփոխութիւնը կամ ուղղումը նոր այբուբենի: Կրթական գործադարութիւնը ուսումնասիրում է այդ խնդիրը: Իայց մինչև վերջական որոշում ընդունելը պէտք է խնդիրը ուսումնասիրել լրջօրէն: Մասնագէտները իրենց կարծիքները կարայայտեն և ուշադրութեամբ կը լսեն: Որպէսզի դրական ազդեանքեր ստացան, հարկաւոր է մի առ մասնաձեւ պատելը»:

Պիտոյ լրագրողները չբաւարարեցին Վասիֆի յայտարարութիւններով և դիմեցին Լամէթիին և նոյն իսկ Քէմալին: Լամէթը իր պատասխանը վերածեց կատակի և փաստօրէն ոչինչ չասաց: Քէմալը յայտարարեց, թէ ներկայիս նա լատինական այբուբենի ներմուծման կողմնակից չէ:

Իրանից անմիջապէս յետոյ այբուբենի խնդիրը նորեւ չբապարակ դրեց, երբ որ Հնդկաստանից վերադարձաւ Կարմիր Մահիկի պառոյճաւարութիւնը: Մարտի բարենորոգումների նախօրէին Հնդկաստան մեկնեց Կարմիր Մահիկի յատուկ մի առաքելութիւն նշխարի ժողովարարութեան համար: Այդ առաքելութեան նախագահ Ասալիոյ երեսփոխան հօջա Նասիխը Հնդկաստանից հեռագիր հեռագրի տեղեկացում էր, թէ մարտի բարենորոգումները հնդիկ մասնակալականների մէջ բարկութիւն են առաջ բերում Թիւրքերոյ դէմ և որ լատինական այբուբենի մասին թիւրքերը գրածները առաքելութիւնը ծանր դրութեան մէջ են դնում: Ապրիլ 5ին առաքելութիւնը վերադարձաւ Հնդկաստանից դատարաններու: Իրախիթ յայտարարեց լրագրողներին, թէ իրենց անյախողութեան վրաստանը պատճառը լատինական այբուբենի մասին եղած լրագրական արտայայտութիւններն են: Ապրիլ 11ին Իրախիթը նորից հանդէս եկաւ թերթերում, որտեղ առաջարկում էր Հիւսէյին Զահիդի նման լատինական այբուբենը պահանջող մարդկանց աքսորել Սուրիայ: Կրկնելով արարական այբուբենի ազգային բնոյթ կրելը, Իրախիթը մատնանշեց, որ ձայնորինս, պակասներով աւելի զժուար ճապարհական այբուբենը ունեցել է մշակութային տեսակէտից խոշոր յաջողութիւններ:

Խառիխի յայտարարութիւնները զայբացրին թիւրք մամուլը: «Միւստիկի» ապրիլ 11ին առաջարկեց Սուրուպ դրկել իրեն Իրախիթին՝ որպէսզի այնտեղ սովորի: Նրա բերած ձայնորինայի օրինակը տեղին չէ, որովհետև այնտեղ ձայնալուսնական ճապարհներէն հետ կար անաչլիբէնը, յետոյ ձայնորինան իր յատկանշութեան համար ունէր 50 տարի խաղաղութիւն, իսկ Թիւրքիային անհրաժեշտ է հասնել Եւրոպային մի քանի տարիներում: Վերջապէս, նաև ձայնորինայի 1826ի վերջից զարգացել է ուժեղ մի հոսանք մտցնող լատիններէնը: Նոյն իսկ ճապարհական ճեմարանը 8 հողիցոց յանձնաժողով է ընտրել այդ խնդրի զննութեան համար: «Միւստիկի»-ը շատ բան է արել, բայց նա չի ոչնչացրել Իրախիթի գլուխների նման գլուխները: Նոյն իսկ «Արշադ» չկարողացաւ թաղցնել նրա յայտարարել: Ապրիլ 13ին յայտնելով, որ տապալայ նման դէմ է լատինական այբուբենին, ընդգծում էր, որ ստեղ թէ անթոյալարեկի է լրագրական վեճը այբուբենի շուրջը միայն նրա հա-

մար, որ այդ կարող է վատ ազդել մասնետական ժողովուրդների դեպի թիւրքերի տասած գրգռումների վրա չի կարելի: Եթէ լատինական այբուբենը չի ընդունւած այժմ, դրա պատճառը այն է, որ փոքրամասնութիւնն է ուզում, Հայաստանը դէպքում, ոչ ոք չէր կարող խնայաբար թիւրքերին ընդունել այդ բարենորոգումը: Իրենց պատմութեան ընթացքին թիւրքերը բարենորոգումներ չեն մտցրել միայն աք պատճառով, որ վախնում էին, թէ ինչ կը մտածեն և կասեն յետամնաց, երկար քնով քնած մասնետականները: Թիւրքան դադարել է օտար հովիւների ետեւից դնացող հոտ լինելուց: Եւ այժմ դարձել է ինքը հովիւ: Քրտնիւնն էլ արձագանգեց Թաւրիսի յայտարարութիւններին, միայն արտայայտեց, թէ՛ պէ՛տք է Հաւշի աննել այդ մասնետական աշխարհը: Այս նիւթի մասին սկսեց մեծ վճէ և լատինական այբուբենի խնդրել մտազցեց: Պայթար, ընդդիմադրութեան դէմ, կուսակցութեան պատկառումը, փոխանակութեան դժարութիւնները և արտաքին բարդութիւնները (Մակդոնայի վերջնապիւր, վէճը Մուսուլի շուրջ) այնպիսի վիճակ ստեղծեցին, որ Հայաստանը չէր կրնար արժանանալ իր իրաւունքին այլ ևս չլուծեցին այդ խնդիրը: Այս հետեւց զրգական պատասմարութիւնը, որի դէմ պայքարելով անցաւ 1925 թիւր: Հետաքրքիր է, որ փնտնելով պատասմարութեան պատճառները՝ Թիւրքերը գրեցին, թէ Շէյխ Մախր խոստովանել է, որ լատինական այբուբենի շուրջ եղած դրոյշները Իրենց դերն են ունեցել պատասմարութեան մէջ, միւս հիմնական գործօնների կողքին:

Բայց պատասմարութիւնը ունեցաւ նաև իր օգուտը: Անկախութեան Դատարաններում պարբերց բնակչութեան ազապակող տարիութիւնը, որը օգտագործուում էր գանձագան մութ ուժերի կողմից: Վերջապէս, 1925ի աշնանը առանձին թիւրքերում ժամանակ առ ժամանակ երևացին նկատողութիւններ, որտեղ ի թիւս այլ միջոցներ լուսաւորութիւնը տարածելու համար մասնաշնչում է և լատինական այբուբենը: Մասնաւորապէս չէլիբեի պատասմարութիւնը փոխեց «Պրտամ» թիւրքի դիրքը, որը առաջ դէմ էր լատինական այբուբենին և 1925ի աշնանը նորից Հրապարակ հանեց խնդիրը: Իր 15 սեպտ. յօդուածում գրեց գրքերը և Թիւրքերը գիւղին մօտեցնելու խնդիրը և մասնանշնչ, որ այժմ այդ գրծում է և անել Թիւրքութեան պատճառով: Թրքական այբուբենը լատինականից թանգ է, Թրքականը աւելի արագ է փչանում, ծտոսակելով միայն երկու տարի: Ամէն երկու տարի թիւրք թիւրք պիտի վճարի 2500 լիւրա իր տասերի նորգուման համար: Եւ յիշեմ. 16ին «Պրտամ» վերադառնալով այդ հարցին նորից կրկնեց աւելի պարզ, որ լատինական այբուբենը անհրաժեշտութիւն է և որ արաբականով չի կարելի յառաջիմել:

Հիւրական մէճը լատինական այբուբենի մասին տեղի ունեցաւ 1926ի մարտին: Այդ ժամանակ կատաւարութիւնը պատրաստել էր նոր նամականիչների օրինակներ և լուրեր էին տարածուում, թէ նոր նամականիչների վրա պիտի գործածուի լատինները: Միւս կողմից մարտ 1ին յայտնի դարձաւ, որ մի խումբ արմատական երեսփոխաններ Քէմալին յատուկ յուշագիր են ներկայացրել լատինական այբուբեն մտցնելու մասին: Քէմալը այդ յուշագիրը զրկեց կրթական գործաւարին, որը նրա քննութիւնը յանձնեց ՀՀրատարակութիւններին և Թարգմանութիւնների Յանձնաժողովին: Շուտով յայտնի դարձաւ, որ յանձնաժողովի ղեկավարները՝ ուսուցչակետեր Չէքին և Վլիդը առաւարդիկ են սահմանափակել արաբերենի բարենորոգումով և Հրատարակ լատիններէնց: Այդ բանը ստիպեց լատիններին կողմնակիցներին հարցը նորից դնել ՀՀատարակական կարծիքը՝ քննութեան: Մարտ 10ին կիսապաշտօնական «Միլլիթիթ»-ում տպեց ուսուցիչ Միդ-Հատ Մադուլի յօդուածը, որը առաջարկում էր ընդունել լատիններն այբուբենը: Եւ այն օրը լատիններն այբուբենի անհրաժեշտութեան մասին յօդուածներ դուրս եկան

«Վազըթ»-ում և «Նիւ Սոն»-ում: Մարտ 12ին յօդուած լատիններէնի արտայայտեց և «Պրտամ»:

Այդ թիւրքերում մասնաշնչում էր, որ ներկայ թիւրք լեզուն դարձել է մի տեսակ իւրամական էպիտրոնտո և ոսկրացել է: Եւր, աշխարհական թիւրքերում համար կարեւոր նման է սպէրմտօսի վերացել է, այստեղից՝ և լեզուի մաքրումը և լատինական այբուբենի անհրաժեշտութիւնը: Յայտնի է, որ առաջին շրթախալիֆաների ժամանակ եղել են, օրինակ, փորձեր Արևմուտքից ընդօրինակելու օրացոյցը: Դուրանի մէջ մասնետականներին յանձնարարուած է զիտութեան համար գնալ մինչև իսկ Չիքոստան, Հետևաբար, կրօնական տեսակէտից ոչ մի արդէք չկայ լատինական այբուբենն ընդունելու: Լատինական այբուբենը Հակապատկառութեան արտաբերելու համեմատութեամբ մեքենագրութեան և Հրատարակչութեան մէջ: Արաբերէն այբուբենի դժարութեան պատճառով թիւրք գրաչարը շարել է սովորում տաս տարում: Թիւրքերը կցրակացնում էին, որ լատիններէն այբուբենը պէտք է ընդունել, բայց բարենորոգումը կատարել գրոյշ և մաս առ մաս:

Լատիններէն այբուբենի Հակապաղորդների անուանից հրապարակ եկաւ նորից «Աղշամ»-ը: Մարտ 11ի իր յօդուածում նա նորից կրկնեց իր մտքերը, սակայն թէ ձապոնիան և «Քոլլատոյի» և Կոլիու. Խուսառտանը մեծ յառաջիմութիւն են ցոյց տալիս, թէ և նրանք էլ լատիններէն այբուբեն չունեն: Տեսնելով, որ այս անգամ լատիններէն այբուբենի կողմնակիցները մեծամասնութիւն են կազմում՝ «Աղշամ»-ը անհամափակեց միայն խորհուրդով՝ փորձել բարենորոգել արաբական այբուբենը և միայն ծայրահեղ կարեւոր դէպքում ընդունել ուրիշ, բայց ոչ լատինական այբուբենը, այլ Հուղապարակներ, որը աւելի մօտ է թիւրքերին: «Աղշամ»-ին այս անգամ միացաւ «Շիւհուրիթ»-ը: Մարտ 12ի յօդուածում այդ թիւրքի խմբագիր Նօնուս Լատին կեդուար կերպով յայտարարեց, թէ ինքը կողմնակից է լատիններէն այբուբենին, բայց չպէտք է շտապել: Ազգութեանը այդ տեսակէտից շտապել: Հաւանաբար, դրա պատասխանատուն մեծամասնական իրաւակալուն էր Բոլորովին անթիլլատրիկ է, որ մի որեւէ օտար ազգ (Թաիսնիցի ակնարկ Ռուսաստանին): Խառնուի ուրիշ ժողովուրդի մշակութային գործերին: Անհրաժեշտ է այբուբենի խնդիրը լուծել ստափճանաբար, առանց որ և է ճնշման դրսից և եթէ որոշել հրատարակ արաբական այբուբենի, պէտք է ընդունել ոչ թէ Փրանսական, այլ Հուղապարակայն այբուբենը: Այդ էլ յիշեմ առիթ տեղե «Միլլիթիթ»-ին մի երկրորդ յօդուածով հրապարակ զայ յօդուած լատիններէն այբուբենին: Յօդուածում մասնաշնչում էր, որ լատիններէնի դէմ արտայայտուում են փոքր թիւրք մտաւորականները՝ ղեկավարելով ևսասիրական գրացումներով, բայց նրանք պէտք է մտածեն մեծամասնութեան և զաւրջ սերունդների մասին: Անհրաժեշտ է փութով կազմակերպել Համապատասխան յանձնաժողով և անցնել դրոյշ: Իր եզրակացութեան մէջ թիւրքը մասնաշնչում էր Բազուրի Թրքագիտական Համագումարի որոշումների վրա՝ լատինական այբուբենը մտցնել բոլոր խորհրդային արեւելեան Հանրապետութիւններում, որ իր Հերթին մեծ նշանակութիւն ունի այդ խնդրի լուծման համար Թիւրքիայում: Միւս թիւրքերէնց «Վազըթ»-ը մարտ 13ին գրեց, որ Բազուրի Համագումարը լատինական այբուբենն ընդունել է բոլոր խորհրդային թիւրքերի համար և թիւրքերան, իբրև կամուրջը Եւրոպայի և ասիական թիւրքերի միջև, պէտք է հետեւի այդ օրինակին: Գրադէպները երկրում այժմ մի քանի տեղուս են և լատինական այբուբենն ընդունումը դժուար չէ, բայց բարենորոգումը պէտք է անցկացնել աստիճանաբար և գրոյշ: «Նալը» թիւրքը մարտ 13ին նոյնպէս արտայայտեց բարենորոգման դանդաղ թափի և յանձնաժողովի ստեղծման օգտին: Մարտ 14ին «Նիւ Սոն»-ը պահանջեց անմիջապէս անցնել

բարենորոգման, սակայն թէ՛ հարցի հրահրման պատճառով հրատարակչական գործի տալանապէս օկուելու և հրատարակութիւնները չգիտնելու պէ՛տք է տպել մասնաւորապէս դասագրքերը, արարքերն թէ՛ լատիներէն այբուբենով: Այնպէս որ քաղաքական գործիչներէն մարտ Այնի արտայայտուելն երեւոյթիաններ Եւրոքի Գեան, այժման ներքին գործող գործակալը և Հասան Ֆէհմին ՝ մի աղբեցիկ չօջա, որ յայտնի է իր արմատականութեամբ: Երկուսն էլ յայտարարեցին, թէ լատիներէնի խանդավառ կողմնակիցներ են, բայց ընդգծեցին, որ էնկիւրբում խոզիրը չի լուծւած: Իր հերթին, կրթական գործակալը Ազգ. Մեծ Ժողովում մարտ 20ին պարզօրէն արտայայտեց յօղուտ լատիներէն այբուբենի, բայց աւելցրեց, որ լատիներէն այբուբենը կարելի է ընդունել յատուկ յանձնաժողովի գրական որոշումից յետոյ: Յանձնաժողովը շուտով պիտի հրաւիրուի:

Այդ ելոյթը ստիպեց լատիներէն այբուբենի հակառակորդներին լուել: Մասնաւորապէս Եոնուտ Կատին մարտ 20ի ճշումհուրիէթում շտապեց յայտարարել, թէ ինքը անձամբ լատիներէն այբուբենին վերաբերուած է նպաստաւոր ձևով, բայց առաջին նման այն կարծիքին է, որ բարենորոգումը պէտք է մտցնել աստիճանաբար և որ լատիներէն այբուբենը պէտք է փոխարինի արաբականին ճիշայն յաջորդ սերունդում: Կասկած չկայ, որ հակառակորդների ճշմամայնութիւնը՝ հարկադրական էր: Մասնաւորապէս այդ երևում է նրանց, որ նրանց հայեանքները արտայայտող թերթերը բացայայտ հանցոյթով ընդգծեցին, որ Բագուի համագումարի թիւրք պատգամաւորները սահմանափակել են միայն ընդհանուր սեռական դատողութիւն-

ներով և լատիներէն այբուբենի մտցնելու գործնական խնդիրների ճշմութեանը չեն մասնակցել:

Մայիսի սկզբին թիւրք ներկայացուցիչները վերագարման Բագուին: Համագումարին ներկայ գտնուող գերման արոֆեսոր-թրքապետ Մենցելը մայիս 6ին Պոլսոյ խորհրդային ընդհանուր հիւպատոսի չէնքում մի փեկուցում կարդաց համագումարի աշխատանքների մասին, որտեղ ընդգծեց համագումարի որոշումների հակառակական նշանակութիւնը լատինական այբուբենն ընդունելու հարցի համար: Ի պատասխան գրան լատ. այբուբենի հակառակորդները առաջնորդութեամբ արոֆեսոր Գէֆրուլու Չաղէ Ֆուատի, միւս օրն իսկ ճեղքահամար տեղաւորեցին լուծարարի ոչ պակաս յայտնի արոֆ. թրքապետ Գէմբոսոյ Չուլտանի յօդւածը, որ խիստ հակառակ էր արտայայտուած լատիներէն այբուբենի ընդունման թիւրքերի կողմից: Միտմամանակ թիւրք լրագրողները հետ ունեցած իր գրոյցում այդ արոֆէտորը յայտարարեց, թէ թիւրքերը ստալ պէտք է բարենորոգեն իրենց լեզուն, ստեղծեն լեզուի միութիւն և միայն դրանից յետոյ մտածեն լատիներէն այբուբենի մասին: Ներկայի համար արոֆեսորը յանձնարարեց ուղղագրութեան և արարքերի բարենորոգում:

Ընդհանուր առմամբ պարզեց, որ լատիներէն այբուբենի հակառակորդները փոքրամասնութեան մէջ մնացին և որ նրանց հիմնարումը քննադատութեան չի դիմանում: Բայց նրանց յաջողեց համոզել Գէմբոսին խնդրի մանրակրկիտ ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը և այդ պատճառով բարենորոգման գործադրութիւնը յետաձգեց:

(Շարունակելի)

# ՖՐԱՆՍԱՅԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Փրեւուժապէս կը կարծուի որ Ֆրանսայի բունձ անհայտ թաղաքականութիւնը զէպի խորհրդային իշխանութիւնը, արդիւնք է սնոր ունեցած քաղաքական, ընկերային և ակադեմիականութեան: Եւ կամ, պարզեիկ կատարութեան թիւնամի վերաբերումը յատալ կուզայ Ֆրանսայի դրամատորական աշխարհ մէջ գրաւած բարձր դիրքը: Այս և նման տեսակի ենթադրութիւնները կարող են, գուցէ, պատճառներէն մէկը ըլլալ, բայց ոչ էականը:

Պորտրային կատարութիւնը շար գիւրութեամբ բարեկամական համաձայնագրերնր, առևտրական դաշնագրերնր և քաղաքական դեմոն վրա՝ ոչ-յարձակողական դաշնագրերնր կնքեց բոլորովին նման ընկերային-տնտեսական ու դաղափարական կառուցւածք ունեցող պետութիւններու լ հետ, ինչպէս Գերմանիոյ, Թիւրքիոյ կամ Փարիստական Իտալիոյ հետ: Այս վերջիններն ալ ձեռք մեկնեցին պոլլեիկիներու՝ բնու չը-խորշելով անոնց տնտեսական կամ ընկերային ըմբռնումներէն: Պորտրոյ. Ռուսաստանը շահու և քաղաքական հաշիւներու աղբիւր էր և ջանացին օգուել այդ աղբիւրէն:

Եւ եթէ Անգլիան ու Ֆրանսան ալ ցարդ չկրցան սնոր կապեր հաստատել խորհրդային իշխանութեան հետ, պատճառը այն չէ, որ անոնք Իտալիայէն կամ Գերմանիայէն տարրեր նկարագրի ունին, այլ որովհետեւ անոնց շահը չի թոյլատրեր: Զարակական Ռուսիոյ ունեցած դրամական պարտքերը այս երկու պետութիւններուն կը հասնեն հսկայ գումարներու, որոնց գոյութիւնը և իրական կողմը պոլլեիկիները մինչև այսօր կը յամարին անգիտանալ: Ահա Անգլիոյ կամ Ֆրանսայի ճանհասկացողութեանը՝ Հիմնական պատճառը խորհրդային իշխանութեան հետ:

Անգլեւտուական մերձեցումի փորձը և ապա ձախողումը իմ այսօրայն նիւթէն գուրա է. ես համառօտ կերպով պիտի անդրադառնամ միայն Ֆրանսեւպոլլեիկ օրն անակցութիւններու վրա, որոնք անմիջականօրէն կապւած էին Ռուսիոյ նախկին պարտքերու խնդրին:

1924 հոկտ. 15ին Ֆրանսական կատարութիւնը պաշտօնապէս կը ճանչնար խորհրդային իշխանութիւնը՝ իրական աէրը ամբողջ Ռուսիոյ: Ֆրանսացիները այն յոյսը ունէին որ հին պարտքերու խնդրը կարելի պիտի ըլլար հետադային փոխադարձ գիւրումներով կարգադրել: Բայց ապագայ թանակցութիւնները եկան ճիշտ հակառակը հաստատելու:

Մոսկուայի ներկայացուցիչները մինչև վերջն ալ անդրուելի մնացին իրենց խօսքերու վրա և ոչ մէկ պայմանաւ չուզեցին ընդունել ցարակալին հին պարտքերը: Ետն իսկ սկզբունքով ալ չմտնեցան այդ հարցի ճշմութեանը:

Իսկ Ֆրանսական կատարութիւնը, առանց մըտնելու պարտքերու հարցի վիճարանութեան մէջ, այդ ստեղծները ուղեց մերձեցում մը ստեղծել խորհրդային իշխանութեան հետ, գուտ տնտեսական գետնի վրա: Աւելորդ է ըսել որ ունէ մէկ առաջարկ կամ փորձ այդ ուղղութեամբ պիտի դնէր մեծ ընդունելութիւն պոլլեիկ պատգարկութեան մօտ: Այս հիման վրա ալ խորհրդակցութիւնները սկսան 1925ին և տեւեցին մինչև 1927 թեականը: Ֆրանսայի կողմէ թանակցութիւններուն կը մասնակցէին աբ Մոնդը, Տօւէ, Պաթիտ, Ֆրիլիպ Պլեթրօ, Ալբրիւզ և Շալալը: Պորտրդային Ռուսիոյ դրամները շուրջ կը քաշին և պէտք կար դրամի: Անմիջական արտաքին օժանդակութիւն մը մեծ դեր պիտի կատարէր հնգամեակի մեծ

գումարներու կարտող ծրագրերնրը սկսելու համար ինչպէս միշտ, այս անգամ ալ պոլշեւիկները դիմեցին արեւելեան խորամանկութեան:

1927 սեպտ. 21ին խորհրդային ներկայացուցիչները յայտնեցին, թէ սկզբունքով կուզեն ճանաչուլ հին պարտքերը, սակայն, իբրև նախապայման Փրանսացիներն ալ պիտի ընդունեն իրենց առաջարկները: Խորհրդային իշխանութիւնը յանձն կառնէր 62 տարեայ ընթացքին, իւրաքանչիւր տարի 60 միլիոն ոսկի Փրանսէ վճարել Ծրանսային, այսինքն, տարեկան 300 միլիոն ֆրանք օրւայ սակով: Առաջարկ ըրած էին նաև որ Խուսիայէն բաժնւած նոր պետութիւններն ալ պիտի ստանանէին հին պարտքերու մէկ մասը, որով, իրենք պիտի վճարէին 70%ը, իսկ 30%՝ միւս ազգերը: Մինչդեռ, պոլշեւիկները իրիկայի, Ծորաթի և Մոսկուայի դաշնագրերով ընդունած էին, որ այդ պետութիւնները բացարձակապէս զերծ կը մնան ռուսական հին պարտքերէ:

Տեսականօրէն յանձնառու ըլլալով հին պարտքերու մէկ մասը իրենց վրա վերցնելու, պոլշեւիկները կը պահանջէին, որ իրենց ապագայ վճարումներու փոխարէն Փրանսական կառավարութիւնը ապահովէ, երեք տարեկ տամանակամիջոցին, 225 միլիոնտարի վարկ մը (մաս 8 միլիոն ֆրանք) վճարելի 5 կամ 7 տարի յետոյ: Սոյն վարկին 150 միլիոն տարարով պիտի գրծւէր Ծրանսայի մէջ ճարտարարեւտական գործիքներ, մեքենաներ և ապրանքներ, իսկ 75 միլիոնը գլխի ըստացւէր կանխիկ դրամով: Աբիշ խօսքով, խորհրդային իշխանութիւնը յանձն կառնէր Փրանսացիներուն վճարել ցարական պարտքերը... Փրանսական դրամով: Աւ զեւ աւելին. Ծրանսային փոխ առած գումարէն 75 միլիոն տարարով դանդաղ մեքենաներ պիտի զնէին... Ծրանսայի մտցակից Իտալիայէն: Եւ գործնայի չէ, որ բանակցութիւնները փակւեցան առանց արդիւնքի:

1930ին, պոլշեւիկեան հնգամեակի ապրանքները կը ծախւէին օտար Հրապարակներու վրա — ունէ զներով և ունէ պայմաններով, որովհետև խորհրդային իշխանութիւնը խոշոր գումարներ ըրած էր Գերմանիայ և Միացեալ Նահանգներու մէջ:

Մասնավճարներու օրերը քանի կը մտնեային, ռուսական արտածումը այնքան կ'աւելանար: Եւսու. վնասի հարց չկար, կարևորը օտար Հրապարակէն դրամ հանգեին էր: Այսպէս Եւրոպան ողողեցաւ ռուսական ցորենով, փայտով, երկաթով, սնունդի վերաբերեալ մթերքներով՝ աւելցնելով, ի հարկէ, ստեղծւած արնտեսական տաղանայը:

Փրանսան ալ անմասն չմնաց այդ արշաւանքէն: Ապրանքներու և ցորենի խուժումը մեծ իրաւացեամ և դժգոհութիւն պատճառէր Փրանսացի վաճառականներուն և Հողագործներուն, և Փարիզի կառավարութիւնը չէր կրնար անտարբեր մնալ այս նոր կացութեան առջև: Ան դիմեց մաքսապաշտպան քաղաքականոնութեան, առաջըր աւելնելու և պարզապէս արդիւնքի Համար պոլշեւիկեան ապրանքներու մուտքը: Եւ հակառակ խորհրդային դեսպանի և առևտրական ներկայացուցիչներու, մինչև վերջ մնաց անդրեւելի:

Հակառակ այս պայքարի, անցեալ տարի, կարգ մը Փրանսացի երեսփոխաններ նորէն վտարեցին զետին պատրաստել Փրանսառուսական համաձայնութեան համար: Այս անգամ ևս, պոլշեւիկները խանդավառւած, նշանակեցին իրենց ներկայացուցիչները, որոնք պահան մեծ ապօպրանքներով Հրապարակել Փրանսական արդիւնաբերողները: Բայց այս փորձն ալ գործնական ոչ մէկ արդիւնք ունեցաւ, և հարցը նորէն փոխուեցաւ նախորդներու պէս: Պատճառը այն էր, որ պոլշեւիկները դրամ վճարելու կարողութիւն չունէին և կուզէին օգտուիլ գրամատրական աշխարհին մէջ տիրող գործաւոր կայունութենէն: Անպտուղ անցաւ և խուժ մը Փրանսացի դրամատէրերու ճիգերը կազմակերպւելու:

Ռուսաստանի տնտեսական հարստութիւնները շահագործելու համար. ոչ խոշոր գումարներ տրամադրող Փրանսացիներ գտնուեցան, ոչ ալ, խորհրդային ներկայացուցիչները բաշխութեցին. առանց փնտրածը դրամն էր և ոչ թէ Փրանսացիներու առջև շահաստաններ բանալը:

Պահ մը Փրանսական մամուլի մէջ տարածախոթութիւններ ալ չըլին առին, թէ առևտրական դիմակի տակ Փրանսական պոլշեւիկները զաղաքակալ ու տնտեսական դաշնագիր մը կազմելու վրա է, բայց հազիւ լուրը տարածուեցաւ, թուան պայքար մը բացուեցաւ խորհրդային իշխանութեան դէմ: Պայքարի արդիւնքը այն եղաւ որ օրւայ կառավարութիւնը, առևտրական նախարար Պ. Մօլլէնի միջոցաւ, յայտարարեց, թէ «Փրանսական կառավարութիւնը կը մնայ այն կէտի վրա, ուր հասած էր 1927ին, այսինքն, Ծրանսայի կրնար Հրաժարիլ իր նախկին անձեւիքներէն, որ Փրանսացի ժողովուրդի նախադրութիւնը կը կազմեն, և յետ այսու կառավարութիւնը ոչ մէկ փոխառուութիւն և պետական վարկ կը բանայ խորհրդային կառավարութեան:

Արդարև, 1931 տարւայ վերջերը, Ծրանսայի արտաքին գործերու նախարարը՝ պ. Պրիան զաղտագէտ կուզէր Հող պատրաստել երկրու երկիրներու փոխադարձ մերձեցման համար: Պրիանը կաշխատէր քաղաքական առաւելութիւններ ձեռք ձգել յատկապէս արեւելեան ճակատներու վրա: Խորհրդային դեսպան Տովկուշևսկիի և Ծրանսայի առևտրական ներկայացուցիչներու միջև բանակցութիւնները վերսկսան, իսկ Պրիան շատ զաղտուկ կերպով տեղեկ էր պահէր արեւելեան իր դաշնակիցները՝ Լեհաստանն և Ռուսաստանը: Մտկան ալ իր կարգին ամէն ջանք չէր խնայեր գէթ այս անգամ առիթ ձեռք չ'անելու համար, որովհետև ունէ կերպով կնքւած դաշնագիր մը կուլած էր զորացնելու Ռուսոյ ելեմտական կացութիւնը և քաղաքական ազդեցութիւնը արտասահմանի մէջ:

Բայց Փրանսական Հանրային կարծիքը այս անգամ ալ դէմ դուրս եկաւ. ինչո՞ւ: Որովհետև հին պարտքերու տէրերը գոհացում չէին ստանար: Գիշ վարը դրամ ցուցակէն մանրամասն պիտի տեսնեք թէ ինչքան մեծ գումարներ յատկացւած էին հին Ռուսոյ մէջ երկաթուղիներու շինութեան, ճարտարապետական բազմաթիւ գործարաններու, Հանրային ձեռնարկներու համար: Ծրանսայի դրամատէրներն ու հաստարակութիւնը ըլլալ փոխառութեան ձև տակ, ըլլալ բաժնետիրական դրութեամբ, մասնակցած են առատօրէն: Ասոնցմէ զատ կան նաև Փրանսական պետական զանձէն փոխ տրւած դրամները՝ ուղղակի ցարական կայսրութեան զանձին յատկացւած: Ծրանսայի Հանրային կարծիքը չէր կրնար ընդունել Փրանսա-խորհրդային ունէ համաձայնութիւնը տանակ այս պարտքերու խոշոր կարգադրութեան, մասնակցող որ ամենքը լաւ հասկցած էին, որ Խորհրդային Ռուսիան այլևս զոյգ է իրենց վաճառականութեան առջև, ուրեքին ինչով օգտակար պիտի ըլլար այդ համաձայնութիւնը: Մինչդեռ և թէ համաձայնութիւն կնքէր, Ծրանսան ստիպւած ռուսական քարիւղ, փայտ, ցորեն, երկաթ կամ լուրջ պիտի զնէր, դժգոհ ձգելով նախ Փրանսացի երկրագործը, ինչոյ Փրանսայի բարեկամ պետութիւնները, ինչպէս Նորվեգիան, Սպանիան, Մեքսիկան, Արժանութիւնը են: Այս երկիրները՝ զրկելով Ծրանսայ պարանքներ արտածելու կարելիութենէն, իրենց կարգին պիտի դադարեցնէին գումարները Փրանսական արարաններուն, ինչպէս խմբէր, մետաղաբեղմնի, հիւսածեղէնի, զարդեղէնի, անուշահոտութիւններու և այլն: Եւսուողը պիտի լինէին պոլշեւիկները:

Թէ Ծրանսայի պահանջները ինչ խոշոր թիւ կը կազմեն, ցոյց կը տայ հետեւեալ ցուցակը, որ պատրաստւած է Փրանսա-խորհրդային 1925-27թ. բանակցութիւններու ընթացքին:

ՌՈՒՍՈՅ ՊԱՐՏԲԸ ՖՐԱՆՍԱՅԻՆ

Ա. — ՊԵՏԱԿԱՆ ՓՈՒՍԱՌՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՊԹԵՐ ԵՒ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԲԱՃՆԵՏՈՄՍԵՐ

Փոխառութեան գումարը ( 1.000 ֆրանք )	Վճարելի տարի	Տրամադրված վեճ գումարը յայտնում ( 1.000 ֆրանք )	ընդհ. գումարը ֆրանսական պահանջին
5% 1822	( 6.001.030 L )	—	33-937
5% 1864 եւ 1868	( 200.000.000 R )	60	305.1
5% 1906	2.250.000	40	886-722
4 1/2 % 1909	1.400.000	40	910-824,5
4% 1867	300.000	84	}
4% 1869	277.750	82	
4% 1880 60 էմիսիոն	600.000	81	220-107
Գոնս. 4% 10 սերի 1889	700.000	81	}
.. 4% 20 սերի 1889	1.241.000	81	
.. 4% 30 սերի 1890	820.000	81	
4% 1889	500.000	81	407-785,5
4% 1890 20 էմիսիոն	300.000	80	}
4% 1890 30 ..	300.000	81	
4% 1890 40 ..	41.764	90	404-836,5
4% 1880 50 ..	178-07,5	81	}
4% 1894 00 ..	454.000	81	
Ռամբ Ինիֆիլե 4% (Սերի 1-112)	1.120.000	—	115-282
4% 1901	424.000	—	214-129
3 1/2 % 1894	400.000	81	152-810
8% 1891	500.000	81	296-373
8% 1894	166.500	79	331-396,5
8% 1896	400.000	—	}
Պանք Կոլլեա	( 872.765.200 R )	—	
.. Փեյզան	266.667	55 1/2	357-377,5
Տոնեյց 4% 1893	27.758	65	215-110,4
Հինսք Վիթեպա 4% 1894	( 8.028.240 L )	57	236-681
Կոնսոլ-Կոնսոլ 4% սերի B.	( 142.157.000 R.M )	85 1/2	13-732
— — — 4% 1894	28-283,5	81-	20-325
Ռրել Կրեպի 4% Սերի B. 1889	( 50.117.000 H.M )	62	61-903,75
Ռիկա-Տվիսե 4% 1894	38-037	42	8-807,5
Կրան շրմե-տը-ֆեր	( 35.000.000 R )	75	15-229
Թրանսպիկա 3%	222.605	70	9-133
.. 4% 1880	27.440	68	3-840
			73-897,5
			5-707,5

Գումարը ոսկի ֆրանք

7.144.883-750

Բ. — ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՓՈՒՍԱՌՈՒԹԻՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՌՐՈՒԹԻՒՆՍԵՐ

Ազգերման 4% 1913		81	14-261,5
Ալթայ 4 1/2 % 1912	152.000		125-483
Անպրանջրման 4 1/2 % 1913			61-887
Մեր Կուար 4 1/2 % 1913			145-256,5
Մակու-Բիլեվ-Վորոնեժ 4 1/2 % 1903	47.000	51	40-140,5
Մակու-Վինոս-Ռիպպինս 4% 1903	68-143	51	26-090,5
Նորս-Տոնեյց 4 1/2 % 1906	234-293	81	200-404
Նորս-Կար Ռարալ 4 1/2 % 1912	61.000		53-829
Վեպ-Ռարալ 4 1/2 %	89-309		77-403,5
Ռիպպան-Ռիպպինս 4% 1903	95.000	60	68-120,5
Ռիպպան-Ռարալ 4 1/2 % 1908	( 9.628.750 R )	38	21-834
Սեմեյեյեյե 4 1/2 % 1913			102-723,5
Սիտ-Կար 4 1/2 % 1908	51-818,5	44	42-244
Վոլկա-Պուկուլմա 4 1/2 % 1908	34-920	77	40-934
Վոլկա-Պուկուլմա 4% 1910	101.200	76	75-838
Թորիս 5% 1913			28-359
Գոյնուկինո 4 1/2 % 1913			30-826
Ռեիւնի 4 1/2 % 1914			534-871,5

Գումարը ոսկի ֆրանք

1-086-706-000

Գումարը ոսկի ֆրանք

8-831-589-750

Բազադրեալ տակսը 1918-1927 ք-ականը

4-847-306-000

Ղևկանուր գումարը գրամազլիսի եւ տակսի

13-048-895-750

Գ. — ԶԱՆԱԶԱՆՆԵՐ

Զանազան փոխառութիւններ

31-719

Գանձատուներ

90-092

Պատերազմական փոխառութիւն

69-900

Գումարը (առանց տակսի)

191-711-000

Պարտի ամբողջական գումարը ոսկի ֆրանք

13-840-806-750

Այս ցուցակի մէջ ամփոփւած պարտքէն զատ՝ կան նաև հետեւեալ առկախ հաշիւները.

Ա.— Ռուսական դրամատիրական, ճարտարարեստական արդիւնաբերական ընկերութիւններու մասնաւոր փոխառութիւնները և անոնց հրապարակ հանած բաժնետոմսներն ու պարտաթղթերը: Այս բոլորին զուգարը Ֆրանսայի մէջ կը գնահատուի մօտ 2-500 միլիոն ոսկի Փրանքը:

Բ.— Ճրանակապատակներու ունեցած անշարժ և շարժուն հարստութիւնները և կալածանքներ՝ դրաււած խորհրդային իշխանութեան կողմէ պոլշեիկեան յիշաւորներու մանրակապէս յետոյ: Ասոնց արժէքն ալ մօտաւորապէս կը գնահատուի 3-000 միլիոն ոսկի Փրանքը:

Գ.— Ճրանակապատակներու գանձի պահանջը՝ ուսու պետական գանձէն մօտ 5-000 միլիոն ոսկի Փր.: Ամփոփելով պարտքերու զուգարը և վերածելով տողարի կոնսոնանք հետեւեալ աղբիւնքը.

Ա.— Պետական երաշխաւորութեամբ կատարւած փոխառութիւնները 13-840-607-000Փր.—2-768-000-000 տողար:

Բ.— Ռուսոյ մէջ մնացած հարստութիւններու արժէքը գնահատուած 10-500-000-000 Փր.—2-100-000-000 տողար: Գումար՝ 4-868-000-000 տողար:

Ան լուրջ կացութիւն մը որու առաջ պարտուոր է մտածելու Փրանսական ունէ կառավարութիւն մը բանակցութիւնները սկսելէ առաջ: Իսկ միւս կողմէն՝ պոլշեիկները շափազանց պաղարիւն են և կաշխատին ուրիշ կողմերէ դրամ քաշել: Ամերիկայէն սպառիկ քրաքրաքնք արին և փոխարէնը երեք տարի յետոյ ցրենի դինը կտորեցին՝ վնասելով Ամերիկայի հողագործներուն: Իրութիւնը նոյնն է միւս երկիրներու հանդէպ:

Կերմախան ևս, այսօր ինկած է անելի մէջ: Ոչ դրամագլուխը կարող է գանձել խորհրդային իշխանութեան և ոչ ալ տոկոսները: Անգլիան, չկարողադրած հին պարտքերու հաշիւները, առ այժմ արամադիր չէ սամբիւմ մը վճարելու պոլշեիկներուն:

Հոս տեղն է յիշելու Պեճիկոյի նախկին վարչապետ պ. Թէնիզի խօսքերը, թէ շէյն բոլոր դրամական օժանդակութիւնները որ կը տրուին Ռորհրդային Ռուսոյ գանապան անձններու և ձեռքու տակ, պատճառ պիտի ըլլան ամառանելու խորհրդային կարգերը Ռուսոյ մէջ, քաջախիբելու պոլշեիկեան պրօպագանդը ար-

տասահմանի մէջ և վերջապէս, նեցուկ դառնալու պոլշեիկեան Ռուսոյ ներկայ տնտեսական և քաղաքական կացութեանը:

Բացայայտ է որ պոլշեիկները չեն կարող ոչ հինի և ոչ ալ նորի հաշտոյն դրամ վճարել: Անոր ելեմտական հաշիւները շատնոց յիշած է պարտքերով: Ասոնց մտնելու այդ հաշիւներէ քննութեան մէջ, անցողակի ակնարկ մ'իսկ քառական է տեսնելու համար պոլշեիկեան դրամի անհոյստ ծանր տառեալները:

Այսպէս, Գոսպանքի (Ռորհրդ. Պետական Դրամատունը) հնչուն ոսկիի պահեստը կարելի է շափել ըրութի ներկայ գնէն որը գնահատուած արժէքի հարիւ 7 տոկոսն է: Գոսպանքը մէկ ըրութին դինը 13 Փրանք որոշած էր, մինչդեռ մէկ ըրութին մէկ Փրանքէն ալ աւելի վար կը ծախուի օտար երկիրներու մէջ: Պատճառը այն է, որ հնչուն ոսկին օրէ օր կը պակսի Ռուսոյ մէջ՝ ձգելով ըրութի արժէքը:

Ռորհրդային Ռուսոյ ոսկի այլ գրեթէ չունին արտածելիք և ոսկիի արտադրութիւնն ալ հետզհետէ կը նստի: Այս մասին փոքրիկ քաղաքի մը տարու համար յիշեմ հետեւեալ վիճակագրութեան արդիւնքը:

1928էն մինչև 1931ի կէսերը՝ այսինքն, երեք և կէս տարւայ մէջ մօտ 200 միլիոն ըրութի ոսկի հաւաքուած է անցերէն, մինչդեռ այդ միւսնոյն ժամանակամիջոցին 300 միլիոն ըրութի արժողութեամբ ոսկի արտարւած է արտասահման:

Միւս կողմէ ալ Ռուսոյ մէջ թուղթ դրամներու գանձատուներու շրջաբերութիւնը օրէ օր կաւելնայ հակառակ պոլշեիկ իշխանութեան ձեռք առած միջոցներու:

Հետեւեալ թւանշանները ցոյց պիտի տան որ պանք-իթերու քանակը մեծ համեմատութեամբ կը շատնայ տանց ոչ մէկ երաշխաւորութեան:

1 Յուլ. 1930ին	միլիոն ըր.	2-535,2
1 Յուլ. 1931ին	միլիոն ըր.	4-026,7
1 Նոյեմ. 1931ին	միլիոն ըր.	5-039,0

Պարզ կը տեսնուի, որ տարւէ տարի, կը կրկնապատուի թուղթ դրամներու տպագրութիւնը և, հետեւաբար նաև, դրամի արժէքագրիւմը: Այսպիսի պայմաններու մէջ Ֆրանսայի դրամական պահանջը խորհրդային իշխանութեան կը մնայ միշտ անոյծ և ճշտայոյց վիճակի մէջ:

# Թ Ո Ւ Ր Ք Ի Ո Յ Շ Ո Ւ Ր Ջ

Փրնեի և Լոպանի միջազգային խորհրդատուութիւններուն մէջ Եւրոպայի և ամբողջ աշխարհի բախտը վրձուելու կողմէ բարդ հարցերը շարաքննելի վեր լարուած հետաքրքրութեան մէջ կը պահեն ամբողջ մարդկութիւնը: Մեծ Պատերազմէն ծնած կեճերներ վերջնական հաշիւարդարի կը սպասեն: Հակամարտ շահեր իրարու կը բախին անընդհատ: Քաղաքական նոր խմբակցութիւններ կը կազմակերպուին՝ գանապան տնտեսական ու դիւանագիտական շահեր սպահովելու մտահոգութեամբ:

Այս թու ու բունի մէջ, Թուրքերն ալ անբաժին չեն մնար: Թարզ գանապան խորհրդատուութիւններու կը մասնակցէին, անպատու կերպով, քանի որ անպաճէին Ազգերու Դաշնակցութեան, ինչպէս Ռորհրդային Միութիւնն ու Միացեալ Նահանգները: Իսկ այժմ արդէն Քեյմալի Թուրքերն պաշտօնապէս կընդունուի Փրնեի արիտպագոսին մէջ: Առաջին անգամ թուրք արտաքին գործավար Թէվ-

Փեք Բիւշտի պէն Ապառպիմանց Սահմանափակման խորհրդատուութիւն մէջ բացբող կերպով հասկցուց թէ Թուրքիա կը փափաքի մտնել Ազգերու Դաշնակցութեան մէջ: Անկէ վերը ներքայցներու մէջ լռիկ այնպիսի սկսուած: Մեծ ու փոքր պետութեանց ներկայացուցիչները իրարու հետեւէ ստորագրեցին Թուրքիոյ ուղղելիք հրահարարին տակ: Այս ձեռնարկին զլիսաւոր դերապատարն էր Թուրքիոյ նոր բարեկամը՝ Յունաստան, որ կըբահայրի դեր կատարել կողմէր, իրեն զլիսաւոր անպակց Սպանիան: Հարցը հաստննալէ վերջ, յուլիս 1ին, Ազգերու Դաշնակցութեան Սպանիոյ ներկայացուցիչը առաջարկեց պաշտօնական հրաւեր ուղղել Էնկիւրիի կառավարութեան, որպէսզի անդամակցի Ազգերու Դաշնակցութեան և Յունաստանի արտաքին նախարար Միխայիլաքափուլոս երկրորդեց առաջարկը և այս առթիւ խօսեցաւ ուշադրաւ ճառ ուր, շնչտելով Թուրք-հեհլէին բարեկամութեան կարեւորութիւնը: — Եթէ, ըսաւ Միխայիլաքափուլոս, հազիւ քանի մը

տարի առաջ, մէկը գտար այս բնմէն յայտարարէր թէ Յունաստանն է թուրքիա օր մը ձեռք ձեռքի պիտի տան, սերտօրէն միացած քաշուու համար դէպի հասարակաց խոտմ մը, թերևս պիտի ընդունէր սկզպտիկ ժպտաներով, ինչպէս տեսանող մը, որ շատ հեռու կերթայ իր գուշակութիւններուն մէջ: Երանի՛ թէ շատ շանցած կարենայինք ողջունել նման իրողութիւններ, որոնք ատենին զորք կը թէ՛ին և գեռ այսօր կը կարծիք թէ զժամար է ձեռք բերել. բայց ամուր ու վճռական կամք մը կրնայ վերջնապէս ստանալ գանձոք:

Ազգերու Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը բացատրիկ նիստ գումարեց յուլիս 6ին, թուրքեան հանդիսաւորական անդամ հռչակելու համար: Արդէն յուլիս 29ին նույն կուսակցութիւնը որոշած էր որ թուրքեան անդամակցի Ազգերու Դաշնակցութեան: Այս ձեռով յառաջիկայ սպետներքին նստաշրջանին, թուրքեան պաշտօնական պիտի բազմի Ազգերու Դաշնակցութեան ընդհանուր Ժողովին մէջ:

Մեծ պատերազմի պարտկանքներէ միայն թուրքեան է որ գտեալ դուրս մնացած էր Ժնեքէի արհիպագոսէն: Աւստրիան, Հունգարիան, Պոլսկիբան և Գերմանիան յատուց արդէն մաս կը կազմեն Ազգերու Դաշնակցութեան: Տարիներ առաջ, քանի մը առիթներով, ինչէր եղած է թուրքիոյ մասին ալ, սակայն, միշտ արդէնք մը գտնուած է, անոր մտադրէն զէմ: Գլխաւոր արգելքը կը նկատուէր Մոսկուան: Ուրիշ արգելք մը Ազգերու Դաշնակցութեան Պորտուգալիս մէջ մնալուն աժողո մը սպահանջուու ինչորէն էր: Անցած տարի սակարկութիւններ եղան այս մասին, առանց որոշ արգելիքի մը յանդիւրու:

Այս անգամ որոշապէս կը տեսնուի թէ բոլշևեկեան արգելքը վերցած է, նոյնպէս հարթուած պէտք է ըլլայ մնալուն աժողո հարցը: Ըսմէ՛ք փաշայի վերջին անգամ Մոսկուա այցելութեան առթիւ, ի մէջ այլոց, խնդրոյ աւարկայ եղած էր թուրքիոյ Ազգերու Դաշնակցութեան մէջ մտնելու խնդիրը և հասնութեան արժանացած: Կրնայ՞րլլալ որ կրէմլինի ծիրանաւորները իրենք թելադրած կամ պարտադրած ըլլան այդ ջանքը, ո՞վ զիտէ ինչ թաւան նպատակներով: Ապագան երեսնա՛յարտի հանէ ասոր գաղտնիք՝ ծայրերը: Ընդիրն այն է որ Եւրոպա սիրով ընդառաջ կերթայ թուրքիոյ փափաքին:

Այս հարցին մէջ Մոսկուայի և Եւրոպայի տեսակէտները միութեան զիմ մը կը գտնեն. սակայն, ատիկա միայն արդիւնքի տեսակէտով է. սկզբնական դրդապատճառները բոլորովին տարբեր են և իրարու ներհակ: Իսկ թուրքերը կը շարունակեն խաղալ երկու լարի վրա, իրենց կամքէն բոլորովին անկախ, այս կամ այն զօրաւոր հասանքէն քըւած:

Ազգերու Դաշնակցութեան մէջ մտնելով, թուրքիոյ զիրքը կամրապղծի աստիճան մը ևս միջազգային ճակատին վրա: Իր հողային ամբողջութիւնը կենալիսաւորի Ազգերու Դաշնակցութեան միւս բոլոր անդամներուն կողմէ, որոնք Ուխտի 10րդ յօդուածին համաձայն պարտաւոր են պաշտպանել անոր սահմանները օտար յարձակումներու դէմ, անշուշտ, երբ ինքը չէ սեղի տալը այդ յարձակման:

Ահա՛ Ազգերու Դաշնակցութեան Ուխտին 10րդ յօդուածը:

«Դաշնակցութեան անդամները յամձառու կրլլան յարգելու և արտաքին ամեն յարձակման դէմ պաշտպանելու Դաշնակցութեան բոլոր անդամներու ներկայ հազարի ամբողջութիւնն ամ Բազմական անկախութիւնը: Յարձակումի, յարձակման սպառնալիքի կամ վտանգի պարագային, նարիւրը կը բնմէ այս պարտաւորութեան գործադրութիւնը պատանդելու միջոցները»:

Թուրքիա կը յուսայ նաև այս քայլով սպահովել իր քաղաքական լրակատար անկախութիւնը: Դաշնակցիցները, Լոզանի մէջ, կարևոր անդամահատման ենթարկելով հանդերձ թուրքեան, ո՛չ մէկ սահմանափակում

կու՛մ զրին անոր սպառնալիքներով, ինչպէս ըրած էին Գերմանիոյ և իր միւս գլխակիցներուն: Անոնց համար կարևորն էր ձեռք անջնել նեղուցները և յալոդեցան ասոր: Ապագինցին ամբողջեր և նեղուցներու հըսկողութիւնը յանձնեցին միջազգային հակակշիռի մարմնի մը, որ կերպով մը ձեռնամուրի կրլլայ թուրքիոյ ներքին գործերուն և ստեր կամէ անոր վեհապետական իրաւունքներուն:

Մոսկուայի համար նեղուցներու ազատութեան հարցը կենաց և մահու խնդիր է: Աշխարհակալ պետութիւնները նեղուցներուն միջոցաւ է որ կրնան յարձակի իր վրա և կամ տնտեսական պաշարման ենթարկել զայն: Եւ որքան ատեն որ նեղուցները կը գտնուին այդ պետութեանց հակակշիռի տակ, Ռուսիան սպառնալ չզգար իր սահմանները: Ուրեմն պէտք է ունէ կերպով նեղուցները ազատել մեծ պետութեանց ձեռքէն և յանձնել զանոնք թուրքիոյ բացառապէս գերիշխանութեան: Այն ատեն միայն Մոսկուա երաշխաւորած կրլլայ Սեւ ծովու աւազանին մտնելը, մահաբազդ այն ատեն միայն Բազուի նաւթը աշխարհակալ ընչաբազդ պետութեան հասոցութեան սահմաններէն դուրս մնալով ընդմիջու կապահովուի:

Այս խորհրդածութեանց առիթ տուա՛ր վերջերս հրատարակած հեռագիր մը, որ կրուէր թէ թուրքեան Ազգերու Դաշնակցութեան մէջ մտնելով, պիտի պահանջէ նեղուցներու միջազգային ամբողջ ընդունը: Տարակուս չկայ թէ այս պահանջին տուն տուոյն է եղած Մոսկուան:

Ըսմէ՛ք փաշայի զէպի Մոսկուա և Հոռոմ կատարած այցելութեանց արդիւնքները հիմա է որ հետզհետէ մէջտեղ կելին:

Վերջերս Մաթէնի մէջ ծանօթ աշխատակից մը՝ Հանրի տը Գորապ կը զրէր թէ Տարտանելի նեղուցներու յախտնական խնդիրը սակարկեցաւ և կարգադրեցաւ Մոսկուայի մէջ՝ Ղազիի ներկայացուցիչներու այցելութեան առթիւ: Այս խնդիրն մէջ բոլշևեկներուն համաձայն են նաև Փաշիսա իտալացիները: Նախապէս Իտալիա զացած են Չէ բոլշևիկ ամենամանօթ մասնազէտներ, որոնք պատերազմական նիւթերու գործարանները այցելելով, պարտաւոր են ընդարձակ ապարարանք մը և անոր յանձնումի հիմերը: Պորտուգալիս Միութեան կողմէ թուրքիոյ փոխ տրեւիք ութ միլիոն տուրով շաքարի կամ հելուածելիքի մեքենաներ չէ որ պիտի գնին, ինչպէս հաղորդեցաւ պաշտօնապէս: Այլ այդ-գրամով Իտալիային պիտի գնին եղբի խոլոր թիղանութներ սահմանած նեղուցները սպառազինուու: Իրականին մէջ ուրեմն, Մոսկուան ութ միլիոն տուր կը յատկացնէ իր սահմաններու պաշտպանութեան համար: «Չէ՛ որ, կրուէ Հանրի տը Գորապ, թուրքեան զինելով, Պորտուգալիս Միութիւնը ինքզինքը կը գինէ»:

Ուրիշ աղբիւրէ հրատարակած լուրերու համաձայն, Ըսմէ՛ք փաշայի և Թէլփիթի Բիւշտի պէյի Մոսկուա և Հոռոմ այցելութեան առթիւ զադունի դաշնագիր մը կըքած է Մոսկուայի, Հոռոմի և Ենկիլբիի միջև, զլխաւոր նպատակ ունենալով Տարտանելի երկու եզերքները դինկ իտալական թնդանութիւնով: Ռուսեանախանական նոր պատերազմի մը պարագային, Ռուսիա պիտի կրնայ օգուտի նեղուցներին, թուրքիոյ և Իտալիոյ հասնութեան: Ասկէ՛ գատ Մոսկուա 90 միլիոն տուր արժէքով պատերազմական նիւթեր ապաւորած է Իտալիայի: յանձնումը պիտի կատարուի նեղուցներու ճամբով:

Իւրոյ այս տեղեկութիւնները կարելի չէ հաստատել պաշտօնապէս: Երբ գաղտնի դաշնագրի մը բոլոր մանրամասնութիւնները գիտցնեն, անկա կը դարբեր գաղտնի ըլլայէ: Ամէն պարագային, յատկանական են Ըսմէ՛քի այցելութիւններէն վերջ եւրոպական մամուլին մէջ հրատարակած այս լուրերը, որոնց ստուգութեան հաստատու պատճառներ չեն պակասը:



Ըսինքն թէ Թուրքիան այսօր հասարակչութիւնը պահպանող ազդակ մըն է՝ իր աշխարհագրական դիրքին բերումով: Մէկ կողմէն Խորհրդային Միութեան, մեւ կողմէ ֆաշիստ Իտալիոյ ցարդին մէջ ինկամ ըլլալով մէկտեղ, փորձեր կընեն ճարտարական մտնելու: Այս մերձեցման համար գանազան նկատումներ կան: Ու ամենէն առաջ՝ դրամականը: Տնտեսապէս շայտալուծ, ներքին և արտաքին պարտքերը վճարելու անկարող, Թուրքիա աշքերը յառած է Եւրոպայի, անկէ ըստպատիվ իր փրկութիւնը: Ազգերու Դաշնակցութեան մէջ մտնելով, կը յուսայ աւելի վստահութիւն ներշնչել արևմտեան պետութեանց և ի հարկին կարևոր փոխառութիւն մը կընել անոնցմէ: Կամ լաւագոյն պարագային, Ազգերու Դաշնակցութեան հաւաքական շահկցութիւնը ապահովել, — օրինակ աննելով ուրիշ պետութիւններէ, որոնք անդամ են ազգերու արիստոկրատին և օչուեցան անկէ:

Եւրոպական պետութեանց մէջ ալ հետզհետէ ձգտում մը կայ՝ սրբաշահելու Թուրքիան, մասնաւորապէս ձերբարկողութիւնը համար զայն միտելոյ գերիշխանութեանէն: Վերջերս անգլիական կառավարութեան կողմէ Մուսթաֆա Բէմալի ներկած գրքի մը վրա գրած քանի մը տողերը շատ յստակաշական են այս ուղղութեամբ: Իտալիա ու Գերմանիա բարեկամ են արդէն քճամալական Թուրքիոյ: Կը մտայ միայն Ֆրանսան, որ յուրջ պատճառներ ունի վերապահ դիրք բռնելու Թուրքիոյ հանդէպ: Հանրային Պարտքերու խնդիրը և Սուրիոյ հարցը քլայտարող արգելքներն են Ֆրանսեւթուրք բարեկամութեան:

Այնպիսի պահու մը, երբ Գերմանիան իսկ զլուրի կը ցոյ՛ գաշակիրենքով ճանչցած պարտքերը չվճարելու համար, Թուրքերը մեծ քաջախիղճութիւն կը դրանեն՝ ուրանալու համար Օսմանեան հանգուցեալ կարողութեան պարագայը: 1928ի յուլիսին թաճնետէրուին Հետ կըբւած համաձայնագիրը միայն մէկ անգամ գործադրեցաւ. այսինքն Թուրքերը միայն մէկ մասնավճար տին, իսկ յաջորդ տարիները գանազան առարկութիւններով ուէ վճարում չըրին: Տարիներէ ի վեր նոր բանակցութիւններ կը կատարուին առանց վերջնական ելքի մը յանգելու: Նախկին ելմական գործավար Սարաճօղլու Շիւքրի պէջ շարունակ կերթեկէ ֓աբիդի և էնկիւրիի միջև:

Պարտքերու խնդրին Հեռ միտճամանակ, վերջերս էնկիւրիի Ազգային Մեծ Ժողովին առջև արձարձեցաւ Հիւսիսային Սուրիոյ հարցը: Տեսակ մը ջանադած: Չոր սպանաւիթը պարտքերը ջնջել տալու համար:

Թուրք խորհրդարանի յուլեիս 25ի նիստին էք, որ Իդմիրի երեսփոխան Մանուտ Խաստ պէջ չարցում ուղղեց արտաքին գործավար Թէվֆիք Բիւշտի պէջին, բացատրութիւն ստանալու համար թէ՛ ինչպէս կը գործադրուի 1921 ճկուտ. 20ի էնկիւրիի համաձայնագիրը, կըբւած Ֆրանսերէն-Պուլսոնի և Բէմալի միջև: Ինչպէս կը յիշուի, այս համաձայնագրով, Փրանսայիները պարպեցին Կիլիկիան, իսկ մասնաւոր յանձնառութիւններ ստանձնեցին Իսկլանդիտեւ-Անտիոք շրջանին համար, որը հոծ թրքութիւն մը կապրէ: Թուրք թէրթերը կը գրեն թէ՛ ըստ այդ համաձայնագրին, յիշեալ շրջանին մէջ պաշտօնական լեզուն Թուրքերէնը պէտք է ըլլայ, մինչդեռ տիրապետող արարբէնն ու Ֆրանսերէնն է: Թուրքերէնը գրւած աղբարագիրներն անգամ արարբէնէ կամ Ֆրանսերէնի կը թարգմանուին: Նոյնպէս՝ պետական պաշտօնանները պէտք է Թուրք ըլլային, մինչդեռ ոչ-թուրք են, շատին ալ այնպիսիներ՝ որ Թուրքիոյ ղէմ դաւաճանած և փարսուտ տւած են: Դպրոցներուն մէջ ուսուցումը պարտաւորիչ կերպով Թուրքերէնով պէտք է ըլլայ: Ինչդեռ Անտիոքի լիւթին մէջ անգամ դասերը արարբէն կաւանդուին: Մինչև վերջերս դպրոցին տնօրէնը Թրքաւարաց արար մըն էր: Ըստ համաձայնագրին, ամէն դիւրուութիւն պիտի ընծայուէր Թուրք մշակոյթի գարգացման համար, մինչդեռ Թուրքերուն

ղէմ ճնշումի քաղաքականութիւն մը կը նկատուի: Այս շրջանը մասնաւոր վարչութիւն մը պէտք է ունենար, տեսակ մը ապահովորոնացում. մինչդեռ Դաճակոսի կեդրոնը միջամուխ կըլլայ բոլոր գործերուն: Իսց մնացած ամենափոքր պաշտօններու համար անգամ Դաճակոսցի մը կամ Համացի մը կը նշանակուի:

«Տակաւին ուրիշ խնդիր է թայն թէ՛ Սուրիոյ սահմանին երկայնքը հայեր կը տեղաւորուին, մարտնենգութիւնը կը քաջախիղճի, փախստական հայերուն և Թուրքերուն թշնամի տարբերուն առջև սասպարէզը բաց կը թողուի, որպէսզի անոնք զրգոտութիւններ ընեն Թուրքիոյ ղէմ և սրտպագանդ կայմակերպեն»: (Միլիլէթ 27 յուլիս 1932):

Մանուտ Խաստ պէջ, Ազգային Ժողովի նոյն նիստին մէջ բողոքեց Փրանսական թէրթերու այն արտայայտութեանց ղէմ, որոնք կը ձգտին Թուրքիան ցոյց տալ իրբէ խոստմնադրում, դաշնագիր և ստորագրութիւն չյարգող-պատճառ՝ Հանրային Պարտքը: Թուրքիան բուն պարտքը շատնից վճարած է արդէն. մնացածը ո՛չ թէ մայր գումարն է, այլ տողոսին տողոսը...: Նախկին գործավարը յետոյ յարձակողականի անցնելով, յատարարեց՝ խանդավառ ծափերու մէջ.

«— Եթէ խաղաղութիւնը պահպանելու և մարդկութիւնը փրկելու համար անհրաճեալ է յարգել դաշնագիրները, կը պահանջեմ որ Ֆրանսան ալ յարգէ 400 հարզար Թուրքերու վարչութեան վերաբերեալ դաշնագիրը: Ֆրանսան իր պատմութեան ընթացքին հող կորսնցնելուն ցար մեղի չափ դաշնած երկիր մըն է: Իսթեմտէրուի և Անտիոքի մէջ 400.000 հարզարտ Թուրքեր կապրին: Այս հողադուր մեր սրտէն փրցած արեւնոտ կտորի մը պէս Ֆրանսայի ձեռքը յանձնեցաւ Թուրքիոյ ամենէն սեւ օրբանս: Ֆրանսան չէ մտցած Ալլաա-Լորէնը: Ես ալ իբրև ազգայնական Թուրք երեսփոխան մը, մինչև մահս չեմ կընար մոռնալ հայրենիքիս այս կտորը: Այսքանը բաւական չէ, գալիք Թուրք սերունդներն ալ չպիտի մոռնան» (Պալավ՝ քաղաքանչաթիւննր և երկարատև ծախիթ):

«Ֆրանսական ազգը թող հաւատայ թէ, ինչպէս ենք յիսուն տարի շնորոգա իր հարազատ հողամար՝ Ալլաա-Լորէնը, այնպէս ալ Թուրք ազգը 50,000 տարի չպիտի մոռնայ իր հարազատ օրտին մէկ կտորը»: (Միլիլէթ 26 յուլիս):

Իբրև թէ մաքսաննչութիւնը արգելելու պատրաստակն տակ, Սուրիոյ սահմանադրութիւն վրա, մանաւանդ հայաբնակ կեդրոններու շուրջ զինուր համախմբելով, կեցած տեղը Անտիոք-Իսթեմտէրուի խնդիր արձարձեւելով, պարզ կը տեսնուի թէ Թուրքիոյ նպատակն է սարսափ ազգել, միտք պղտորել, պարտքերու ջնջում ձեռք բերելու համար: Այս ձեռնարկին մէջ իրեն աշակից ունի անշուշտ Մոսկուան ու Հռոմը:

Տեղեկութեան մը համաձայն, Ըմէթ փաշայի Հռոմ այցելութեան առթիւ սակարկութիւն եղած է նաև Սուրիոյ հոգատարութեան մասին: Իտալիա էթէ յաջողի Ֆրանսային առնել այս հոգատարութիւնը, իբրև նէք Թուրքիոյ պիտի տայ Անտիոք-Իսթեմտէրուն շրջանը... Թուրք գործակալները, որոնք տարիներէ ի վեր կը վխտան Սուրիոյ մէջ՝ հակահայ և հակաֆրանսական միջնորոտ մը ստեղծելու համար հոգատարութեան ենթակայ երկրին մէջ, վերջին տասներեսու կըկապտւած են իրենց գործունէութիւնը:

Հակահայ այս բողոքին, Մուսուֆա Բէմալի Պարտայ բերանը՝ Միլիլէթ, 27 յուլիսի իր խմբագրականին մէջ կը գրէ թէ Փրանսեւթուրք յարարբերութիւնները վերջին օրերս բարխորոջ դարձակալում մը վրա կը գտնուին և շատ մօտ ատենէն պիտի գտնեն իրենց շնտակ ու դրական ուղղութիւնը: Ու ասիկա՝ ո՛չ միայն ղէպբու պարտադրումով, արդարաւթեան ու ճարտարութեան ուժով, այլ նաև անոր համար որ կառավարութեան գլուխն անցած է Հէրիոյի պէս բարեկամ պետա-

կան մարդ մը, որ ամենէն առաջ և ամենէն լաւ հասկըցած է Թրքական Դատը:

Յօդանոցի շարունակութենէն արնպէս կը հասկցուի թէ Փրանսացիները հաստատար փոխառութիւն մը ընեն դարձաւ թուրքոյ...

Նոյն կարծիքէն չէ սակայն ձիւմնորիչէք, Մ. Բէճմալի միւս պնակայէզին՝ Եոննու Նատիի թերթը: Պատասխանելով «Լա Պուրս Եմիփսիէն»ի, որ կը թելադրէր թուրքոյ հրամարի ուսանող օրինատասիրնէն և մօտենայի Թրանսայի, ձիւմնորիչէք կը գրէ թէ՛ «Ճրանսա կուզէ Ռուսիայէն բաժնել թուրքեան՝ զայն մասնակից ընելու համար Պորհրդային Միութեան գէժ իր կազմած խմբակցութեան: Թուրքոյ դրամ տալու համար առաջարկած այս պայմանը ցոյց կուտայ որ շարքապահ գերութեան փոխարէն միայն կարելի է դրամ ստանալ Թրանսայէն: Թուրքոյ չի կրնար դրամով իր անկախութիւնը ծախել և յօշիւ կարգին Թրանսայի, որ կաշխատի նոր ազէնի մը առաջնորդել աշխարհը: Մայրաքոյն Արեւելից մէջ Ճափոնը, իսկ Եւրոպայի մէջ Լեհաստանն ու Ռուսիան Թրանսայի գեկավարութեանը կը պաշարեն Պորհրդային Միութիւնը, բայց թուրքիս չընդունիր փակել պաշարման

օղակին կովկասեան դուռը, որ բաց կը մնայ... Թուրք հանրապետութիւնը այնքան անխելք չէ որ դրամի փոխարէն իր արտաքին զազաբակախութիւնը փոխէ և իր շահերուն վնասակար արկածանդուութեան մը մէջ մտնէ:

Հակառակ այս բոլորին, էնկերիէն ստացուած վերջին տեղեկութիւնները լաւաւուս են Փրանսիէթուրք յարաբերութեանց մասին և մեծ յոյս դրած է Հէրիոյի արմատական կառավարութեան վրա:

Ազգային Մեծ Ժողովի արտաքին Զէի նիստին մէջ, Թէվֆիք Բիւշաի պատասխանելով Մահմուտ Էսատի յարձակողական խօսքերուն, լաւաւուս յայտարարութիւններ րբաւ: Աւելցուց թէ մէկուկէս տարի առաջ, Փարիզի մէջ կնքուած է չեղարկութեան և բարեկամութեան դաշնագիր մը Թրանսայի և Թուրքոյ միջև: Դաշնագիրը թէ և վաւերացուած է թուրք խորհրդարանին կողմէ, բայց զարդ չէ ներկայացուած Փրանսական խորհրդարանին: Հէրիոյի դաշինքը կը մտածէ վերականգնանցնել աչք դաշնագիրը, խորհրդարանի վաւերացման ենթարկելով զայն մօտ օրէն:

ՀՐԱՆՏ-ՍՍՄ ՌԻԼ

### Կ Ա Ր Մ Ի Ր Գ Ծ Ի Յ Ն Ե Ր Ս

(Խորհրդ. Միութիւն և Հայաստան)

Անցեալ ամառըջանում Պորհրդ. Միութեան և Անդրկովկասի սահմաններում առանձին աչիք ընկնող գէպեր տեղի չունեցան: Պորհրդային թերթերը լինէն են «Նաւաճուններով» և ինքնաշեննադատութեամբ, որոնք գրիթէ բառացի կերպով կրկնում են և Հայաստանում: Արձանագրելով Հայաստանի կաննը՝ մօտաւոր դաղափար տաւ կը լինէնք և Պորհրդ. Միութեան միւս ծայրերում յուշող ինչորեքերի մասին:

Հայաստանում պատահած ամենապակասարոյց գէպը, անկասկած, Կոմերիտութեամբ — Կոմունիստական Երիտասարդական Միութեան Տրք համագումարն է, որ բացեց յուշու ճին և տեւեց մի քանի օր: Հետաքրքրականը ոչ այնքան արտասանած երկարապատում ու առողտկալի հառերն են, որոնցից ոչ մի դաղափար կարելի չէ կարել երիտասարդ կոմունիստական շարժման աշուրայ վիճակի մասին, որքան Ա. Պանջևանի որջոյնի խօսքը, ուր Հայկումուսի շարտուղարը երկարօրէն ծանրացաւ Կոմերիտութեան ձեռք բերած յանդուրթիւնների և թերութիւնների վրա: Ըստացուած պատկերը աւելի քան հեռու է միխթարական լինելուց:

Ըստ Պանջևանի, Կոմերիտութիւնը անբաւարար զէր է կատարում երկրի անտեսական կեանքում: Հայաստանի արդիւնաբերութիւնն ու գիւղատնտեսութիւնը շարունակում են կայալ. «Վեցրէ՛ք մեր ամենամեծ գործարարը՝ Լենինականի տէգատիլը: Տէգատիլ գործարանի պլանները թերակատարում ուղղակի քրոնիկան և հիւանդութեան կերպարանք է ստացել... Լենինականի բանօրների թուր ներկայումս՝ պլանով նախատեսուած քանակից նոյն իսկ աւելի է. գործարանի սարքաւորումը յետ չի մտնւ տէգատիլ արդիւնաբերութեան այլ գործարանների սարքաւորումը: Տէգատիլի պլանների թերակատարման միակ պատճառը աշխատանքի արտադրողականութեան թուլութեան մէջ պէտք է որոնելը»:

Կամ թէ չէ պղնձի արտադրութիւնը, որի չէֆն է Կոմերիտութիւնը. «Այստեղ նոյնպէս, ինչպէս նպէս

տնտեսութեան այլ ճիւղերում, պլանների թերակատարման հիմնական պատճառը՝ աշխատանքի վատ կազմակերպումն է և բանօրների աշխատանքի թոյլ արտադրականութիւնը»:

Եւ կամ մանամապախտիւր. «Մեր մի շարք խորհտնտեսութիւններում, մանաւաճ Լոռու, Արարայի խորտնտեսութիւններում և Ղարաբեիխայի խոգարուծական խորտնտեսութիւնը և շատ կոյտնտեսային Փէրմաներում չկարողացան փոքր է շատէ սպահուփել անատունների խնամքը գործը: Հետևանքը՝ անատունների, մասնաւորապէս մատղաջ անատունների կոտորումը, փշացումը: Այս խայտառակ, անթոյլատրելի երևոյթի, կարելի է աւել ոճրագործութեան պատճառ խորհտնտաշխատողների և կոյտնտաշխատողների վատ աշխատանքն է, անհոգ և անհոգի վերաբերումները գէպի պետական ու հասարակական ղօրջն ու տնտեսութիւնը»:

Այս բոլորի հանդէպ, ի՞նչ է Կոմերիտութեան գիրքը. «Ընդհանուր ամամբ դեռ ևս թոյլ է մեր կոմստոյի կոնկրետ աշխատանքն ու պայջարը աշխատանքի սոցիալիստական կազմակերպման, աշխատանքի արտադրողականութեան բարձրացման, շխարարութեան էժանացման, արտադրանքի որակի բարձրացման Փրոնտում»: Մանաւաճը, Կոմերիտականները «զժւար թէ կարողանան պարճենալ» անտարի մէջ ունեցած մասնակցութեամբ. «Կոյտնտեսական բազարը, խանութը, գործակատարը դեռ ու աղօս հասկացողութիւններ են Կոմստոյի համար: Ետտերը նոյն իսկ խրաչում են այդ «խօքը գործերից»:

Եւ Պանջևանը յանուն կենսամտի «կարականապէս պահանջում է... սովորել կոյտնտեսային առևտուր կազմակերպել», «չխորշել գործակատարի պաշտօնից, կազմակերպել հարևանային աշխատանքը խանութում և բազարում», զբաղել ճազարածութեամբ: «Ատոււ են Հայաստանի պոններները հորթերի չէֆութիւնը վեցրել են իրենց վրա: Ձէ՛ր կարելի արդեօք հորթե-

րին աւելացնել նաև ճազարները, որոնք նոյնպէս լաւ, գործունեայ, եռանդուն չէ՛ք կարել են գրուիլ»:

Եւ ինչո՞ւ սահմանափակել միայն ճազարներով. Խանջեանի կոմերիտականների ուշադրութիւնը հրաւիրում է և Երեւանի փողոցների վրայ. «Վերցրելէ շատ հասարակ և սիրոք» մի դարձ. մեր մայրաքաղաքի մաքրութիւնը խնդրել, փողոցների դրութիւնը և այլն: Մեզ մօտ ամէն քայլափորում գտնաւորուում են քաղաքի կերտողութեան, անտանելի փողոց մասին: Մեր մի շարք փողոցներն այնպիսի դրութեան մէջ են, որ փողոց անձրեւից յետոյ ոչ միայն կոչիկներն են կորսւում փողոցով անցնելիս, այլ կարճահասակ մարդիկ ցնիւում խեղդւելու վտանգի տակ են ընկնում»: (ՁՊ. 2, 8, յունիս):

Կոմերիտութիւնն, ի հարկէ, մեղք չունի, որ Երեւանի փողոցները ճակճի են վերածուած կամ անասունները ստուկում են Հազարներով — յանցաւորներին պէտք է փնտրել Կոմկուսի վերին խաւերում — քայց Խանջեանը ճիշտ է արձանագրում փաստերը. քայքայում է շարունակուած է Հայաստանի տնտեսութեան բոլոր բնագաւառներում: Ահա, օրինակ, մագաքի գործը: Մտակայից տրւած Հրամանով ամենքը ճազարաբուծութեամբ են զբաղում: Հայկոմկուսի կենտկոմն էլ մայիս 16ին ճառանձին կարևոր նշանակութիւն տալով ճազարաբուծութեան զարգացման՝ մի պրոբլեմը լուծելու և բանտարներին սննդամատակարարումը բարելաւելու գործում»՝ հրամայում է ամէնէն կերպ ճազարաբուծութեամբ. առաջիկում է Վոլուակցութեան բոլոր շրջիկներին ու քաղկոմներին՝ ընդարձակ կամպանիա ծաւալել և ամէն կերպ աշակել... ճազարաբուծական տնտեսութիւնների կազմակերպելուն»: Նոյն իսկ ճազարաբուծական տարեկան ծրագիր է կազմել, որի մէջ Հանգամանօրէն մատնանշուած է, թէ ինչ հիմնարկութիւն քանի ճազարանոց է ունենալու և որքան ու ի՞նչ տեսակ ճազար է հասցնելու: Նշանակած են և մրցանակի ֆոնդեր լաւագոյն ճազարաբուծիչներին: (ՁՊ. 2, 22 մայիս): Մայիս 27ին ձեռնարկային Հայաստանում մի ամբողջ խմբագրական է ներդրւալ այդ Համեստ կենդանուն — ճէլ՝ յն ճանապարհ ճազարներ, որի մէջ վրէժ է Հանուած ճազարի բարեմասնութիւնները. քարաքարգամայնը, մայր ճազարը տարակ ընթացքում սերում է 12-24 ճազ, 7-8 ամսական ճազարներն իրենց հերթին սկսում են սերունդ տալ: Մի տարւայ ընթացքում մի մայր-ճազարից և նրա աւելին սերնդից կարելի է ստանալ մօտ 30-35 ճազար. «Ճազարի խտտապահանջը չիկնելը կերի ու քնկարանների նկատմամբ: Հայկոմկուսի պաշտօնաթիւթը թելարդում է մշտապահանջարկութեամբ արշաւ կազմակերպել ճազարաբուծութեան Համար»:

Եւ մինչ ամէն կողմ սունկի պէս ճազարանոցներ են բանում, նոյն Համեմատութեամբ էլ ստուկում են խորտնտեսական ճազարները: Այսպէս, Դարաշիլակի ճազարաբուծական խորտնտեսութեան մէջ, որ 1930 թիւն ունէր 100 և 9131թ. 500 ճազար, պիմագրկութեան հետևանքով ստակեցին 300 ճազարներ. այժմ խորտնտեսութիւնն ունի 403 ճազար: Տնտեսութեան կառավարիչը արձանագրում է, որ «սիրտ. 23ին 10 ճազար ստակել է կաթմածից: Փետր. 24ին ստակել է «րկու մայր և երեք արտ. ճազար առաջին և յետեւի ուսքերի կաթմածից: Փետր. 29ին ստակել է 10 ճազար տեղի նեղածութիւնից» և այլն: Խորտնտեսութեան շինարարութեան Համար ստացած 52000 բուրլի վարկից 15,000ր. ճազարանոց է շինուած, «որը, սակայն, կարճ ժամանակից յետոյ փուլ եկաւ»:

Հայաստանում կայ 1000 մայր ճազար, որից աշխարհը սպասուած է 3500 էջ ճազար, մինչդեռ ըստ ծրագրի պէտք է լինէր 7500: (ՁՊ. 2, 14 յունիս):

Ճազարի օրումն և է «խորախղայիմ բազարը», որ, ըստ Խանջեանի, «ներկայ ժամանակաշրջանի ամենակարևոր պահանջներից մէկն է»: Ոչ միայն կոմերիտա-

կանները, այլ և կոմունիստներից շատերը հեղանքով կամ թշնամութեամբ են վերաբերում դէպի Ստալինի նոր ձեռնարկը. առևտուր, բայց ի՞նչ կապ կայ առևտրի և զարգացմանի կառուցման» մէջ: Այդ պատճառով մինչև այժմ էլ առևտրի գործը Հայաստանում անկազմակերպ ու խեղճ վիճակի մէջ է:

Իրբև հետևանք Խորհրդ. Միութեան կենտրոնով մի և ժողովուրդի մայիս 21 որոշում, Հայկոմկուսի կենտկոմի քարտուղարութիւնը մայիս 25ին որոշեց «պարտաւորացնել Երեւանի և Լենինականի քաղկոմներին ու քաղտորուորներին, շրջանային կոմիտէներին, գործկոմներին ու կոլտնտիւթիւններին՝ պայաններ մշակել՝ հաշի առնելով իւրաքանչիւր շրջանի կոնկրետ պայմանները, անյապաղ ձեռնարկել կոլտնտեսական շուկաների, վաճառանոցների, խանութների ու կրպակների ծաւալմանը՝ շրջանային կենտրոններում, ճանապարհների հանդրոցներում և այլն»: Միաժամանակ մանրամասն ցուցմունքներ արաւ թէ՛ ո՞ր, ինչ քանակութեամբ, ո՞ր մարմինների կողմից և ի՞նչ տեսակի խանութներ պիտի բացվին: Ամբողջ Տիգր այն էր, որ առևտուրը սահմանափակել խորհրդային և կոլտնտեսական հիմնարկութիւնների մէջ, քայց արդէն իսկ յունիս 18ին ձեռնարկ. Հայաստանը գտնաւորուած է, թէ «Երեւանում կազմակերպուած խորհրդային առևտրի շուկան շատ քիչ նմանութիւն ունի խորհրդային շուկայի: Այդ շուկայում անցելի նման դերակազմութիւն ունին մասնաւոր առևտրականները և միջնորդները: Եստ թիչ են երևում կոլտնտեսային և կոօպերատիւ խանութներ ու խորհրդային շուկայի փոխարէն դուր ձեր անուշ տեսնում էք միջնադարեան խանութնադանձ առևտրի ժխորք: Նոյն և աւելի վատ դրութիւնը տիրում է նաև շրջանային կենտրոններում կազմակերպուած շուկաներում, իսկ շատ շրջաններ էլ դեռ չեն արձագանգել կոլտնտեսութեան դիրքիտիւնների և չեն կազմակերպել շուկաներ»:

Չարմանայի չէ, որ դերակազմութիւնը մասնաւորներին է պատկանում, որովհետև խորհրդային հիմնարկները առևտուր անել չդիտեն ու չեն էլ ուզում սովորել: Բողբեկկան մամուլը հաւառ փաստեր է առնել բերում: Այսպէս, մինչ Երեւանում ապրանքների անկարագրելի սով է տիրում, Հայմկոօպի կենտրոնական պահեստում 1931 թւականից ի վեր «կոլտնտեսի է մեծ քանակութեամբ ապրանք» — 989 կիլո գրւկային թէլ, 20,380 տուփ թէլ, 425 երկվիցեակ հայելի, 1926 կիլո ընկոյղի միջուկ, 21,589 բուրբու խաղաթուղթ, անշահատուութիւններ և այլ ապրանքներ: «Յաճախ սովա ապրանքների մի մասն ուղարկում են շրջանները, որոնք յետ են վերադարձնում, որովհետև սոյպիսի ապրանքների պահանջ չունին: Այսպիսի աննպատակ փոխադրումների վրա ծախսուած են մեծ գումարներ»: «Հայմկոօպը պարտատուած է յատակ մաքրելու խողանակներ, որոնցից պահեստում կայ 57 Հատ, իսկ Հայաստանը Հայմկոօպից վերցնելու փոխարէն՝ բերում է Ռուսաստանից»:

Կամ թէ չէ Երեւանի կայարանի պահեստներում ամիսներով ապրանքներ «բնում» կամ փնտնում են, ինչպէս Տորգսինի 44 հակ կերպատեղէնը, Հայաստի 12 արկղ թէլը, Հայաստի 4 արկղ վատարանները, ինչ որ անյայտ հիմնարկների 21 արկղ մկրատները, մեծ քանակութեամբ դիզալատնտեսական մեքենաներ. այս վերջինները մէկ տարուց աւելի է թափուած փլանում են. նոյնպէս և «40 պարկ շաքարաւոց 15 օրից աւելի մնացել է բաց տեղ և մասում փլացել»: Փաշգման եռթարկել են և «Հայաստպետատի պրոմյանի իւղը, ինչ որ անյայտ հիմնարկի 16 հակ րդէն քանուճակաւորան, անյայտ մի հիմնարկի ոչլաւ մորթերը, նոյնպէս մի անյայտ հիմնարկի 20 արկղ լուցկին, Հայաստի 1 վազոն մարգարիներ, Կաթմիթթուկոօպի 5 տակաւու ձուրկ և վերջապէս մի այլ անյայտ հիմնարկի 5 տակաւու պանիրը»:

Նոյն անտէրութիւնն է իշխում և Հայասի, Հայ-տնարհօօպի, Չինտարական և այլ պահեստներում: Ապրանքները փշանում են պահեստներում, Ժողովուրդը սպարանք է փնտրում, իսկ քուլտիկը վաճառականները իրենց անճարարութիւնից ստալ էկած կորուստը փըրկելու համար դիմում են շարաշահութեան, այնքան, որ բանտրա-գիւղացիական տեսութեան ժողովոմ Ա. Գարոյեանը յունիս 3 Ո՞՞ 8 հրամանով ստիպւած է լինում խիտ միջոցները զիմէ: «Վերջին ժամանակներս, որում է նա նկատուած են զների սուր բարձրացման և զների խորհրդային թաղարականութեան մասին տրւած դիւրեկուիաների կոպիտ խախտման մի շարք դէպքեր: Կօօպերատիւ և ստուարական կազմակերպութիւնները մեծ շահերի հետամուտ լինելով՝ անուշադիր են թողում բանտրների մատակարարման շահերը»: Եւ ստուարական է մի շարք «ճիշտապատմներ» այդ շարքը վերացնելու համար: («Ո՞՞ 2», 11 յունիս):

Միայն անտէրի քննադատումն էլ այս անտէրութիւնը: Սնչով տարբեր չեն գործերը և արդիւնաբերութեան ասպարէզում: Ահա Մեղրու կոնսերվի գործարանը. 1931թ. մայիս 11ին պայման է կնքել Հայաստանի հետ նոյն տարւոյ Հոկտեմբեր-նոյեմբերին 230,000 րուբլու պահածոյ հասցնելու համար: Հայասի բոլոր յիշեցումները մտած են անհետևանք և միայն 1932թ. մայիսին գործարանը յայտնում է թէ պայմանը չի կատարելու: Հայասը դիմում է պետական դատարան՝ պահանջելով վնասների հատուցում և սուզանք:

Մի որիչ նման դէպք, Լենինականի Մայիսեան արդարութեան անան տեքստիլ գործարանը՝ 1931թ. մայիս 12ին պայման է կնքում Լեննարտի հետ յունիս մէկից մինչև Հոկտեմբեր մէկ 3000 խոր. մետր վառելիքային մատակարարելու մասին. և իբրև կանխավճար ստանում է 3000 մետր բնագ, հակառակ օրինակն արդէլք: Պայմանագրում լրատում է, բայց Լիննարտի մտքովն իսկ չի անցնում իր յանձնարարութիւնները կատարելը. վառելիքային չի զալիս, բանտրները մտած են ցուրտ բնակարանում և Տեքստիլը նոյնպէս զիմում է դատարան:

Մայիսի վերջերը տեղի է ունենում երկու դատը, և դատարանը որոշում է Պարտաւորեցնել Մեղրու-կոնսերվի գործարանին՝ 15 օրւոյ ընթացքում վճարել Հայասին՝ պայմանագիրը խախտելու համար 24,200 րուբլի տոյթ և դատական ծախսեր: Պարտաւորեցնել Լեննարտին՝ մինչև 1932թ. ֆուլիսի մէկը յանձնել Լենինականի Մայիսեան Ապարտութեան անան տեքստիլ կոմբինատին 3000 խոր. մետր վառելիքային, համաձայն վերոյիշեալ պայմանագրի, միամամանակ րոնազանձել Լեննարտից սուղաճե՞լ պայմանագիրը խախտելու համար և դատական ծախսերն ու բեպէր արժէքը — ընդամենը 9,633 րուբլի 12 կոպէկ: («Ո՞՞ 2», 23 մայիս):

Այստեղ հետաքրքրականը, մանանդ, այն փաստն է, որ դատի զիմը երկու կողմերն էլ պետական հիմնարկներ են: Այդ միևնոյն է, թէ, օրինակ, Ճորղի մի գործարանը դատարան թաչ Ճորղի մի այլ գործարան: Ո՞՞ ր է հանում խորհրդային բիւրոկրատիզմը...

Նոյն կարգի երևոյթ է և ոմն Թ. Թալուրեանի հետևեալ վկայութիւնը. «Ո՞՞ 2» 23 մայիս թուով. «Վերջերս յաճախիկ երևում է անբրած չէկեր փոխանակելու պրակտիկան: Այսինքն՝ կազմակերպութիւնները, պետական բանի իրենց հաշարկային հաշիւներում դուստրներ յունիսներով՝ չէկեր են ստուարչուած և փոխանակում իբար միջև: Միայն ստալինեանականում Պետական Բանկն այդպիսի 50 դէպքեր առթիւ դիմել է դատարանութեան»: Մարդիկ ստիպւած են կեղծ չէկեր տալ, որովհետև իրենց գործը վնաս է հասցնում, իսկ կառավարութիւնը մերժում է դրան տալ:

Նոյն Թալուրեանը թւերով ցոյց է տալիս, թէ որքան վնասաբեր են խորհրդային արդիւնաբերական

ձեռնարկները: Այսպէս, այս տարւոյ տուղին եւամսեակում Երեւանի Մեքենայական գործարանը կատարել է արտադրական ծրագրի միայն 72.9%ը, իսկ վերջերս է աշխատավարձի ծրագրի 108.4%ը, այսինքն՝ նախահաշից էլ աւելին, ծխախոտի գործարանի՝ արտադրութեան ծրագրի 97.9%ը, իսկ աշխատավարձի՝ 107.3%, փայտանյւթական գործարանի՝ 45% — 102.1 տոկոս, Արմատրոն՝ 32.7% — 122.2% և այլն:

Հասոյթը՝ ջիւլ, ծախսը՝ շատ: Նոյն անստեանաբարութեան ընդզեցուցիչ պատկերը և շինարարութեան գանձանքն քննադատներում: Ինչպէս և պէտք էր սպասել, Արարգէլի բացումը նորից յետաձգեց: Որոշում է ելեկտրակայանը գործի դնել յունիս 20-25ին: Հայկովկուսի քարտապարտութիւնը մայիս 23ին նորից մասնանշում է Բիթլիմի գլխարարութեան անբաւարար տեղում» և պահանջում է քապահովել կարբիտի հոցները գործարկումը մինչև յունիս 15»: Վաստիութեան մէջ է և կարբիտի նոր գործարանը, որի կառուցումը չի կարող սարունել որոշւած ժամանակամիջոցին՝ դեկտեմբերին: «Հայպետիլը դեռ մինչև այսօր էլ չի ձեռնարկել կառուցման աշխատանքներին: Չի ձեռնարկել, որովհետև գործարանը նախագիծ չունի, չեն փորւած նոյն իսկ գործարանի հիմքերը: Արդէն անցնում է յունիս ամիսը, բայց Հայպետիլը դեռ չի աւարտել գործարանի կառուցման նախապատրաստական աշխատանքը... Գո՞՞տարանը չի նախընթաց տեղափոխելու համար օրական 30 սայլի փոխարէն արամարում է միայն 12-15 սայլ: Սայլը արանը պէտք է տրամադրէր օրական 2 բեռնատար սւտօ, բայց մինչև այսօր ոչ մէկը չի տեղ: Օրական 2 վագոն տեսակաւոր կապտոյտ աւաղ պէտք է ստացւէր Դամարյուի աւազաններէց, այդ էլ չի ստացւում... Ահա մէկ ամից աւելի է ինչ բանով հաւաքազորը են ուղարկել իրենց ամբարցւած 3 զուլերը, ահազին ծախք են կատարել, բայց մինչև օրս հաւաքազորւած է միայն 6-7 բանօր»: («Ո՞՞ 2», 14 յունիս):

Անտէրութեան է մասնուն և Երևանի տրամվայի գործը. «բանտիկ ինքնահոս», քարի ու խճի պակաս, անպէտք շինանիւթի ստացում, պէտքականի վաճառում, անկարգութիւններ... Հակառակ Կովկուսի քարտապարտութեան ձեռք տաւած արտակարգ միջոցները՝ տրամվայն էլ որոշւած ժամանակին պատրաստ չի լինի:

Նոյն որբալի վիճակը և Դամարի ստանդակազ նշանակութիւն ունեցող Փրոտաշին գործարանի կառուցման գործում: «Գործարանի կառուցումը պէտք է սարուել 1933թ. յունիարին, սակայն, շինարարական աշխատանքն ներկայ տեղով վաճառի տակ է դնում գործարանի կառուցումը 24(ր)4 Կենտկոմի նշած ժամկետին աւարտելու գործը»: «Գործարանի նախագիծը կազմւած է 1929թ., որից յետոյ մի բանի անգամ ենթարկել է հիմնական փոփոխումներին: Կառուցումն սկսւած է 1931թ.՝ փաստօրէն անանց նախագիծի: Մտադրութիւն կայ դարձեալ փոփոխման ենթարկել նախագիծը: Նախկինով յաճախական փոփոխումները վերին ստոիանների բացասաբար են անդրադառնում շինարարութեան վրա և թանգ են նստում: Նախագիծի վրա մինչև այժմ ծախսւած է մօտ քառորդ միլիոն րուբլի, որը կազմում է ընդհանուր ծախքերի 7%ը, մինչդեռ պէտք է կազմէր 2-3%»: («Ո՞՞ 2», 12 յունիս):

Անտէրութեան փաստերի այս շարքը դեռ երկար կարել է շարունակել: Ինչո՞ւ է այս թշուառութիւնը: Հիմնական պատճառ, ի հարկի, ընդհանուր գրուութեան և իշխանութեան յուրեւր կանգնած ծարղական հուլիան մէջ է: Կովկուս շարունակում է ներքնապէս փտել ու հոգով և զայափարով դատարկել: Չ՞ուսակցական և ինչպէս էլ շարք կազմակերպութիւնների պրակտիկան ցոյց է տալիս, որ կուսակազմակերպական աշխատանքները զտնւում են միանշամայն անվստիսար վիճակում և յետ են մտած այն խնդիրներից ու պահանջներից, որոնք դրւում են մեր առաջ... Կուսաշխատանքների

այս չափազանց կարևոր բնագաւառում տիրել է դեմադրկութիւն և անպատասխանատուութիւն: Երջանային, քաղաքային կուսկոմիտէներէ կազմակերպչական բաժինները մինչև օրս աւելի շատ որդալել են ուրիշ խնդիրներով, քան իրանց անմիջական աշխատանքներով: (ՁՍ. Հ. 2, 23 մայիս):

Այսպիսի սլայմաններում Հայկոմկուսի դանազան մասնահիւրերը քաղաքադում են կուսակցական գիծը, շարունակում են թաւալել «Բաշտարտուհի» և «ձախ-քեալադէողութիւն» ճանճում, «Վարչարարութիւն» են անում, չեն զլխաւորում մասայական շարժումը, կորուում են իրականութիւնից, «կորցնում են իրենց ճեղքանկութիւնը ժողովրդի աչքին», մի խօսքով՝ քայքայւում են: Պերճախօս օրինակ մ'իջրու կուսկազմակերպութեան դրութիւնը, որ մայիս 27ին քննութեան է առել Հայկոմկուսի Կենտրոնի Բիւրօն և կըրուի որոշումներ կանել: (ՁՍ. Հ. 2, 23 մայիս):

Վարչական որոշումներով, սակայն, դժւար է վարիւր իրկել մի կազմակերպութեան, որի մէջ կենդանի ողբի վաղուց արդէն մեռած է և տեղը մնացել է մերկ ուժի վրա հիմնած սակաւապետական բիրտկրտիան: Ի՞նչ ժողովրդականութեան կամ ճեղքանկութեան մասին կարող է խօսք լինել, երբ ժողովուրդը մատուած է բանտային սեժիմի ու յարատե սովի: Այս տեսակէտից չափազանց բնորոշ է ճացի մատակարարման գործը: Յունիս 15ի «ՔՈՐՀՐԳ». Հայաստանը հրատարակում է Երեւանի քաղաքային խորհրդի նախագահութեան որոշումը ճացի գրեյկները բաշխելու մասին: Հացի աղատ վաճառքը արգելւած է: Ամէն մարդ պէտք է ունենայ ճացի գրեյկ, որով միայն կարող է որոշւած քանակութեամբ ճաց զնել պետական խանութներում: Մահմանում է ճացի երեք կտտեգորի՝ երեք գոյնի գրեյկներով. «բանտներէի համար կարմիր. ծառայողներէի և երանց ու բանտներէի ընտանիքներէի, ինչպէս նաև աշխատաւորական այլ տարրերի համար՝ սև. մինչև 14 տարեկան երեխաների համար՝ մանուշակագոյն: Իւրաքանչիւր կատկորտին բաժանել 3 ցուցակի. առաջին ցուցակի տառերի վրա կանանք մի գիծ, 2րդի վրա՝ 2 գիծ, 3րդի վրա՝ 3 գիծ. նոյնը ընտանիքի անդամներէի և երեխաների վերաբերեալ»:

Գրեյկ ստանալու համար ըլլոր քաղաքացիները պարտաւոր են ներկայացնել պաշտօնական փաստաթղթեր, որոնց մասին տըում են մանրամասն ցուցմունքներ:

Փաստաթուղթ չունեցողները և ուշաշխատաւորական տարերը (անձամբ առևտրական կամ արհեստաւոր, կուլակ, հողերական, ճանապարհի և այլն) ճացի դրքի իրաւունք չունեն, ասել է թէ՛՝ սպըրու իրաւունք չունին: «Հացի գրեյկներէի բաշխման աշխատանքներէի համար ժողովրդացիայի ենթարկել 300 հոգի»:

Ի՞նչ դժժան բան է կեանքը կոմունիստական աշխարհում...

Ի վերջոյ, երկու խօսք էլ խորհրդային-բարեգործական յարաբերութիւններէի մասին: Ինչպէս յայտնի է, Բարեգործականի նախագահ Գ. Կիւլպէնկեանը հրատարակեց՝ վիրտուրած Հայկոմկուսի մանկամիտ քարտուղար Ա. Պանջեանի յարձակումներէից: Բողոքով դուրս եկաւ և Բարեգործականի վարչութիւնը: «Որոհճըրդային Հայաստան»ը (24 մայիս) ընդարձակ մի յղւածով նորից կրկնում է Ա. Պանջեանի մեղադրանքները Բարեգործականի և Կիւլպէնկեանի հասցէին և մի շարք ժողացածին ու յերկրածոյ վկայութիւններով ճշնում է սպացուցանել, որ Բարեգործականը, Կիւլպէնկեանը և Ռամկավար-Ալապտական կուսակցութիւնը բացայայտ հակահայաստանեան ու հակախորհրդային քաղաքականութիւն են վարում, դէմ են ներքաղթին և աշխատում են ոչ թէ ապ դաշնակցականներէ յլացած սուբրիական օճախի: Մասնաւորապէս բուն յարձակումներ է գործում ուսմկավարներէի վրա. «Հայկական բուրժուակցիայի այս կուսակցութիւնը Դաշնակցութեան և միւս բուրժուական հակադեպոտիական կուսակցութիւններէի հետ միասին հանդիսանում է խորհրդային իշխանութեան և աշխատաւորական մասաներէի կատարի թշնամին... հանդիսանում է միջազգային իմպերիալիզմի հակախորհրդային ինտերվենցիայի ընդհանուր շղթայի մէկ օղակը»:

Այս էլ ձեզ ուսմկավար-բուրժուական բարեկամութիւն...

Մ Ե Ր Զ Ո Ն Ե Ր Ը

ՀՐԱԶ ԱԻՏԻՏՈՒՆ

Ապրիլ 25ին, Պարսկաստանում, քաճատայից վայսհանեց մեր վաստակաւոր խմբապետներէից՝ Հրազ Աւետիսեանը:

Համագոցիայը բողիւ է ինքնակենսագրական, արդժրայտաբար, չի վերջացրել և նկարագրում է միայն մակնութիւնն ու դպրոցական կեանքը: Մտորտարիւ եմ էր ձեռնով գրւած այդ գրատիւրը: Մնացածը գրի է առնւած ընկ. Հրաչի բանաւոր պատմածից:

Ես ծնել եմ 1878թ. նոյեմբեր 24ին Ալեքսանդրա-

պոլում: Երեք տիւս գրել կարդալ սովորել եմ մեր գպրոցի օր. Զարուհու մօտ, յետոյ ընդունեցի Փրկչի գպրոցը և երբորք բաժանումներից փոխադրեցի չորրորդը: Այդ ժամանակ մենք ճնտանիքով տեղափոխեցինք Կաղզան գիւղաքաղաքը, որտեղ եղբայրներս լաւ առևտրի գործ ունէին: Մեծ եղբայրս, Սմբատը մի մորեռանդ քրիտոնեայ էր, միշտ ապօթելով Հայի, թուրքի ու քրդի բերանից շուրքս՝ անունն էր ստացել: Իսկ նրանից փոքրը, Համապասլը Ընկերութեան տղայ էր (յեղափոխական), որ կայ էր ունեցել Յունիօի (վանեցի Յարութիւն աղան, որ իր խմբով կուում էր սահմանի վրա Մամիլոնեաների բերդում) հետ և դնացած ժամանակ հնչց առաջին օրը բեցի, որ Հայրս նրան գրուչացնում էր, սը աշխատել չընէր: Գիւեր-

ները փամփոշու, Հաց էին տանում Կուղունների խորհրին, որը նոյնպէս տեղաւորուել էր մատուռում: Ապա- զայում երբ խումբը բռնեց, եղբորս էլ շատ շարժա- րեցին: Հայրս փողոց ուժով աշտան: Մեր տունը միշտ գնում էր լայն էին յեղափոխարաններ: Հայրս սիրում էր բոլորին: նրանք յարգում էին Հօրս, զնախն միշտ ձեռքը համարում էին: Երբ Կուղուններ բռնեց, Հայրս միշտ ճաշ էր ուղարկում, փոխնորդ, դուրա- ներ տղաներին. և ես, որպէս փոքր, բանտ զնալը ինձ էր յանձնում, որը ուրախութեամբ էր կատա- րում: Մանաւանդ որ տղաները շատ էին սիրում ինձ, որ իրենց սովորակները անխնայ ճանցում էի թ՝ Կաճկաճեանին և աւագ ուսուցիչը Բագարտ Մատթէս- անին (Մատթէոս եպիսկոպոս): Հետզհետէ իմ մա- նուկ սրտին մէջ բուն էր գնում յեղափոխական ոգին: Տօրեցս ինչորեքի, որը չնքնեց, իր շախմատի ճրա- ցանք, երկու փրտով և խէնջալը տեց այն պարտա- նով, որ արձակուրդներին միայն գնում որսի: 1891թ. Կաղզկանի դպրոցը աւարտեցի, Հայրս ուղարկեց Կարս, որտեղ աւարտեցի ծխական դպրոցը, վերադար- ձայ Գաղզան, երեք ամիս պատրաստեցի և զնացի էլմիսածին, որտեղ Արամայիս (Յունօհի, յետոյ Կու- կունեանի ընկեր Արամայիսը, այսչեբրտցի), Ֆէլդէր Փիտրոսի և Աւետիս Ներսիսեանի միջնորդութեամբ ընդունեցի Նիրմեան Հայրերի ողբերգի մէջ Վեհա- րանին կից: Կաղզանից դուրս գալիս Համապատպ եղ- բայրս ինձ ճանապարհ գցելիս դէպի էլմիսածին, Հօրս տաճ՝ փշտով փոխարէն ներկեց նոր տեսակի Սմբովէսոս № 7 ատրճանակ, որ գրգպանս պահեմ, Ծա- նապարհորդ փառ էս, ինքնապատգանութեան հա- մար գործածեմ: Մի երկար ճառ տալով, որով ասեի որքետրեց՝ շուտ աւարտեմ, որ գնամ Երկիր, այնտեղ կրթած մարդու կարիքը շատ է: Ի միջի այլոց, պէտք է խոստովանեմ, որ թէպէտ շատ ընդունակ աշակերտ էի, բայց շատ չար էի: զպրոցում աշակերտներին բա- ժանում էի երկու բանակի՝ թուրք և հայ: միշտ հայն- րի հրամանատարն էի լինում և անհնայ իրար զբիթ ու պոշ ջարդում և ուսուցիչներն կողմից պատժում: Միտում էի ընթերցանութիւն, պատմական վէպեր էի կարդում (Մերեքո, Բաֆֆի), Հայրս էլ սիրում էր, մանաւանդ, Մերեքոյ «Քրիստոսը»: Թէպէտ ինքը գրա- ղէտ էր, բայց սիրում էր, որ ես արձր կարդամ ու ինքը լսէ: Այսպէս, իմ ընտանեկան կրթութիւնս եղել է ազգայնական ոգին և սեր դէպի գէնը, մի, կուիւ, այնինչ ուղարկում էին ինձ հոգեւոր դպրոցը:

Ճեմարանում այդ տարին իմ բախտը այնքան շատ էին հաւաքուել ընդունելու, որ բոլոր ընտրութիւն տաղաներ յոյս չունէինք, որ ընդունէինք, մանաւանդ որ հայոց լեզու ուսուցիչը Մէթ Յարութիւնեանը իրան սկզբունք էր դարձրել միայն սուրբալեզուներին ընդուն- ելու տալ, մնացածներին իրա զոսից կտրել: Նոյն փորձ- ձանքը իմ գլխին բերեց: Բոլոր աւարականներից լաւ զըն- նութիւն տաճ, Հայերէնից, որ չէի վարիտում, կրտ- րեցի: դա մի սոսկից հարամ էր ինձ համար: Թէպէտ Վեհափառը ինձ կանչեց, միտիթարեց, որ ոչինչ, կու- զարկեմ այս տարի Հառիկ, կեղո տարի տանց ընտու- թեան կընդունես Դ. դասարան: Այդ էլ չկարողացաւ ինձ յուսադրել, և վճռեցի մի յուսահատ ջախ անել: Մի նազով կրեցի տեսչին, Կ. Կոտանեսանին, որ կամ ինձ ընդունէ կամ ինքն էլ մեռնի: Ես էլ պէտք է իրս սենեակից կամ ընդունեամ դուրս դամ կամ թէ չէ երկուսս էլ մեռնեմք: Նամակը տուցի իրս սենեակի մէջ իրեն անձամբ, ես ստորձանակը ձեռքս կանցնած դրան մօտ սենեակի ներսից: Ոնգճը կարգաց ու գոյնը- թոցրեց: Գոնէ չի նայում՝ տեսի՞ ձեռքիս ստորձանա- կը, որ դրանով միայն հաւի աչքին պէտք էր խփել: Մի քիչ կմկմաց ու ծննդական և ծաղկի վկայականներ օր պահանջեց, որ անմիջապէս տուի: Ինձ ընդունեց, բայց անմիջապէս Վեհափառն զնաց յայտնեց, շախիբ Վահանի ձեռքով խուզարկեցին, Վեհափառը մի լաւ

յանդիմանեց, յետոյ ականջներս էլ ձգեց, բայց արդէն ընդունել էի. ուրախութեանս չափ չկար: Այդ էլ երկար չուեց: Ճեմարանում այդ ժամանակ 2 հոսանք կար. մշակական, որին ես էլ պատկանում, և նոր-գարական: Այդ հոսանքների բրբր դէմ ունեցած աստութիւնը կուի փոխեց: Տեսուր, օղնակներ և ուսուցիչներից շատեք նոր-գարական էին, մի լաւ ծեծեցինք: Մեզ տարան Վարդապետի բանար. 65 աշակերտ երեք օր պահելուց յետոյ ուղարկեցին Երե- ւան, այնտեղից էլ Տիֆլիս՝ Ներսիսեան դպրոցը: Այստեղ վերջանում է Հրաչի ինքնակենսագրութիւն- ւը:

1894թ. զպրոցից արտաքուսում է: Այդ ժամանակ արդէն Հնչակեան կուսակցութեան անդամ էր: Սա- կար, 1895ին թողնում է այդ կուսակցութիւնը ու մտնում Դաճակցութեան շարքերը: Անձ ցանկութիւն է ունենում մարտական խումբերի հետ անցնել Երկիր: Կուսակցութիւնը թողլ չի տալիս, ի նկատ ունենալով նրա երիտասարդ տարիքը: Այն ժամանակ գնում է Յունաստան և մասնակցում 1897ի Կրետէի ապստամ- րութեան:

Վերադարձին, կուսակցութեան հրահանգով, մտել է ուսական բանակը ծառայելու ձիւսուր գործանոսի մէջ: 1903թ. ենթասպայի պաշտօն է ստանում և պատ- րաստում է ձիւսուր խմբով անցնել Երկիր, բայց չի յաղորդում:

Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ անց- նում է Դափան, այնտեղից էլ Գեներալի շրջան և խմբ- րապետի պաշտօն է վարում: Այլ-Դարա թուրք գիւղից կենդանի փախցնում է Թուրքացած Յարութիւնին, որ շիվանձորցի էր, և գնդակահարում է իրբեւ դաւա- ճանի:

Այնտեղից վերադառնում է Ալեքսանդրապոլ, Վը- ուսմեանի ձեռքի տակ կատարում է մի շարք պատաս- անաստու յանձնարարութիւններ: Ձիւսաթափ է անում փարաբէի Կարապետին, ահաբեկիչ մարմնի կողմից նշանակում է լիազօր և Կարսի շրջանը մաքրում է մի շարք շանտաժտու աւազակներից ու բռնտու խմբա- պետներէից: Հնչակեան խմբերին գինաթափ անելու պատճառով մահախորհրդ է ենթարկում, բայց աղաւ- տում է, սպանելով նրանցից մէկին և վիրաւորելով եր- կուսին: Նորից դրադում է աւազակային խմբերի դոր- ծով: Կատարում է Արեւծ Աւազի ահաբեկումը:

Հրահանգ է ստանում Քեռու հետ անցնել Թուրքից, մասնակցելու պարսկական շարժումներին: Անձամբ ղեկավարում է Մոսթումբաի կուրը Սամի-խանի դէմ. վիրաւորում է կրծքից, բայց դիմադրում է, մինչև թշնամուն դուրս են զրոււմ դիրքերից, գոհ տալով Ար- տեմին և Նիփոյին: Պարսկաստանից անցնում է Կարս և նորից աշխատում Կ. Կոմիտէի տրամադրութեան տակ: Մի քանի անգամ ենթարկում է մահափորձի, բայց ապաւուսում է: Լիժինի դատի ժամանակ ձեռքազրկում է:

1914թ. պատերազմի ժամանակ կանչում է ծառա- յութեան ուսական բանակին մէջ և նշանակում է հե- տախուզական բաժնում, անցնում է Տաճկաստան լըր- տեւելու տաճկական ուժերը և արուսթիւնները: Բըռ- նում է և դատաւարտում մահաւաճ-զորակահարու- թեան: Գիւլեթը պահակին խեղդում է և փախչում, ա- գաւտում: Դրանից յետոյ մտնում է կամաւորական խմբի մէջ՝ նշանակելով Համապատպ օղնակներ և ձիւսուր հարիւրակի պետ. մասնակցում է բոլոր կը- ուրներին և ստանում է շքանշաններ և սպայութեան աստիճան:

1917թ. յեղափոխութիւնից յետոյ նշանակում է Կարսի միլիցիայպետ և վարում է այլ գործեր. ապա նշանակում է նոր կարգում ձիւսուր գործանոսի պետ, անցնում է Կաղզան և մասնակցում Կարսի կուրներից: Կարսի անկումից յետոյ անցնում է Թիֆլիս բժշկելու,

այնտեղից էլ Հիւսիսային Կովկաս: Վերադառնալով Կարս, նշանակուած է միլիցայի տեսչի օգնական: Մասնակցում է Ձրլրի, Ջարիլատի, Աղբաբայի և Կարսի նահանգում տեղի ունեցող ապստամբութիւնները ճնշող կրիւններին: Ապա նշանակուած է միլիցայի տեսուչ: Չապում է մատուցել իր սանձարձակութիւնները: Իր լուելիկան մայիսեան շարժման ժամանակ միլիցայի զուլն անցած, նահանգը մաքրում է բոլշեւիկներից: Հայ տանկական պատերազմի ժամանակ կայծուած է կրածաւորական խմբեր և ճակատ է ուղարկուած: Նահանջիւրց յետոյ Ջաջուռի կուլին է մասնակցում և նշանակուած է ձիաւորներին պետ:

Իր լուելիկանի գծուրց յետոյ Թայլարուլի վրայով անցնում է Արարան, ձիաւորներին ցրում է, ինքն էլ մտնում է զորքի մէջ կեղծ անունով ծառայելու: Շրջապատ է Փետրուարեան շարժման լուրերը, փորձում է կապ հաստատել Երեւանի հետ, չի յաջողուած:



Արարանի շրջանում ժողովրդի և զլխաւորապէս զօրմասերի մէջ տրամադրութիւն է ստեղծուած: Փետրուարի 14ին ձերբակալուած է, բայց դեռ Աւտարակ չհասած, ապաստանութիւնը պայթում է: Նա ազատուած է ու վերադառնում Ալիբուլակ և զօրմասերին դիմաթափ է անում Չարբուլ գիւղից հաւաքուած զոյ տղաների միջոցով, ապա կայծուած է կրածաւորական խումբ և չեղող զօտին մաքրում է բոլշեւիկներից ու զբաւում է Սպիտակի բարձունքները: Կուլնների սկզբում ամբողջ ճակատի հրամանատար է լինում և մի քանի անգամ փորձում է զբաւել Համամուլն ու Ղարաքիլիսան, բայց չի յաջողուած: Մինչև վերջը մնում է ճակատում և ապրիլի 2ին անցնում է Ջանգեղուր, այնտեղից էլ Պարսկաստան:

Պարսկաստանում անց է կացնում տարազիրի շարքա կեանք: Աշխատում է պետական խնդիրներ վրա, իսկ վերջին տարիները ձեռք բերելով բեռնատար ինչնաչարժ, փոխադրութիւններ էր կատարում պարսկական քաղաքների միջև:

Հրաչը սիրւած ու յարգուած ընկեր էր: Առանձնապէս իր հետ կապուած էր երիտասարդութիւնը, որի հանդէպ մեծ գուրգուրանք ունէր: Բնաւորութեամբ համեստ, վերին աստիճանի կարգապահ ու ապագայի վառ յոյսերով տաղտուած, ընկ. Հրաչը հին յեղափոխականի տիպար էր: Արհամարհում էր մահը և մեծ հաւատ ունէր, որ տեսնելու է հայրենիքի ազատագրումը:

Իր յոյսերը չիրականացան և նա աչքերը փակեց շրջապատուած դաշափարակից ընկերներով, բայց հետո հայրենիքից, կնոջից և միակ գաւառից:

Վ. Տ.—Խ.

ՄԱՆՏԵՍԻ ԳՐԻԳՈՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Սոյն տարւայ յունւար 20ին, Թաւրիղի գերեզմանատանը, հողին յանձնեց մեր հին և վաստակաւոր ընկերներից՝ Մահտեսի Գրիգոր Յովհաննիսեանի մարմինը:

Մեւ է Սայրասա դաւառի Հին-Ֆաղաջում եօթնամանական թւականներին: Մանուկ հասակում ակնաւտեսե է լինում Դերիկ-Ճարայի, Սոմա-Բրաղդոսի և Աղբակի շրջաններից դաղթած հայ դիւղաշրուիթեան թշուառութեանն ու սարսափին, որոնք, փակելով Շէյխ Ջալալէդինի սիրագործութիւններից ու թողնելով հայրենական տունն ու հողը, ապաստանել էին Սայրասա: Գրիգորի մանկական հողին յորպաչէս սպաւորում է իր ցեղակիցների այլ ծանր կացութիւնից ու այլ օրերից նրա մէջ սաղմաւարուած են յեղափոխական կայծեր: Գրիգորի մէջ յեղափոխական տրամադրութիւններ առաջանալուն նպաստում են նաեւ այն ժամանակ Պարսկաստանում տիրող աւատական յոռի կարգերը, երբ սանձարձակ շահաւատու էին կողոպտել դատաւորները, դատան Փառաշները և աւազակ ջիւղերը: Գրիգորի կեանքում կարեւոր դեր խաղաց նաև Տէր-Թոգիկեան դպրոցը, որ սովորել է նա: Անիծեալ «Փայախկան» և այլ ձևի պատիժները, որոնք գործադրուած էին դպրոցում, դարձաքցին Գրիգորի մէջ ազատութեան տենչը և պայքարի ոգին:

Նման պայմաններում մեծացած Գրիգորն արդէն նախապատրաստուած էր իւրացնելու այն դաղափարները, որոնք տարածուած էին Վասպուրականից դէպի Սայրասա և աւելի հեռուները: Ռեֆուսուական թւականների վերջերին, թէ Վանից և թէ Կովկասից, Սարմասա են դալիս առաջին արմենականները, ուր և հիմնուած է արմենական կազմակերպութիւն: Գրիգորն առաջիններից մէկն է լինում, որ յարում է այդ կուսակցութեանը:

Ինտունական թւականներին առանձին մէկ կարեւորութիւն է ստանում Դերիկի վանքը, դառնալով կենտրոնատեղի արմենական ու դաշնակցական գործիչների համար: Վանքում տեղի են ունենում գիւղերական մարզանքներ և այլ տեղից էին անցնում Երկիր: Սալմաստից Դերիկ, Դերիկից Սայրասա, աշխուժանում է փութկոտ երթիւնէութիւնը: Հին-Ֆաղաջը տարածուած է այլ մենաւոր միւնաստանի ճանապարհին և արմենականները իրենց հանգիստն էին անում Մ. Գրիգորի տանը, իսկ դաշնակցականները զգաստք Բաբայ կամ քարտաշ Գասպարի ու վայելում նրանց սրտաբաց հիւրասիրութիւնը:

Տեղացի գործիչների մասնակցութիւնը յեղափոխական գործին չէր կարող վրէպել տաճիկ շահաւորարի գործակալների խուզարկու աչքերից, որոնցից մեկը Սառայի շրճ՝ Յաղոն, իր գրելի հարածանքներից է սկսում Մ. Գրիգորի գէժ և անտեղի ու անհիմն մեղադրանքներ բարդելով, բանաբարիւ է տալիս ու տուէքանքի ենթարկում: Դիմադրում էր Մահտեսին, պայքարում էր այլ դաւաճանի դաւաճիք քայլերի գէժ, առանց ընկճելու: Սակայն, նրա մայրը, մահտեսի Նոյնիգարը, իր մի հատիկ զաւակին այլ հայածանքներից ազատելու համար, ստիպում է նրան հեռանալ Սայրասաից և նա, 1895 թ.ի վերջերին, անցնում է Կովկաս: Երկար չի տևում նրա պանդխտութիւնը: 96ի կիսանը վերադառնում է Սայրասա, շարունակելով իր գործունէութիւնը արմենականների շարքերում:

Անցնում են տարիներ, հոռու աշխատանքը ծաւալում է և Մ. Գրիգորը իր աչքի ընկնող դերումն է կատարում է իր կուսակցութեան բոլոր հրահանգները, հաւաքում է իր շուրջը դիւղի երիտասարդներին և կայում Արմենականների հետ: Աշխատանքի ընթացքին յայտնաբերում է իր խելացի ըմբռնումները և շրջա-

պատին համադաստասխան գործելակերպը, որից գոհ էին Արմենականները:

Արմենական կուսակցութիւնը, չտոկայով 96ի դատան հարածին, սկսեց տեղի տալ ու Հեղձեաէ քաղաքի ասպարէզից: Մահտեսի Գրիգորի անհանգիստ հոգին յուզումներ մէջ էր. իր մայր կուսակցութիւնը վերջին օրերն էր ապրում, իսկ իր վրդոված խիղճը դեռ չէր բաւարարուել: Ի՞նչ անել: Արանց տատանելուն ա անդամադուլէ շ. Ե. Դաշնակցութեանը, որը այդ ժամանակ իր բարձր հմայքով տէր էր Սալմաստին:

Երկար տարիներ աշխատեց նա իր երկու ընկերներին հետ՝ Գարուբեան Խաչոյանի (դասար Բարայի որդին) և Կարապետ Մահտեսի Մխիթարեանի հետ մի երրորդութիւն էին դրանք: Տարիներ շարունակ եղել են շ. Ե. Դաշնակցութեան «Մինարէ»-ի ենթակցութիւնը, որը աղ ժամանակ իր բարձր հմայքով տէր էր Սալմաստին: Երկար տարիներ աշխատեց նա իր երկու ընկերներին հետ՝ Գարուբեան Խաչոյանի (դասար Բարայի որդին) և Կարապետ Մահտեսի Մխիթարեանի հետ մի երրորդութիւն էին դրանք: Տարիներ շարունակ եղել են շ. Ե. Դաշնակցութեան «Մինարէ»-ի ենթակցութիւնը, որը աղ ժամանակ իր բարձր հմայքով տէր էր Սալմաստին: Երկար տարիներ աշխատեց նա իր երկու ընկերներին հետ՝ Գարուբեան Խաչոյանի (դասար Բարայի որդին) և Կարապետ Մահտեսի Մխիթարեանի հետ մի երրորդութիւն էին դրանք: Տարիներ շարունակ եղել են շ. Ե. Դաշնակցութեան «Մինարէ»-ի ենթակցութիւնը, որը աղ ժամանակ իր բարձր հմայքով տէր էր Սալմաստին:


խառնութեամբ, դաւում էին մանուկ յեղափոխութեան դէմ: Ասպարէզի վրա էին «Մինարէ» ենթակամութի երրորդութիւնը, որ զովելի գործելակերպով դիտում էր թնամու շարժումները, մտնում, խորանում ու ծաղօթանում նրանց անկիւններին:

Վրա Հասար Համալսարանյան պատերազմը: 1914 թ.ի դեկտեմբերեան զաղթին Սալմաստի հայկական շին դիւղերը ամայացան: Ժողովուրդը զաղթեց, տալով թանկագին գոհեր, օրոց թոււմ նաև մեր սիրելի Յասարութիւնին՝ իր հօր զգասար՝ Բարայի ու Զարուաշ Գասպարի հետ:

1918 թ.ուականի դէպքերին, տանկները ազատում ուսական բուռնացելը, արշաւում են դէպի Սալմաստ. ոտքի վրա էին և քրդերը, մանաւանդ, Աւգոստինը՝ իրենց ցեղային Սմիլոյի հետ: Դժբախտաբար, նրանց հետ էին և մէր Հարեան թուրքերը: Հին-Քաղաքի թուրքերի մէջ ինչ որ դաւադրական շարժումներ են նկատուում: Գրիգորը նորից գործի վրա է: Նա ուշի ուշով հետևում է բոլոր շարժումներին, տրամադրութիւններին ու տեղեկագրում: Այդ ժամանակ, աստիճանների դրոշմով, դաւադրի Սմիլոյ իր մարդկանցով դաւալու է Հին-Քաղաք, ու մեծ խոստումներով բարեկամաբար էր մտ է հրաւիրում թէ՛ Մար-Շիմոնին և թէ՛ դաշնակցական ներկայացուցչին՝ խորհրդակցելու «մի կարևոր խնդրի առթիւ»: Դաշնակցութեան ներկայացուցչի մեքում է, պատմաբաններով, որ «մն զէ, որ պիտի դնամ Սմիլոյի մօտ, այլ նա է, որ պիտի զայ, եթէ խորհրդակցելու խնդրի ունի»: Սակայն միամիտ լինական Մար-Շիմոնը, իր հարիւր լխում ընտիր ձևաւորներով ու իր եղբայր Դաւիթի հետ, այցելում է այդ աւազակին: Մահտեսի Գրիգորն է, որ նկատում է կազմած դաւադրութիւնը և յայտնում Մար-Շիմոնի կորուստը և ձխաւորներին, թէ՛ քրդերը Հին-Քաղաքի թուրքերի հետ միացան, դիրքեր են բռնում կտորներին, որ դաւադրութիւն է սարքում: Յորդորում է, որ իրանք էլ պատրաստ լինեն, նախազգուշութիւններ ձեռք առնեն և խմբով շահագնեն փոխզուտ, բայց ի զուր, հպարտ լինականները կարեւորութիւն չեն տալիս, ասելով «դիւն չեն կարող անել»: Եւ մեր Մահտեսին յուսահատ հետևում է մրմնայլով՝ «բոլոր սարքներն են, ի՞նչ են հասկանում»:

Հազիւ հասնում է տուն, երբ լսում են հրացանների անխել շամադակեր: Զիաւորները անմասօք քաղաքին, շփոթւած վազում են դէս ու դէն դիրքեր բռնելու, սակայն, ուշ էր. համազարիկերից. ընկնում են Մար-Շիմոնը և ձխաւորներից շատերը:

Մահտեսի Գրիգորի վերջին գործն էր այդ... ԾԱԴԻ



«Դ Ր Օ Շ Ա Կ» - ԻՆ ԴՐԱՄ ՌԻՂԱՐԿԵԼ ՇԵՏԵՒԵԱԼ ՀԱՍՑԵՈՎ. L. TADEVOSIAN 71, AVE. KLÉBER, PARIS (XVI) FRANCE

Ր Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ազգերի Դաշնակցութիւնը և Թիւրքիան (մժբա- դրական) . . . . .	145	Այրուրէցի բարեմորգումը Թիւրքիայում . . . . .	151
Հ. Հ. Պատկերակութեան դիմումը Ազգերու Դաշ- նակցութեան . . . . .	147	Ֆիլիպիոյ շուրջ (Հրահալ-Սամուէլ) . . . . .	159
Լեզուի խնդիրը Ստ. Նազարեանի երկերում (Գ. Գիւղարեան) . . . . .	148	Կարմիր գծից ներս . . . . .	162
		Մեր գոհերը . . . . .	165

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի հայերէն՝  
Rédaction « D R O S C H A K »  
71, ave. Kléber. PARIS (16°)